

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Арт
ийский

НЕДЕЛЯ

19.11.86

лс 396

891.71
L - 50

2) 396
401

44/ 396
401

ՅՈՒՐԻՑ ԼԻԲԵԴԻՆՍԿԻՑ

891.71

L - 50



ՄԻ ՇԱԲԱԹ




ՊԱՏՄՎԱԾՔ

ԹԱՐԳՄ. Ա. Տ.-Մ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԱԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1928



25 SEP 2008
25 NOV 2010

ՅՈՒԹԻՑ ԼԻԲԵՐԻԱՆՑԻՑ

396
ՀՕԴ

ՄԻ ՇԱԲԱՓ

ՊԱՏՄՎԱԾՔ

ԹԱՐԳԱՐ. Ա. Տ.-Ա.



02.05.2013

ՏԵՂ ԳՅՀ ՀՅ
ՏԵՂ ՎԱՐ ՀՅ

11599

«Ե՞նչ խոսքերով պատմեմ յես մեր մասին
Մեր կյանքի և մեր պայքարի մասին»:

ԳԼՈՒԽ I

Սաղափե բացվածքներից, ամպերի խոնավ անշարժ կուլտերի արանքից կապտին և տալիս ուրախ յերկինքը: Յերեք որ գարունն արևելու եր, առուները պոկում ելին սառուցները և տանում քաղաքից դուրս, գեղի գետը, փողոցները գարձել ելին աղմկալից և ցեխոտ: Իսկ չորրորդ որը գարունը նիրհեց, գլուխը գրեց ծնկների վրա և նստած քնեց մի տեղ, անտառի հեռավոր բացատում, և մի անգամ միայն կեսորին մոտ արևը ժամկրին և նորից մտավ անշարժ ամպերի յետելը: Սակայն գարնանացին ուրախությունը մնաց, միայն թե նա կանգնած եր ամեն բանից յետ, ինչպես արելը մոխրագույն, կապուտ և բացմանուշակագույն ամպերի յետելն, վորոնք ժամերով կախված են լինում յերկրի վրա, ինչպես վորշ թաց քարեր:

Յեթե քաղաքի ծալրամասի ցանկապատերի և տների մոտով, կալչուն ցեխի մեջ սալթաքելով, բարձրանաս արևից ձյունաղուրկ ըլրակի վրա, վորտեղ ընկած և մենավոր հողմանար քարը, և ապա յետ նայես, կտեսնես. Ներքեր, ըլրակի տակ, լախատարած մինչև գետը, փալտաշեն գորշ տներով թաղերի բաժանված՝ պառկած և փոքրիկ քաղաքը: Մարդ քիչ է յերեսում, կարծես՝ բոլորը քնած են, զներն են հաջում, աքաղաղներն են գարնան զիլ կանչը կանչում: Լայն փողոցներում, աչքի զարնող նրբանցքներում փայլում են վերջին ձյան մնացորդները: Մեծ յերկհարկանի տներ քիչ են, իսկ յեկեղեցիներ շատ: Գործարանի միակ ծինելուցը դեպի յերկինք և հանում սկ ծիփ անձայր ժապավենը, և հեռու, քաղաքից դուրս, մոխրը թափվում և ձյունակուլտերի վրա:

Հրդեհաշիջ խմբի ցածլիկ, գորշ փոշեգույն աշտարակն ուղարկում և զեղի մուալլ լուռթյունը մեկը մլուսի յետեկց իր ջարդված, համաչափ հարվածները, և յերկու հանգարտ բողելից հետո իրեն պատասխան զանգակատնից թոշում են քաղցրածայն հնչյուններ, վորոնք յերկար պտավում են ողի մեջ և ընկնում են քաղաքից դուրս գյուղերի խոնավ մասախուղի մեջ:

Հր. № 892 Գրառեպիար 1482 (բ) Տիրամ 2000
Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում.
Պատվեր № 282



1961-2005

Այս աննկատելի հասարակ ժամին, յերբ անփայլ-սպիտակը թծի նման արեւ կեսորից լավական հեռացել եր, լայն հրապարակի վրա, գեպի կրկեսի շենքը հավաքվում են մարդիկ,—գալիս են ցածլիկ ցանկապատերի տակով, փուխր ձյունով ծածկված արանետներով, ամայի տեղերով, վորտեղ ձյան կուտի տակից յերսում և կոծոծի անցյալ տարվա չորացած թուփը, անցնում են գարնան ցեխով լցված փողոցների մի կողմից մյուս կողմը, գնում են հողի մեջ մտած մայթերով։ Շտապում են, հանդիպում են իրար, յերբեմն ժպտալով մեկը մյուսին բարեւում ե, աղամարդիկ և կանաք, ավելի յերիտասարդներ, քան ծերեր, մոխրագույն շինելներով, մաշված սև ու կապուտ վերարկուներով։ Տարբեր են ժպիտները, աչքերը, շարժումները, քայլվածքը—այնուամենալիք ամենքի մեջ կա մի նմանություն, կարծես բոլորին ել լուսավորում և միւնուցն հեռու առավոտյան արեւ։

Կրկեսում ամբողջ որը լուսություն և տիրում, և մեծ գորշ մկներն անձայն սահում են մութը, գեղին մրցարանի վրայով։ Բայց ահա ամբողջ լայնությամբ բացվում են լայն դոները, վորոնց վրայից հին ափիների և ազգերի ցնցոտիները գես ու գեն ընկած բառերով և զզզզված դարձվածքներով խոսում են ինչ-վոր անցած գնացածի մասին։ Կրկեսը լուսավորվեց, և մարդիկ, հոսելով կրկեսի տեղերի միջով, վորոնք մրցարանից սկսած բլրածն հետզհետե բարձրանում են, լցնում են ահագին շենքը քայլերի դաշտուկով և ձայներով։

Մրցարանի մեջտեղում դրված կլոր սեղանի մոտ յեկան յերկու հոգի, կրկեսի բոլոր կողմերից զատ-զատ ձայներ գեպի նրանց են քցում ազգանուններ, և ահա հարյուրավոր բարձրացրած ձեռների կամքով ընկ։ Կիմինը, զինորական շինելով մի մարդ, կրկեսի կիսախավարի մեջ աչքի ընկնող դիմագծերով, բայց գեղցիկ, հանդարտ, ուշադիր աչքերով, մրցարանի կենտրոնից աղդարարում ե։

— Ըսկերներ, Ո. Կ. Կ. Քաղաքի շրջանալին ժողովը հայտարարում եմ բացված, որակարգի հարցն և ժողոտնտխորհի նառագահի գեկուցումը շրջանի տնտեսական դրության մասին։ Առարկություն չկա։ Խոսքն ընկ։ Զիմանին ե։

Կրկեսում տիրում և ավելի ևս խոր լուսություն, և մարդկանց բազմությունը փոփում և ահագին գորշ փաղաքուշ գաղանի նման նախագահի վոտների շուրջը և իր բազմաչյա հայացքը հառում ե են մյուսի վրա, վոր նույնպես կանգնած և մրցարանի մեջտեղում և ջղալին ձեռքով ճառություն և թղթի թերթերը,

Զիմանը, անլսելի և խուլ կերպով բարձրացնելով ձախը թվերի, ցորենի փթերի և վառելափայտի սաժենների, շոգեկառքերի թվերի և խոշոր գրամական գումարների, որերի և շարաթների քանակի վրա, անում եր իր զեկուցումը։ Բայց ամենքն ել լուսում եին ազահաբար և ամենքն ել հասկանում ելին—խոսքը տնտեսության, պարենի, վառելանլութի, սննունդի մասին ե, և հարցեր և վոր սպիտակ թերթիկների յերամներով թափկում են նախագահության սեղանի վրա։

Զիմանը պատմում եր այն մասին, թե քաղաքը հեռու յերկաթուղու գլխավոր գծերից, և կապված և մասցած Ռուսաստանի հիտ յերկաթուղու 500 վերստանոց մի ճյուղով։ Երջանը գրեթե զուրկ և անտառներից, սեփական քարածուխ քիչ և ստացվում, և շուտով ճանապարհը կղաղարի գործելուց։ Իսկ տարին անրերի յեր պարենի բաշխումը զուրս և կորզել վերջին մասցորդը, և յեթե ցանքի համար սերմ չհասցնվի, ապա սովի կմատնվել և քաղաքը, և շրջանը։

Յուրաքանչյուր վոր հասկանում եր, թե ինչ ելին նշանակում այդ խոսքերը, սովը կմղի գլուղացիներին գեպի անմիտ, վայրակ ապստամբություն, գործարանը կղաղարի բանելուց և բանվորները կփախչին, իսկ բանդիտների խմբակները, վոր թափառում են հեռու անապատներում, կլրբանան, կակսեն մոտենալ յերկաթգծին և փչացնել ճանապարհները։ Սերմացու բերելու համար հարկավոր և վառելանլութ, վոր պատրաստված և նիժնիշ-Յելանսկի գավառում, սարերում, հստեղից յերկաթուղու ճանապարհով 200 վերստ հեռու, բայց մի շաբթում հնարավոր չե տեղ հասցնել։ Սերմանման պայքարի անհաջողությունը գրեթե անխուսափելի յե։ Յեկ զեկուցողը հրավիրում եր տոկունության, խուսափելի յե։ Յեկ զեկուցողը հրավիրում էր առաջնություն, բայց նրա խոսքերը չոր ելին, չելին լուծվում ժողովի մեջ, այլ անապատան ու աննպատակ պատվում ելին ինչպես քամու տակ ընկած թղթի կտորներ։

Զիմանը վերջացրեց, և զեկուցման մասին խոսք ուզեց հոնքերից զուրկ, կարմիր լայն յերեսով մի կարմիր զինվոր։ Նա ասաց, վոր յերկու տարի ֆրոնտում կովել և խորհրդային իշխանության վոր յերկու տարի ֆրոնտում բանն ավելի ու ավելի վատանում ե։ Համար, բայց զուրկերում բանն ավելի վատանում ե։ Պարենալիտումով նեղացնում են զզուղերին, բոլոր եղ կոմտընտեսություններում, պարկոմներում և ժողոտնտխորհներում շատ խարերացություն կա։ Աղքատ մարդու համար ապրելը շատ զդվարացել։ Ժողովրդից հացն խպառ խել ենք, իսկ հիմա լաց հնքը լինում։ Ե՞ս, —ձեռքով արեց նա և յետ զարձակ իր տեղը։

— Ի՞նչ ե, ելի՞ պիտի սոված մնանք, — սկսեց յերկը սորդը
մըցարանի մեջտեղից: Սա մի նիհարի մեկն եր, վզին վերքի մի
սպի, և յերկար պատմում եր, վոր մի փութ պատկով դժվար է
ընտանիք պահել... — Գողանում են... — կծու հեղնանքով վերջացրեց
նա իր ճառը:

Դուրս ելին գալիս և ուրիշ խոսք ասողներ և այլպիսիներն
ամելի շատ ելին, քան առաջնները, բանվորներ և կարմիր գին-
վորներ հուզված անցնում ելին մըցարանի մեջտեղը և, ամբոխի
անսովոր ուշադրությամբ կաշկանդված՝ նրանք անշնորհք ելին
խոսում, կշամբում ելին Զիմանին, բայց և համաձայնում ելին,
վոր պետք ե դիմանալ: Զեռքերը ծալած նստելը դիմանալ չի նշա-
նակում, և նրանք յելք ելին փնտում խարխափելով, կուլուի
նման: Բայց ժողովը չելք հասկանում այս անկապ ճառերը և մի
ճառախոսն առարկում եր մյուսին, թեև ասածները միենուուն
բանն եր:

Իսկ Զիմանը դադարեց առարկությունները գրի անցկացնե-
լուց իր յեղրափակման խոսքի համար. փոքր, խղճուկ, նա թա-
փահարում եր հուզմունքից զլուխը, լսում եր հանդիմանող, վո-
րոնող ճառերը և նրան գրգռում ելին խոսողներից հատկապես
նրանք, ովքեր վարեն տեղ յելք ելին տեսնում: Նա այդ յելքը չեր
տեսնում և բարկացած շնչում եր. «գեմագոգիա, միտինգավարու-
թյուն»: Իսկ ճառախոսները զղաձգաբար պատեպատ ելին ընկնում
և չելին կարողանում ասել իրենց պարզ ծրագիրը, խոսում ելին
մանրամասնությունների մասին, թե վորեն տեղից «սղոցներ, կա-
ցիններ, կարելի յի ձեռք բերել»... Ժողովն ել հուզվում եր, լսում
ելին տեղերից ձայներ, չնայած նախագահի զանգին: Բայց ահա
դուրս եկավ մեկը, միջին հասակից բարձր, կուցած, քառակուսի
զիւից վերցրեց չին կապույտ գլխարկը և յերեացըրեց բարձր ճա-
կատը՝ ամբողջ լայնությամբն անցնող կնճիռը վրան:

— Խոսքը ընկ. Ռոբերովինն ե, — ասաց նախագահը, — և ժո-
ղովն սկսեց հանդարտել, վորպեսզի լսի վոչ բարձր խոսվածքը:

Բայց Ռոբերովին արգելված և խոսել, նա կոկորդի բարտ-
կացավ ունի: Նա չեր ուղում հանդիս գալ լսում եր և վաղուց
արդեն մտածում. Զիմանն անկար ե և չի տեսնում այն յելքը,
վոր շատերը խոսողներից տեսնում են, բայց չեն կարողանում
ասել: Յեվ բարկանում եր կուսկոմի վրա, թե ինչու ևս զեկուցումը
գրել են մեծ ժողովին: Յեվ շարունակ սպասում եր, վոր մեկն ու
մեկը կասի եղ յելքը, կասի խոսքերով և կազմակերպությունը

ավելուրդ տանջանքներից: ԶԵ վոր Ռոբերովին չի կարելի խոսել...
ՀԱՀՈՒՆՆԵՐԸ պատառուում, կտոր-կտոր են անում նրա կոկորդը,
կարմիր արցունութավ կտորներ: Քիչ պետք ե ասել, ընդամենը
միքանի խոսք, հարցը պարզ կլինի, ամենքի գեմքերը կպայծա-
ռանան, վորովհետեւ ամենքը կիմանան, թե վորն ե են ճանապար-
հանան, վորովհետեւ ամենքը կիմանան:

Յածը ձայնով, վախենալով արթնացնել իր ցավը, վոր այժմ
նիրհում եր կոկորդի խորքում, սկսեց նա խոսել... Բայց բան չեր
մարդիկ տանջելով յերկարացնում ելին պարանոցները,
լսվում, մարդիկ ատանջելով յերկարացնում ելին պարանոցները,
և մորեիկոն վճռեց—ձայնը կարծես մի թոփչք գործեց և ամենքը
և մորեիկոն վճռեց յուրաքանչյուր խոսքը, և ամենքի գեմքը զնորհակալու-
լոցին յուրաքանչյուր խոսքը, և ամենքի գեմքը զնորհակալու-
լոցուն եր արտահայտում: Բայց ամեն մի խոսքը կարծես վորպես
թիուն եր արտահայտում եր մինչեւ կոկորդը և կտոր
մի ապակու սուր կտոր բարձրանում եր մինչեւ կոկորդը և կտոր
կտոր եր անում նրա քնքուշ հուսվածքը, և ախտես եր ցավեցնում,
վոր աչքերիցն արտասուր եր թափում, ճակատը քրտնում եր,
իսկ ձայնը գնդում եր և կտրվում:

Նա ասում եր, թե Զիմանը պատմեց ժողովին ճշմարտու-
թյունը և զրա համար պետք չի նրան կշտամբել: Ճշմարտությունը
թիունը և զրա համար պետք չի նրան կշտամբել, նա ասաց, թե ինչ ե սպասում, և զրա
հո Զիմանը չի ստեղծել, նա ասաց, թե ինչ ե սպասում, և զրա
համար շնորհակալութիուն նրան: Միայն թե չպետք ե մեզ կոր-
համար շնորհակալութիուն նրան: Կոր թե չպետք յելքը նայենք,
պետք ե մեր չորս կողմը նայենք, և վորեն տեղ յելքը
յնենք, պետք ե մեր չորս կողմը նայենք, և վորեն տեղ յելքը
կու-կութիւնի: Պետք ե հանգիստ, պաղարիուն, փնտուել: Միթե կու-
կութիւնը յերբեմն ավելի վատ վիճակից յելք չի գտել: Հան-
սակցությունը յերբեմն ավելի վատ վիճակից յելք չի գտել: Ամեն
գիստ ուսումնասիրության և վճռական գործողության մեջ ե մեր
ուժն ու իմաստությունը:

Յելք կա, շատերն են տեսնում այն, բայց բացատրել այն
չեն կարողանում. արգելքը վառելանյութն ե, պարզ ե: Մի քիչ
վառելանյութ պետք ե գտնել և խկույն կարելի յի բերել Ն-Յե-
վառելանյութ պետք ե գտնել և խկույն կարելի յի բերել Ն-Յե-
վառելանյութ վառելափայտ: Իսկ յեթե վառելափայտ լինի, կարող կի-
լանակից վառելափայտ: Իսկ յեթե վառելափայտ լինի, կարող կի-
լանակից վառելափայտ: Ամեն ըան մի շաբթում ցանքի համար սերմացու հասցնել: Ամեն ըան
մենք մի շաբթում ցանքի համար սերմացու հասցնել: Միթե կա-
խաված ե վառելանյութից, միքանի հարյուր խորանարդ սաժեն
վառելափայտից... իսկ վորտեղից ճարհնք այն:

Պարզ ե, քաղաքում պարտեզներ շատ կան, և քաղաքից
դուրս ել 12 վերստաչափ դենը, վանքի մոտ մեծ անտառներ կան:
Դուրս ել 12 վերստաչափ դենը, վանքի մոտ մեծ անտառներ կան:
Սահա վառելափայտ, չե վոր միանգամացն բավական ե: Մի շաբ-
թյա վառելափայտ, չե վոր միանգամացն բավական ե: Մի շաբ-
թյա վառելափայտ, չե վոր միանգամացն բավական ե: Մի շաբ-
թյա վառելափայտ, չե վոր միանգամացն բավական ե: Վանքին պետք ե անել շտապ
կականք սերմացու բերել: Սակայն ամեն ըան պետք ե անել շտապ
կականք սերմացու բերել: Սակայն ամեն ըան պետք ե անել շտապ
կականք սերմացու բերել: Սակայն ամեն ըան պետք ե անել շտապ
կականք սերմացու բերել:

առաջ ընկնենք, հարկադրենք դատարկապորտներին ու բուրժուազիային, մեջ քաշենք կարմիր բանակը, և բոլոր աշխատավորներին. Միայն թե չդանդաղենք. յեթե յերկու շարթից հետո սերմացուն այստեղ լինի, ապա մի ամսից հետո արտերը ցանված կլինեն:

Բայց խոսքը կտրվում եր չոր, ընդհատվող հազոր: Մի յերկու վայրկան մորեկոն հազում եր, իսկ ամբոխը լարված սպասում եր, շատ, շատ կարեկից սիրալիր դեմքեր յերկում ելին նրանչքին, իսկ նա հազում եր, գալարվում եր հազից և բոլորը տեսնում ելին այդ, լուսում ելին և միայն հառաջում ելին մերթ մեկը, մերթ մլուսը:

Իսկ փոքրիկ քաղաքը ամպամած յերկնքի տակ կարծես քնել եր ճաշված ծանր քնով: Յուրաքանչյուր տան լուսամուտում ծաղկում և խորդենին (գերանիում) և նրա խղճուկ-սեթեթ տերների վրա պառկած են ծաղիկները կապուտ ու վարդագույն ճանձերի նման:

Ախ, վորքան շատ են այդ մոխրագույն փայտա արկղները, փողոցի փողոց ձգվում են նրանք, ինչ հեղձուցիչ և նեղվածք և նրանց ներսը: Առաջին անկյունում բազմաթիվ ահեղ իկոնաներ (սրբի պատկերներ) են կախված, իսկ փոքրիկ սեղանների վրա, վորոնք ծածկված են թելերով գործված սփոցներով, դրված են մախմուրե ալորմներ: Խոհանոցները կեղտոտ են, պատերի վրայով վաղվում են տարականները, և ճանձերը հուսահատ վզգում են լուսամուտի ապակու վրա:

Իսկ այս նեղ տներում ապրող մարդկանց կյանքը նման է սեպտեմբերի մոայլ որին, յերբ մանր անձրեց միալար ծեծում և լուսամուտի ապակին, իսկ կաթիլներով ծածկված ապակու միջով յերեսում և գորշ ցանկապատը և ցեխի մեջ թափառող կարմիր հորթը: Այսպես տասնակ տարիներով ընթանում ե այս կյանքը: Ամեն որ հասակավոր կինն առավոտը վաղ կիում և կովը և զամբրովը ձեռքին գնում և շուկա, իսկ հետո խոհանոցում, ճաշից հետո, լուզոտ ամանսներն ե լվանում: Իսկ ճաղատ տղամարդիկ աղոտ աչքերով, հին կարկատած շալվարներով և կոշիկներով, գնում են ծառայության, առուտուր են անում, ամեն մեկն առանձին մութ վանդակներում արհեստ և բանեցնում: Կիրակի որերը կանաչք ամուր հարդարում են մազները, հագնում են մանուշաշկագույն, դեղին, կապուտ շորեր, յերեխաներին յեկեղեցի յեն տանում, իսկ յերեկոյան հավաքվում են միասին թել խմելու,

տղամարդիկ ել հարբում են ողիով կամ բրագայով և գլուխները խփում սեղանին:

Նրանք բոլորն այդ ժամերին, յերբ շարաթ մերեկոյան ժամերգությանը կանչող զանգակների զողանջը վհատ կախ քցած թերով թոչում և քաղաքի վրայով, նրանք բոլորը թագցրել են յերեց թշնամությունը գեպի կրկեսում հավաքվողները և այդ վեհերոտ թշնամությունը, մարդկանց համար անտեսանելի, ամբողջ քաղաքը միացրել եր ինչպես մի սկ կծիկ...

Այդ ժամերին զրոսնելու յե գնում մաֆայել Անտոնովիչ Սենատորը, վոր ապրում և յերկհարկանի քարաշեն տան մեջ: Այնտեղ ներքին հարկում գեղատունն եր:

Դեղատունը սեկվիզիցիա ելին արել... Հանել ելին վոսկեգույն տառերով սև ցուցանակը սիրալիր կանչող, «Քրիստոսի ծննդյան փող. գեղատուն»—Ռ. Ա. Սենատոր: Իսկ այժմ նրա տեղ կարմիր տախտակի վրայից լկտի կերպով սև տառերը գոռում են: «Առաքին, Կոմունալ Դեղատուն Ն. 1»:

Կանգնած և մաֆայել Անտոնովիչն ավազոտ բլրակի վրա, հավաքում և յուր մեջ ամբողջ ծածկված խուլ թշնամությունը, վոր հոսում և փոքրիկ տներից, լուծում և նրա մեջ իր գառն ատելությունը և լուս ուղարկում և այդ բոլորը գեպի կրկեսի կողմը, ուր ընթանում և անհասկանալի թշնամական կյանքը: Փոքրիկ հասալիկ, մոխրագույն վերարկուով և մաշված գլխարկով (եղ կը խարկներին ասում են «բարեցտեսություն»), նա յերկար կանգնած և բլրակի վրա: Գլխարկի առջնի դիմապահնակի տակից փայլում են չար շագանակագույն աչքերը, իսկ յերբ նա շուռ և զայս և ծանրաքայլ հեռանում և գեպի բակը, յերևում և ճարպոտ կարմիր վզի մի կտորը և նրա վրա շատ սկ ու սպիտակած կարձագերը:

Յեկ ոգնում և կնոջը տնտեսության մեջ, շնչարգելությամբ ցախ և ջարդում, կովի համար լափ և տանում, իսկ յերբ կինը կթում և կովը, նա լուս զիտում և, թե ինչպես և սպիտակ շիթը հոսում մատների տակից գեպի կաթնագույն թուխ փրփուրը... Յեկ կթի ձայնը, միջնորմի հետեւից յեկող խոզերի խաղաղ խանչոցը, գրավիչ կիսամութ գոմի անուշաբուլը հոտը, այս բոլորը հանգատացնում ե նրան, և նա հայտնում է կնոջը.—

— Յես Խանժիների մոտ ելի, նրանց յեղբայրը Տուլայից և յեկել: Ասում և, շուտով կվերջանա, ժողովուրդը բայցեկիների դիմ ապստամբում և, յեհերը նորից ուղում են պատերազմել և նույն իսկ բանվորները Մոսկվայում...

— Վողորմած աստվածը տա,— շնչնջում ե կինը, և Ռաֆայէլ Անտոնովիչը ձեռքերը մեջքին դրած՝ բակում յստ ու առաջ ե գնում, և ըստ սովորության հաշվում ե տան կառուցումից մնացած գերանները, վախենում ե, վոր գողանան.

Բայց յերբ գորշ, ամպամած որը, վոր այնպես խորն եր թագցրել գարնան ուրախութիւնը, վոր կարծես այն ամեննեին գոյություն չունի, վերջանում ե ալ-կարմիր վերջալուսով, և արել, հալցնելով ամպերը, նվիրում ե յերկրին յերեկոյան թեք ճառագայթների վերջին վոսկին, և մանում ե աների, անտառների գաշտերի, գեղին տվազոտ բլրակների յետե, և յերբ վերջալուսի վրա կախված ամպերն անհանգիստ-քնքշությամբ ուրախանում են կարծես մի բոպեական, թռչող բանի վրա և ուղեկցում են արեին նուրբ, կենդանի յերանգների թրթողով, այդ ժամանակի մութ սանգուղքներով. կեղառոտ արտաքնոցի և աղբի տաշտակի մոտով, շտապ վազում ե իր սենյակը Ռաֆայէլ Անտոնովիչը և շնչարգելությունից հեռում ե:

Զե՞ վոր վերջալուսի այս ալ-կարմիր ժամին կրկեսից հպարտ դուրս ե թուչում ինստերնացիոնալը և հարյուրավոր ձայների հզորությամբ սլանում ե բաղաքի վրա, գեպի յերեկոյան արել, ինչպես կարմիր պատուհասող հրեշտակ և չե՞ վոր այս բոպելիս կվերադառնա Ռոբերոն, վոր բնակարան եր բռնել Ռաֆայէլ Անտոնովիչի տանը և վորին հանգիպել չի սիրում Ռաֆայէլ Անտոնովիչը:

Իսկ Ռոբերոն, ականջ դնելով ինստերնացիոնալին, յերեմն նույնական փորձում եր յերգել, բայց հազը խանգարում եր, և նա լուս նայում եր բնկերների յերգելուն: Յերկու վառ շագանակագույն—կարմիր բծեր վառվում ելին նրա այտերի վրա և նրա նիհար յերեսը, փոքրիկ մոխրագույն աչքերով, նույն գույնի մազերով և բերնի մոտ գտնվող առնական ինքնավստահության ծալքով, վորպիսին հատուկ ե բոլոր գործարանալին բանվորներին, այդ յերեսն իր ամբողջությամբ յերգում եր, Ռոբերոն վոտքով զարկում եր յերգին համաշափ, և ընկերական սիրո քնքուշ լողում ելին նրա ուղեղում:

Իսկ ժողովից հետո, գրեթե վերջինը դուրս գալով կրկեսից բաց ոդ, նա տեսավ յերկինքը և արեմուտքում լուս ու տիսուր հանգչող ամպերը, պարզ վորոշվող կտուրները և ծխնելուցները և ծառերի մեծ կուտքը և հրճվանքով ցանկացավ խորը շնչել վորովհետեւ գարնանալին գաշտերից փչում եր ուժեղ հանդարտ քամին և բերում եր իր հետ կիսահալ ձևան և հալվող խոտի ու թրի-

քի և ինչ վոր մի ալլ բանի հոտը, վորն ամեն մարդ ուկում ե կլանել իր թռքերի ամբողջ լախությամբ: Բայց նրա հազը նորից բոնեց և կոշտ ճանկերով սկսեց տանջել նրա կոկորդը: Նրա աչքերը մթնեցին, չքացավ վաղ գարնան հրճվանքը, և նա զգում եր միայն, թե ինչպես քամին քնքուշ ծաղրանքով համբուրում եր նրա քրթնաթոր յերեսը:

Իսկ հետո հաղն անցավ, և, զգկապը փաթաթելով, նա ուղերզվեց գեպի կուսկոմի ժողովը և տեսավ, թե ինչպես մեռած արևմուտքի վրա հաղթական կերպով վառվեց վեներան, մոտալուտ մահվան խաղաղ միտքն անձայն քայլերով անցավ նրա մտքով: Ծատ եր ցանկանում ապրել աշխատելու համար և յերբեմն աշխատանքի ընդմիջումներին հրճվելու արեի ու կյանքի վրա: Բայց վրա համար անհրաժեշտ եր կես տարով թողնել աշխատանքը և որական մի պտուկ տաք կաթ խոնել: Իսկ գլխավորը—ժողովներին չխոսել: Այսպես են ասում բժիշկները:

«Վերջ տալ ժողովների ժամանակ խոսելուն»... և նա Ժպտաց— «Հիմար բան ե», և մահվան, բնության, գարնան վերաբերյալ գեղեցիկ մտքերի տեղը հանգիստ բռնեց վառելափայտի մթերելու ծրագրի իրագործման յենթադրությունների արագ հոսանքը: «Հիմա կոմկուսի ժողովն ե, կառաջարկման այս ծրագիրը և վաղը կակսենք իրագործել»: Նա քայլում եր՝ չարգելով լճակների վրայի բյուրեղա սառուցները:

ԳԼՈՒԽ 11

Ելեքտրական լամպի խաղաղ լուսի տակ, կաղնե կահուցքով կահավորված առանձնասենյակում սկսվեց կոմկուսի նիստը։ Ռուբեկոն մի կարճ զեկուցում արեց։ Պատմեց ընկերներին վասելափայտի մթերման ծրագիրը։ Սակայն նրանք լավ չելին լուս, զեկուցման ժամանակ իրար հետ խոսում եին բարձր շշուկով և սիրալիր ժպտում եին մեկը մյուսին։ Ամբողջ որվա հոգնեցուցիչ, ջղալին աշխատանքից հետո հաճիլի լիր տեսնել ընկերների ծանոթ դեմքերը։ Յեկ գրանից եր, վոր Ռոբեկովի բոցավառ կոչերը հանգչում եին, վորպես ջրի մեջ ընկած կայծեր։ Վոչ վոք չեր պաշտպանում նրա առաջարկները, իսկ զեկուցումից հետո Զիմանը յերկար ապացուցանում եր, վոր ամբողջ նախագիծը իրականաւալ չի կարող, վոր գարնան հալոցքը, ճանապարհները խափանելով, արգելք կինի վառելափայտը յերկաթուղու գծին հասցնելուն, վոր սղոց, կացին ու սալլ հերթք չի անի։

Հաշվապահական գրքի պարզ տաղտուկ թվանշանի նման փոքրիկ Զիմանը լուսում եր Ռոբեկովի թուուցիկ մտքերի թերից։

Այնուհետև առարկեց բրիգադի զինկոմ կարառւովը, նոսր միրուքով շրջապատված մուգ-դեղնագույն յերեսով մի ծեր կազակ։ Ծխի քուլաներ եր դուրս թողնում նա չիրուխից և փնթփնթում եր խուլ ձախով։ «Հիմա քաղաքի շուրջը շատ բանդիտներ են թափառում... Իսկ դուք եստեղ ուզում եք կարմիր զինվորներին 12 վերստ քաղաքից դուրս տանել։ Առանց նրանց վանքի անտառները չեք կարող կոտրել։ Մորիլիզացիա արած բուրժույներով ու Խորհրդակին ծառայողներով ել հեռու չեք գնա»։

Յեկ Ռոբեկոն, հազից խեղդվելով և թուքն ու կանաչ խուխը թոցնելով թանգագին կարմիր-նաշխավոր գորգի վրա, հուշատեմրից քաղած թվերով պատասխանում եր Զիմանին, իսկ կարառւովին՝ խոպոտ ձախով ասում եր, թե ուրիշ իելք չկա, թե հեղափոխությունը պահանջում ե... Ռոբեկն և պետք ե սիսկ անել։

— Ռիսկ կանես, — քաղաքը կվերցնեն. կոմունիստներին կկոտորեն, շրջանը միքանի ամսով կկտրեն կենտրոնից, — հատհատ, կծու ծաղրանքով, վոչ բարձր, բայց ամենքին լսելի խոսում եր կարառւովը, իսկ հետո հանկարծ ծաղրացրեց և բար-

կացած զոռաց. — Դե ի՞նչ ես զուրս տալիս, Ռոբեկոն, ապստամբություն առաջ բերելը — հանաք բան չի։ Հարցը կ կիմինից, նա, վորպես չեկալի նախագահ, քեզ կասի, թե հիմա գլուղերումն ինչ խլրտում կա։

Իսկ կիմինն առանց մտածելու լուռ եր, յերազում եր ինչ վոր ուրախառիթ բանի մասին, նրա աչքերն ուրախ և քնքուշ ելին։ Լսելով իր ազգանունը, ցնցվեց, թողեց յերազները և անգիտակից չարակամությամբ հետեւելով Ռոբեկովի խոսքերին, միանգամայն համաձայնվեց Զիմանի հանգիստ առարկություններին, կարառւովի զարցացած ճշոցին, — և ամեն բան, ինչի մասին վոր Ռոբեկոն խոսում եր, թվում եր նրա հիվանդ վոգեռության արդյունք։

— Պետք ե լարենք մեր կամքը փակուղուց դուրս գալու համար, այլ կերպ... դաշտերը չենք ցանի։

Յեկ հազարով, Ռոբեկոն ձեռքով ցուց տվեց լուսամուտի խավարը։ Նրան հետեւց կիմինն իր հայացքով — նայեց գիշերվա աշքերին — պարզ և խիստ նայում եր զիշերը դեպի սենյակը, և կիմինը պատկերացրեց գիշերվա հանգարտ վարագուրով ծածկված ընդարձակ յերկրի անսահման լայնությունը։ Գորշացած ձևն տակ արթնացող դաշտեր, դաշտեր, վոր սպասում են ցանքին, գյուղացիներին, վորոնք պայծառ որերին հավաքվում են սկզբերով պատերի տակ և գատում են յեղանակի մասին, բերքի մասին, և ապա հիշում, վոր ամբարները դատարկ են, վոր սերմացու չկա, ցրվում են լուռ ու վախով, փրկություն են սպասում քաղաքից, և սպասելու ամեն մի որվա հետ նրանց հոգումն աճում է ատելությունը դեպի կոմունիստները, դեպի պարենկոմները, դեպի կեպի Խորհրդակուները...»

Յեկ հանկարծ հասկացավ կիմինը, թե ինչու Ռոբեկոն ալգակա բողբոքվում և գողում ե, հասկացավ, վոր «Եկը չկա», և միանգամից արթնացավ նրա գործնական ու պարզ խելքը, սրատեսությամբ ըմբռնեց ամբողջ ծրագիրը, մտքումը կիմինը պատկերացրեց այդ ծրագրի իրագործման ամբողջ ճանապարհը, և հնչուն, ուժեղ ձախով պաշտպանեց Ռոբեկովին։

Ռոբեկոն բոլորովին չեր կարողանում խոսել, փափուկ գահ հավորակին թիկնած հանգստանում եր, և ժպտալով շարժում եր գլուխը, լսելով կիմինի ձախուր, վոր միանգամից թափեց Զիմանի վրա իր գործնական առաջարկները, և յերբ քվեարկում եին, վրա կարառւովը մենակ «Եկ» բարձրացրեց ցրտահարություն միան կարառւովը մենակ առաջնակիցիցից և բար-

նից այլանդակված ծուռ մատոներով մեծ, ուժեղ ձեռքը: Իսկ կուսկոմի մնացած անդամները բոցավառվեցին այն հանդիսատ, խաղաղ կրակով, վոր վառվում եր կլիմինի խոսքերի մեջ:

Կուսկոմի նիստից անմիջապես հետո հավաքվեց վասելա-
փայտի մթերման ծրագիրը կյանքում անցկացնող հանձնաժողովը:
Նրա մեջ ելին կլիմինը, Ռոբերտին, Կարառոլովը և Զիմանը:

Վաղը կուսակցության կամքով, հաճախաժողովի ղեկավարությամբ կսկսվի աշխատանքը:

Վաղը լրագրում առաջնորդող հոգվածն ամենքին կաղաղակի սովորացնութեան մասին:

Վաղը միտինգներում և ժողովներում զինկոմիները և ազիտատորները կբացարձին ուշադիր կարմիր զինվորներին, վորչիթե նըանք ցանկանում են արտերը ցանված տեսնել, ապա անհրաժեշտ և փայտ կտրելու գնալ:

Վաղը Զիմանը բոլոր պահեստներից կհավաքի սղոցներն ու կացինները, իսկ կոմունալ տնտեսությունը մորիկիզացիացի կենթարկի սալլերը:

Վաղը Ռոբերտին, ի մեծ վիշտ քաղաքի, պլովխորհրդի մեջ անց կկացնի միության անդամներին մորիլիզացիա անելու առաջարկը, և ձեռնարկություններում բանվորների ընդհանուր ժողովները կհանեն անձոսնի սեղուլուցիաներ... Վաղը:

Այսոր, այս մեծ առանձնասենյակում, վորտեղ և ջահերը, և նկարները, և բազկաթոռները, և սեղանի վրացի թանաքի սարը—ամեն բան շնչում է անցյալի մասին, բանկի դիրեկտորի առանձնասենյակի անմատչելի, լերկուղած լուսթիան մասին, ևն դիրեկտորի, վորս առաջ ապրում եր ևս տանո...

Այսոր, այս սենյակում, վորտեղ ամբողջ գիշերն ելեքտրական պայծառ լուսի տակ նստած են չորս հոգի, և վորտեղ պատից կախված կարմիր կտորի վրա սև ու վոսկեփուչն տառերով սպակած ե. «Պըուհատարներ բոլոր իրերների, միագեք...» .

Առքենակոն անկյունում, փոքրիկ սեղանի առաջ, լրացրի վաղվահամարի համար առաջնորդող և գրում և խանգարում հանրան մերթ Զիմանի զահլա տանող փսխոցը, մերթ Կարառելովի խուլ բառերը, մերթ Կիմինի զիլ ձալնը, և ջնջելով անհարմար բառը, նա ուրիշն և վորսում և, բռնելով, շտապ շարում և տառը տառի յետելից, իսկ հետագայում վորպիս խավարի մեջ տեսնում և միքանի բառերի—արտահայտությունների անկարգությունը, վորոնց իսկույն և յեթ պետք և հավաքել, մեկր մլուսին համաձաւ-

Նեցնել, վորպեսզի միտքը նրանց վրայով լնթանա, ինչպես ապակյա աստիճանների վրայով, ավելի բարձր ու բարձր...

Քաղաքի վրայով, անսահման սպիտակ ձևան կուտերի վրա-
յով, լուների վրայով լուռ սահում և կապուտացյա լուսնիա զի-
շերը: Յերեկոն անհանգիստ—քամոտ եր, ամպերն արագ անցնում
ելին աստղերի և յերկրի մեջտեղով, պայծառ կարմրին եր տալիս
մի շերտ արևմուտաքում: Քամին որորում եր ցուցանակը, վորը
յերգում եր մի ճոճուան յերդ, և վորի սև ստվերն ընկնում եր
մայթի վրա: Ապա քամին քշեց ամպերը և հանդարտեց: Մի քիչ
ցըտեց: Փողոցները դատարկ են, հեռու յերեւում և մի ծարից մինչև
մյուսը: Պատահական անցորդների վոտնաձախը, պարզ լավում է,
իսկ յերկինքը խորն և ու աստղալից, ինչպես ձմեռը:

Կլիմինը դուրս յեկավ, շնչեց լի կըծքով, և զվարթացավ, վորովհետեւ գալիս եր հեռու բացառում, անտառում քնած զար-նան շնչառության հոտը:

Ո՞ւր գնար: Արդեն մոտ և արշալուքը, նա անձախն սողում
և բարձր տների յետեկից, և զիշերը կամաց-կամաց զունատվում
և, կարծես մեկը լուսավորում և փողոցը հեռու, մեծ լապտերով:
Շուտով արդեն կլուսանա: Յեկ առուցի, յերիտասարդ քայլերով
գնաց նա ամայի փողոցներով Զեկա, վորպեսզի մինչև առավոտ
իր առանձնասենլակում գահավորակի վրա մի քիչ քնի և վաղը
նորից սկսի աշխատել:

Յանկություն ուներ ուստելու և ավելի շատ քննելու, իսկ
գլխումն հաջում եին նախադասությունների կտորներ, ընկերնե-
րի ձայներն ու գեմքերը. Ուրեմն կողի սեեռուն հայտցը, Զիմանը,
վոր կանգնած գծում է թղթի թերթերի վրա, և կարառուլովը, վոր
վիճական գեղին կոշիկներ հագած, իր ահազին վոտքերով քմծի-
ծառ տալով հանգարտ հատակին և խփում:

Արտակարգ Հանձնաժողովի հերթապահը, քննիչ Գորնիսլու, սեղանի վրա կուցած, բան և գրում: Նրա դեմքը մռայլ է, լայն, մեծ դուրս ցցված այտոսկրներով, խորը նստած աչքերով, իսկ ճակատը ծածկված և մազերի փոշոտ փափախով: Առաջին հայացքից թվում է, թե նա տարիքավոր է, բայց յեթե կողքիցն անցնես և նայես բերնի գծագրությանը, յերեսի թեթև ձվաձնությանը, ապա կնկատես, վոր նա դեռևս բոլորովին մերիտասարդ է:

Նա ուզում է քնել վոտքերը մեկնել սեղանի տակ, զլուխը դնել բազկաթոռի թերին և քնել անհոգ ու քաղցր: Բայց քնել չի կարելի, չե վոր քաղաքում, ընդարձակ քնած շրջանում, վորտեղ այնքան շատ են անտառները, ձորերը և խուլ անհայտ ճանապարհները, մենակ Գորնիսլը չի քնած, իբրև պահակ իր զիրքի վրա: Ամեն ըոպե կարող է հեռախոսը զանգահարել, կարող են կանչել ուղիղ գծի մոտ... Քնել չի կարելի:

Իսկ Գորնիսլը յերկու որ և մի ըոպե չի քնել: Անցյալ գիշեր ոպերացիա կար, մի ամբողջ շարք խուզարկություններ, — և, վերադառնալով ձիով դատարկ փողոցներով, Գորնիսլը ներս եր շնչում առավոտյան սառն ողը և յերազում եր այն մասին, թե ինչպես պիտի հանվի և պառկի անկողնում, բայց Զեկայում նրան անսպասելի կերպով պահեցին, կարիք յեղավ հիվանդացած ընկերոջ փոխարեն հերթապահություն անել: Պինդ և սիրալիր հայնուելով, ստանձնեց Գորնիսլը հերթապահությունը, և ամբողջ գիշերը մի ըոպե անգամ աչքը չփակեց: Միքանի անգամ հեռախոսը զանգահարեց, հեռագրատնից բերին գաղտնի ծածկագիր հեռագրեր: Բայց քանի անցնում եր գիշերը, հոգնածությունն այնքան ավելի յեր դառնում, Գորնիսլի աչքերին տողերը ձուլվում են, նա թողնում է զրելը և ականջ է դնում վիճակը առաջին աղմուկին, նայում է լուսամուտի կապույտին: Աչքերն իրենց իրենց փակվում են, իսկ վերսից, կողքից նրան գրկում է դիմքերի, ձայների, խշխոցի, աղմուկի քնքուշ մառախուղը... Վիճակը աղմուկը մեծ է, և նրա աղմուկը — ինչպես աղմուկը բարձր խոտի, քամուց անհանգստացած, բարձր կանաչ խոտի, վոր խըշիչում է վոտքի տակ... Խոտի վրայով քաղլում է սպիտակ հագուստով մի աղջիկ և խոտը սոսափում ու աղմուկում և նրա վոտքերի տակ... Նրա դեմքը մի ժամանակ տեսել է, յերեմն ծանոթ եր. . Դեռ մանուկ ժամանակ տեսել եր նրան տափաստանի մի գլուղում, բայց վորքան թեթև են նրա շարժումները և ինչ կարմիր ու քաղցր են նրա շրթունքները:

Ականջին հասավ բացվող դռան ձայնը և Գորնիսլն իսկուն արթնացավ, հայնուեց իրեն ննջալու համար, և չահել քունն անհետ սահեց անցավ և միանգամից մոռացվեց:

Դռան թիվոցը: Հեռագիր: Կանչում են:

Վոչ, դա կիմմին եւ Գորնիսլը ճանաչում է նրա քալվածքը: Բարեկեցին: Կլիմմինը վառեց փողոցում հանգած ծխախոտը:

Յեվ Գորնիսլը կլիմմինի հետեւից մտնելով առանձնասենակ, լսեց յերեք ժողովների մասին, վորոնց ներկա յեր յեղել կլիմմինը, լսեց Զիմանի զեկուցումի մասին, Ռորեկուի յելութի մասին, կուսկոմի նիստի մասին:

— Իսկ Կարառուլով ի՞նչ եր ասում, — հուղված հարցրեց նա:

Յեվ մաքառելով առավոտան քաղցր քնի հետ, ինչպես ճանձն հոտավետ քաղցրավենիքի մեջ, կլիմմինը կրկնեց պատմությունը և վերջացրեց այն քնկոտ հորանջով: Գորնիսլը լուռ գլխով արեց: Գնաց իր սենյակը, վերցրեց գարակից ընթացիկ աշխատանքի հաստ թղթապահնակը և ուշադրությամբ սկսեց նայել միքանի գործ:

Արդեն անցել է յերկու տարի, յերբ հեղափոխությունը 17 տարեկան պատանի բանվոր Գորնիսլին խեց մի խուլ գործարանից, իսկ կուսակցությունն ուղարկեց նրան աշխատելու զեկա: Նա կարող եր, առանց իր ձեռքին նայելու և առանց վախենալու, վոր ձեռքը կարող է վնասել, մուրճով հարվածել յերկաթի դրին, և նմանապես նա վստահ եր իր վրա և աշխատանքի հետեւնքների վրա: Բոլորովին չեր խոսում միտինգներում և ըջիջի ժողովներում ել շատ հազվագյուտ դեպքերում:

Բայց նա միշտ լի յեր աշալուրջ տափնապով, լուրաքանչյուր հանցանք կարողանում եր կապել շատերի համար աննկատելի խոռվությունների հետ, վորոնք, ինչպես ստորջրյա խոր հոսանքներ, շարունակ յեռում են ժողովրդի մեջ, գլորվում են զուղերով, շուկալով, դանթարով և մեջ են առնում քաղաքի բազմահազար մեջանականությունը: Յեվ մեկ-մեկ նրան թվում եր, վոր ինքը և հազարավոր ընկերներ քաղլում են բարակ, փիրուն, սառուցե կճեպի վրայով, վորի տակ մոլեգնում ե կատաղի ջուրը, պատրաստ ամեն ինչ տանելու և ամեն ինչ խեղզելու... Յեվ այդ եր պատճառը, վոր յերբ կլիմմինը պատմեց նրան կարառուլի առարկությունների մասին, նա զիխով հավանության նշան արեց, իսկ, աչքի անցնելով վերջին գործերը և տեղեկատվության ամփոփումները, ինքն իրան ասաց. «ապրես, կարառուլի»:

Առաջանակի, քնքուշ բայց և հզոր, հաստատակամ ուժով, դա-

լուկ արշալուկսը տիրեց սենյակին և անպետք ու խղճուկ գարձրեց եկեղեցական լամպի լուսը:

Դուրս լիկավ թեև վոչ տաք, բայց կարմիր և պայծու արկը,
քցեց սենյակի հատակին դիպին շովքերը: Յեզ Գորնիխը, ագահո
րեն ներս քաշելով ծխախոտի ծուխը, վոր նրան բավականաչափ
թունդ չեր թվում, բարկացած հայոցում եր, վորավհետեւ գիշերվա
անքնությունից գլուխը ցավում եր, և հոգնած մարմինը հան-
գիստ եր խնդրում: Զեկայում աշխատանքի որն արդեն սկսվում
եր՝ մեկը մյուսի առաջը կտրելով, զվարթ թխկթխկացնում: Էլին
զրամեքենաները: Իսկ գրսից յուրաքանչյուր բոպե մերթ մեկ,
մերթ մյուս սենյակն ելին խուժում հեռախոսի զանգերը:

Հենց կլիմինի ականջի տակ զնպաց հեռախոսի արծաթա-
ձայն զանգը, և կլիմինը զժողովամբ Գորնիին ձեռքով անե-
լով՝ հեռախոսի փողը վերցրեց։ Հեռվից, շատ հեռվից լիլում ելին
կարծես անհարթ թղթի վրա զրված խոսքեր։ Իսկ ձայնը, թե՛
վաղուց չլսված, հեռախոսով աղավաղված, միանգտմից ճանաչ-
ված, միանգամից ծանոթ...

Յել Գորնիխը նկատեց, ինչպես հրձվանքով փակեց կլիմի-
նի յերեսը, և յերեաց, վոր նա դեռևս յերիտասարդի, թեև յերեսի
կաշին գորշ եր և աչքերի տակ շատ կնճիռներ կային: Բայց սպի-
տակ առամներով ծիծաղը պայծառացրեց դիմքը, և նա միանգա-
մից յերիտասարդացավ և քաղցր շփոթության մեջ ընկավ: «Ի՞նչ
և պատահել նրան»:—մտածեց Գորնիխը:

— Բարեւ, բարեւ... Վաղո՞ւց ես յիկել Մոսկվայից։ Կայարա-
նից։ Կառք ուղարկեմ։ Լավ։ Ինքս կզամ։ Նա վերկացավ աթոռի
վրայից և փողը կախեց։ — Ընկ, Գորնիխ, Սիմկովան է յիկել Մոս-
կվայից, և գրականություն է բերել։ Յես այժմ ժամանակ չու-
նեմ։ Հետո կխոսենք։

Նա արդեն վազում եր սահմուղքի աստիճաններով դեպի բակը:

Զի՞ն վերև եր շպրտում գարնանային ցեխը սալահատակից, աղմկոտ և ուրախ ելին հնչում մարդկանց ձայները... Յեզ Կլիմինը լերկար, յերկար ամիսներից հետո ուրախ եր և անհոգ, կարծես մեկը նրա հոգուց քաշել հանել եր փոշոտ ծածկոցը: Թվում եր, թե վերջին ամիսների ընթացքում նա աշխատանքից բացի, վոչ մի բանի մասին չեր մտածել, որից որ ապրել եր աշխատանքի չդադարող որիթմի մեջ և ալժմ միայն հտսկացել եր, վոր նա շարունակ ներկա յեր յեղել իր ուղեղի ամենահոռոտ անկյունում:

Կիմինը նրան կարձ ժամանակ տեսավ այսպես կարծիր,
առողջ, բարձրահասակ, վոսեեներ գլուխը վայելչակազմ մարտի
վրա: Քաղաքում տարածված տիֆի համաճարակը Սիմկովային վեց
ամսով հիվանդանոց գցեց: Յեկ գավազրությունների, բանդիտիկովնի
և տիֆի դեմ տենդային պատքար մղելով տարված նա գրեթե
մոռացավ Սիմկովային և հիվանդությունից հետո հանդիպելով
նրան, սկզբում շճանաչեց: Նա գունատվել եր, կարծես արլուս
չկար նրա մեջ, այտերն ու շրթունքները թոշնել եին, իսկ սափ-
րած նրա մեջ, այտերն ու շրթունքները թոշնել եին, իսկ սափ-
րած գլուխը թվում եր խոցելի և փիրուն: Նրա աչքերը մեծա-
ցել եին, զարձել եին թափանցիկ, և ծանր հիվանդությունից
հետո հոգնածությունը լիրկար ժամանակ մնաց նրանց մեջ:

Հաճախ գիտում եր կլմինը, թե ինչպիս նա զորս զպուց
ման ժամանակ դնելով իր վարդագույն, սափրած գլուխը կուն
վրա, մի քանի բոցի հնջում եր, իսկ հետո վերթոչում, և աչքե-
րում փայլում եր հոգնած ժպիտը: Յերբեմն ժողովից հետո խոսակ-

ցում ելին նրանք քաղաքականության, կուսակցական կյանքի, ընթացիկ աշխատանքի մասին և շուտով սկսեցին ընկերական դուռով խոսել, վորը մոտեցնում է ահագին յերկրի կոմունիստներին մի համերաշխ ընտանիք կազմելու համար։ Սակայն վոչ միայն սիրո, այլ նույն իսկ մտերմության խոսք չեր լինում նրանց մեջ, և ժամանակ ել չկար մտածելու իրենց ապրումների մասին, — չափազանց տեսդաշին եր աշխատանքը, և չափազանց քիչ աղատ ժամանակ եր թողնում այդ աշխատանքը, Միայն Սիմկովայի գնալուց առաջ, շտապ հրաժեշտի վայրկանին, խորը յերիտասարդ ցանկությունը թելագրեց Կլիմինին համբուրել նրա ժպտացող շրթունքները։

Սիմկովան սակավ եր ժպտում, իսկ նրա հանդարտ ծիծաղը Կլիմինը լսեց միայն այժմ, կայարանի իրարանցման և խառնաշփության մեջ, յերբ ոգնում եր Սիմկովային քաշ տալու զրականության հակերը։ Այժմ Կլիմինը նրան առաջկա վրա շատ փոխված տեսավ. նա ալրիկ եր արկից, նիհարել, մաղերը յերկարել ելին, շարժումները կարծիս ավելի արագ ելին, նա ծիծաղում եր հանդարտ, ուրախ ծիծաղով, և շտապ պատասխանելով նրա հարցումներին՝ Կլիմինը պատմեց նրան կոմկուսի ընթացիկ աշխատանքի մասին, շրջանի դրության մասին, վառելափակտի մթերման ծրագրի մասին... Յեվ յերբ նրանք ձյունից և ցեխից արծաթի գուշով փայլող ճանապարհով գնում ելին քաղաք, այն ժամանակ Կլիմինն զգաց, վոր մի ինչ վոր բան, ամենակարեռը նա չի ասել Սիմկովային։

Իսկ կայարանի ներ հրապարակի վրա խոնդած ամբոխի մեջ, արձակված հողմահար գեմքերով կարմիր զինվորներից և կայարանի անսովոր իրարանցումից գլուխները կորցրած գլուղացիների մեջ, նույնպես յերկու հոգի հանդիպեցին իրար և բարեկլով՝ մեկն ասաց։

— Տես, Զեկալի նախագահն ե... Այ, են կնկա հետ։

— Կնիկն սի ե։

— Կուսակցական ե... Պատասխանողը մի հաստ գյուղացի յեր, շեկ մեծ միրուքով, կառապանի յերկար քուրքով, մարակը ձեռքին և զգգզված փափախով, վորի տակից քրտնքի կաթիները հոսում ելին ճակատի վրա։

Մյուսը — վայելուչ հասակով, ուժեղ իրանը պինդ գրկած դեղին կիսամուշտակով, կարմիր զինվորի սև կորդակով, վրան մեծ կարմիր աստղ։ Նրա աչքերը կապուլտ են, բերանը զեղեցիկ, զգա-

չական... Թեկին կարված են աստղ և յերկու փոքրիկ խորանարդ — այնուամենայնիվ քայլվածքի, կեցվածքի և գլխի ամեն մի շարժումիցն զգացվում եր, վոր հին սպա իւ։ Նա հենց նոր և յեկել, իրերի տոպրակը ձեռին, իսկ աչքերն ուշադիր թշնամաբար նախում են Կլիմինին և Սիմկովային, ուսումնասիրում և տպավորում նրանց ամեն մի շարժվածքը։

— Շուտ անենք գնանք... Այստեղ սենյակ եմ ճարել մեկի մոտ... ջնուզ եւ Բայց ոգնում ե մեզ, փող և տալիս և յերկու անգամ աղատել ե ինձ, թագցը ել եւ իսկ Զեր դոկումենտները, կարգին են։

— Նահանգից եմ գալիս, ինչպիս զինսպեց, զինկոմատիտրամադրության տակ եմ... Ազգանունս — Ռեպին, Բորիս, ծառակությանս ցուցակի մեջ ել — Կարմիր բանակի յերկու տարվա ծառաշություն։ Շնորհակալություն եմ ստացել, հրամանով...

Նրանք արդեն գնում եցին փողոցով և ժամանակ առ ժամանակ շեկը թեքվում եր կառապանի նստելու տեղից և ասում եր Ռեպինին։

— Իսկ մենք ձեզ չելինք սպասում... Յես հենց վոր իմացա, վոր ձեզ քար ու քանդ են արել, մտածեցի — պրծավ, ել ձեզ չեմ տեսնի... Իսկ զինվորական ուժ եստեղ հիմա քիչ եւ Ցըված հն զուղերում ու զավողներում։ Հիմա զուղացիությունը մեր կողմն ե... Դյուլում սերմացու չկա։ Ասոված տա — մի լավ կուտացնեն...

Գարնանալին յերկինքը կարծիս ծանր և յերկար հիվանդությունից առողջացող յերեխայի ուրախացած աչքեր լիներ։ Ամեն մի ծառ չուծ մերի ճյուղերով ագահությամբ վորսում և կապուտողը։ Յեվ մարդկանց զեմքերն ել այնպես են, կարծիս բոլորի միտքն ել մեկ ե — վայելի գարունը, համբուրել նրան, վոր աչքով անտեսանելի է, բայց և շոշափելի կերպով ամենքին փաղաքշում ե։

Իսկ Ռեպինը, մտարերելով իրեն ցուց տված հասցեները, մալթով անցնողների մեջ փնտրում է յուրաքիններին, աշխատում է մարդկանց զեմքերի վրա ուրիշ մտքեր կարդալ։ «Ռվեր» են շատ, թշնամինները թե բարեկամները։ Վճռական ժամին կզմն նրանք մեր յետեկից, թե վոչ Յեվ նայելով Գործկոմի բաժինների ցուցանակներին, իրեն այնպես թշնամական, բայց արդեն կարգավորված կյանքի ամբողջ այս կառուցվածքն զգալով, Ռեպինը կասկածում եր իր մտադշությունների հաջողության մասին։

Բայց յերբ պարենավորման խանութի մոտ նա տեսավ զգաց-

ված, տանջված կանանց յերկար պոչը, յերբ նկատեց յեկեղեցուց յեկող մեշաններին, յերբ հրապարակովն անցնելիս տեսավ լայն փոված շուկան, հաղթութիւն վստահութիւնը նորից տիրեց նրան:

Յեկ այս վստահութիւնը բերեց իր լեռակից գործնական հաշիվների և յենթազրութիւնների մեջ անմիջապես խորասուզվող մի վաղանցիկ, մշուշապատ ցնորք—հիշողություն այն անցյալի մասին, վորը պիտի փոխվի ապագայի, սիրուն կանանց շրջանի մասին, ուսագիրներով գեղեցիկ սպաների, զորատեսների, զորահանդեսների մասին, գնդի զրոշի տակ կանգնած վայելուչ զինվորների շարքերի մասին, են գրոշի, վորը կովկի մեջ ապատելու համար Ռեպինը ս Գեորգի խաչ եր ստացել։ Այս պայծառ հիշողություններն ելին հյուսում նրա կյանքի ցնորքը—միակ մեծ անբաժան Ռուսաստանի վերապարձր։

ԳԼՈՒԽ III

... фолгуне рупе м զեռևս սառնամանիք է, այնպես, ինչպես լինում է վաղ գարնան վաղ առավոտական. վոչ տաք, կարմիր արեւ վը ցածր կախված է հորիզոնի վրա. արևմտան սենյակներում, մութ անկյուններում զեռևս թափառում են գիշերվա խավարի հատքերը, իսկ Քաղբաժնի քարտուղարն արգեն լեկել է ծառայության և քնահար հերթապահի առջև դրված թերթի վրա ստորագրում և «Մատուսենկո»... Յեկ նրա ստորագրության ամեն ըազրում է վերթապահի առջև դրված թերթի վրա ստորագրում և ապա կլոր ե, ընթեռնելի, վերջացած և միայն վերջինին Մատուսենկոն ափելացրեց մի բարակ ու վախկոտ պոչ:

Շինելը հանելուց ու կախ տալուց հետո Մատուսենկոն սանրով
կարգի յէ բերում իշ մաղերը և գնում ե պետի առանձնասենյակը.
այնտեղ ե նաև նրա կողիկ փոքր սեղանը, ծածկված վարդագույն
ծծանով։ Մատուսենկոն նայում ե պետի թանաքամանին-թա-
նաք կա, թե վոչ։ Փորձում ե պետի զըշածալը-վատն ե...
Մատուսենկոն փոխում ե գրչածալը, կարգի յէ բերում պետի սե-
ղանի վրայի թղթերը և տնտղում ե Քաղքաժնի պետի տեղակալ
Մարտինովի մանր արագ գիրը։

Մատուսենկոն փոքրահասավկ ե, կանոնավոր հարդուկած
կլոշ շալվարով, ձեռքերի մատներին—մատանիներ, լախ, կարծիր
լերիսով, և ալի լերեսի վրա ընդգիւտ սառած և մի ժպիտ, նման
են քծնող ու լերկչոտ պոչին, վոր Մատուսենկոն ավելացնում ե
իր ազգանվան վրա: Զինվորական ձեր մաքուր զիմնաստորկալի
վրա կպցըրած ե եմալե կոմունիստական սատղը: Այսոր կիրակի
վրա կպցըրած ե եմալե կոմունիստական սատղը: Այսոր կիրակի
հիները և արտագրողները—ուրախ և աղմկասեր մարդիկ: Բայց
Մատուսենկոն նրանցից իրեն հեռու յե պահում կամ, ավելի ճիշ-
տը, պարզապես չի նկատում նրանց, չի մտածում նրանց գոյու-
թյան մասին, ինչպես վոր չի մտածում իրեն չվերաբերող առար-
կաների և կենդանիների գոյության մասին, բոլոր մարդկանց
մասին, վորոնց նա համարում ե պաշտոնով իրենցից ցած, կար-
միր զինվորների, ուսուցիչների և Քաղբաժնի հաճախորդների
մասին:

Սակայն Մատուսենկոն խիստ շատ և մտածում նրանց մասին, վորոնք բարձր են իրենից իրենց պաշտոնական գիրքով, սկսած Քաղբաժնի պետ Գոլովլիկից, վերջացրած Լենինով ու Տրոցկիով: Պետերին նույնպես նա տարրեր կերպով և գնահատում. վոմանք նրան գուր են գալիս, մյուսները վոչ, վոմանցից նա վախենում և և հասկանում նրանց, մյուսներից չի վախենում և չի հասկանում, բայց ընդհանրապես իշխանության մասին նա շատ և մտածում և իր մանրիկ աչքերով հետեւում և նրանց: Աղմկոտ, կոշտ չսափրած կզակով և անկարգ շորերով Գոլովլիկին Մատուսենկոն չի սիրում: Մի անգամ Մատուսենկոն ուզեց ողնել Գոլովլիկին վերաբեռն հազնելու, բայց սա գուրս պրծակ նրա սիրալիք գրկից, ծաղրական զարմանքով գննեց և վերին աստիճանի վիրավորական, անհաճո և վոր գլխավորն և՝ անհասկանալի խոսքեր ասաց:

— Ըեկելը Մատուսենկո։ Ինչու յեք այդպիսի բաներ անում,
չե՞ վոր դուք կոմունիստ եք, ով ե խնդրում ձեռ սահել մեւ։

“Հայտնի բան ե,-դատում և Մատուսենկոն,-Գոլովիկը—
զարդա յե, բանվոր ե, գրում ե քերականական սխաներով և
բարկացած ժամանակ անպատճաճ կերպով համուսում ե».

Յեկ թեհ Մատուսենկոն չի սիրում և վախինում և Գոլովլից, բայց Գոլովլը—իշխանավոր է, իսկ այդ կնշանակի, վորպետք և յենթարկվել և մափառվ լսել նրա կոպիտ նկատողությունները... Հաճախ Մատուսենկոն միտք և անում այս տարրինակ կարգի մասին, վորի պատճառով ինքը մի կրթված, գրագետ, զինվորական աստիճանավորի կոչում ունեցող մարդ, ստիպված է լինում հպատակվել անկիրթ խույզան Գոլովլին:

ծիշտ և, հանրապետությունը կոչվում է բանվորա-գյուղացիական, իսկ Գոլովիկը—բանվոր և, բայց հոգու խորքում Մատուսենկոն այս բոլոր անունները—«Սոցիալիստական ժեղերատիվ Հանրապետություն», բոլոր այս գեղիզներն ու լոգունգները—համարում ենունպիսի պաշտոնական և իրենց եցության մասին վոչինչ չասող անուններ, ինչպիսին և թագավորի տիտղոսը, վորը Մատուսենկոն անգիր գիտե՞:

Մարտինովի գալը ընդհատում և Մատուսենկոյի խորհրդածությունները, և նրա քաղաքավարի գողջունին Մատուսենկոն պատասխանում և գլուխը խոնարհեցնելով և քաղաք ժահառվ:

Մարտինովը բոլորովին այն չե, ինչ վոր Գոլովկեց, յերեք
չի գոռում ու կարմրում է, յերբ պետք է լինում մի վորեհ պատ-
վեր տայ:

«Աղնվական կրթություն ունի, գիտանգիտում և սովորելը,— հարգանքով մաածում և Մատուսենկոն։ Իսկ Մարտինովը միշտ ել իրեն անհարմար ե զգում, իբրև ծառայելու պատրաստակամ Մատուսենկոն հանկարծ ստանում ե նրա պայովը և անձամբ բերում է տուն։

Ծառ ե մտածում Մարտինովը հեղափոխության, կոմունիզմի, իր կյանքի և մարդկության մասին և ամենեին չի նկատում, վոր ծառալելու պատրաստակամ, խոնարհ Մատուսենկոն վաղուց արդեն ուսումնասիրել է Մարտինովի ամբողջ ելությունը, ուսումնասիրել և է իրատեսակ հասկացել:

Այս Մատուսենկոն կամացուկ, քնքուշ ձախով հարցնում է
Մարտինովին. «Ինչու յեն մարդիկ աստծուն հովատում: Ի՞նչ ե իմ-
պերիալիզմը: Յերբ ե լինելու համաշխարհավին կոմունիստական Հե-
ղափոխությունը»: Մարտինովը վոգեսորվում է, սկսում և պատաս-
խանել հարցերին և Մատուսենկոյի մասին մտածում է. «Ուշիմ
տղա իւ... Միայն ինքնասիրություն և ինքնավատահություն քիչ
ուշիմ նա չգիտե, վոր Մատուսենկոն շատ ինքնավատահ է,
կյանքում իր ճանապարհը գիտե, գաղանի նման սուր զիտում ե
ամեն բան և Մարտինովի յերկար բացատրություններին բոլո-
րովին ականջ չի դնում:

Արմենական ազգական առաջնորդ է Արքա Տիգրան Մատենացին, թվում եր, վոր Հնար չպիտի լինի
Աշնանը, ձմեռնամտին, թվում եր, վոր Հնար չպիտի լինի
ձմեռն անցկացնել, բայց ահա անցավ, և Մարտինովը նորից
կանգնած ե կլանքի շնմքին. Գարունը լեկավ և Մարտինովը
հանկարծ անսովոր ուրախությամբ զգաց, վոր այդ գարունը, մեծ
քրոջ նման, գգվանքով փաղաքաց քնքուշ ձեռքով և համբուրեց
տաք համբուրով:

Այսոր Քաղբաժնին են զալիս զինկոմերը (վիրջին ըրչարա-
րական նամակը շատերը ճիշտ չէին հասկացել) և Համառուսա-
կան Զեկայի գումարտակի վինկոմը, մի գեղեցիկ, ջահել տղա,
կարմիր շալվարով և ֆրանս ֆրենչով, ըստ սովորության ամեն
մի փոքր բանի կասկածանքով և վերաբերվում, ամեն մի բանի
մեջ տեսնում և Քաղբաժնի բյուրոկրատիզմը և հրաժեշտի ժամա-
նակ անտարեր ծաղրանքով ասում ե. «Շատ բարի, ընկ. Մար-
տինով, գուք հրամայում եք—մեր գործը կատարելն ե .. բայց
ախր սա բյուրոկրատիզմ ե»: Յերեսում է ծառայակամ Մատուսեն-
կոն, թղթեր և բերում ստորագրելու, այդ միջոցին ել մի ուսու-
ցիչ կանգնել ե, թուղթ և տպել, թե չի գնալու աշխատանքի—
«գոտնաման չունի» և ցուց ե տալիս իր թրջված վալինկանե-

բը... Բայց այս բոլորը, վորոնց մանրամասնութիւններն իսկ առաջ պարզաբանել ե հեղափոխութիւնը, այսոր ձանձրալի յէ և անհետաքրթիք: Յեկ Մատուսենկոն շուտ-շուտ դուրս ե գալիս մուտքի առաջի փոքրիկ քարե պատշգամքը. վորի ձյունը հալել ե, և գոհունակությամբ աչքերը կիսախուփ նալում ե առկին:

Ճաշից հետո խորհրդացին աղմկալից ճաշարանում Մարտինովի համար անսովոր մի ազատ ժամանակ տիրեց. վոչ դասախոսություններ կային և վոչ ել ժողովներ. Ցեխուա և ուրախ փողոցով նա համբաքայլ գնում եր տուն, չեր նկատում, թե ինչպես թրջվում են վոտները, և իր ծանր քայլերով խանգարում եր չորսացող մայթերի վրա վեզ խաղացող մերեխաներին:

Գնում եր և ըստ սովորության մտածում: Մանկութիունից
ծանոթ տները, ձանձրացրած ցուցանակները և հարենի քաղաքի
գորչ ցանկապատերը զարթեցնում ելին նրա մեջ հիշողություն-
ներ անցած կանքի մասին, Սիրիր փախած ընտանիքի, գիմնա-
զիական ընկերների մասին, վոր մեծ մասամբ սպիտակ զվար-
դիականներ են, և տարօրինակ բախտի մասին, վոր բերել եր բուր-
ժուական ընտանիքի անհոգության մեջ մեծացած փոքրիկ աղա-
տին քցել կոմունիստական կուսակցության շարքերը, վորի աշ-
խարհահայացքը դարձել եր նրա աշխարհահայացքը, վորի մեծ
գործին նվիրված եր նա այնքան ջերմ կերպով, և սակայն կար-
ծես ապակյա մի պատ առանձնացնում ե նրան կուսակցության
շարքերից, դարձնում ե նրան միայնակ և ստիպում ե տառա-
պանքով տանջվել:

Մարտինովը մեքինայաբար տուն յեկավ, շինելը հանեց և, կարծես քնից արթնացած, նայեց չորս կողմբ:

Մահմակալ, անսպիռոց սեղան, վրան հացի փշտանքներ: Գրքերը աթոռի վրա, գատարկ և թափթփված, ինչպես մի անբնակ սենյակում: Ախը մի ամբողջ տարի Մարտինովը, խորասուզված աշխատանքի մեջ, ապրել եր այս սենյակում: Իսկ այժմ այդ սենյակն ատելի էր դարձել:

«Հեռանալ վորեմ տեղ,—մտածեց նա բարձրածայն,—բայց
ուր և ում մոտ»: Զի՞ վոր, չնայելով դեպի հեղափոխությունն
ունեցած իր անձնվիրաւթիւնը, նա կոմունիստների մեջ ընկեր-
ներ չունի:

Ամբողջ ձմեռվա ընթացքում մի անգամ միայն Մարտինովը
հուր եր լեղեկ Մատուսենկովի մոտ, վորը զրեթե զոռով քաշ
տվեց նրան իր տունը... Մարտինովին սպիտակ, տանու հացին

քսում եր դեղին կարագը, ազահաբար խմում եր հոտավետ, քաղցր սերուցքով թելը—ալսպես համով վաղուց եր վոր Մարտինովը չեր կերել և միամտաբար զարմանում եր. «վ՞րտեղից ե Մատուսենկոյին ալս լոլորը»:

իսկ կլորերես, սիլալիք Մատուսենկոն քնչքորեն ծիծաղում
եր, կուչ եթ ածում իր մանր աչքերն ու հարգանքով, բայց և
տան տիրոջ ինքնագոհության վորոշակի նըրութիւամբ հյուրասի-
ռում եղ Մարտինովին:

— Մեզը համեցեք, ընկ. Մարտինով: Կինս պարեհնկումուն
ե ծառաչում և այստեղ նրան շատ լավ պայոկ են տալիս: Այ,
կաթ վերցրեք, մեր սեփական կովի կաթն ե... Ըստանիքավոր
մարդուն թուլ ե տրվում ամեն բան ունենալ: Յես, գիտեք,
տնտես մարդ եմ, և ինչու համար յես ինձ սովոր տանջեմ: Ձի՞
վոր այդ մասին մեր ծրագրում, հը՝ հը՝, վոնչիչ չի ասված, հը՝
հը՝, ձիշտ ե, չի, ընկ. Մարտինով: Ես ինչ ե, դուք վոշինչ չեք
վերցնում: Գրուշա, հուրասիլիք մեր պետին,—հանաքով, բայց
խստությամբ ասում եր նա կնոջը...

Մարտինովը հայացքով հանդիպում եր Մատուսենկողի
կնոջը, լիքը կրծքով, կարմիր լերեսով, շեկ մազերով մի կին,
վորի բիբերի կանաչ խորքում տեսնում եր վոսկեգույն կրակը,
և այդ աչքերը խոսում եին սիրո քաղցրության, զգալական վա-
յելքների մասին, վոր Մարտինովը գեռես չեր ճաշակել: Ժպիտը
յելքների մասին, վոր Մարտինովը գեռես չեր ճաշակել: Ժպիտը

իսկ Մատուսենկոն իր բարակ ձախով շարուսափռու ու
գողտրիկ Մարտինովի ականջները մտցնել զպիկու չափ քաղցր,
կոկ խոռքեր, սախարին քսած հացի նման:

Յելլըն...
Յեկ Մարտիհնովը հասկացավ, վոր տեղ չունի գսալու, ՎՐ
ՆՈՒՅՆԻՍԿ Քաղբաժնում վոչ վոքի չի զանի, վոր այնողեղ այժմ
դատարկ սեղաններն են և վոտաբորիկ կանալք, սպասուհիները,

լվանում են փոշոս լինոլեումը։ Մարտինովը պառկեց իր կոշտ-անկողնի վրա, յերեսը կպցը բարձին, վոր չտեսնի իր անկարգ սենյակը։

Յեկ նորից հիշեց իր անցյալ կյանքը՝ վոչ թե վերջին ժամանակվա, հեղափոխությունից հետո, յերբ քաղաքական համոզմունքները տարրեր ճանապարհներով տարան իրան ու ընտանիքի մասցալ անդամներին, այլ վաղուցվա մանկությունը, տաքսինյակներում տափկնոցի խաղալը, մեռած մոր գգվանքները, տոնածառը և անդադար հոսանքն այդպիսի հանդիսաւ ու ուրախ կյանքի, իր կուշտ ճաշերով, ընթրիքներով և առավոտյան թերթով...

Բայց միթե այդ կանք եղ:

Յեկ բարձի տակից նա հանեց զործած, տաք շապիկը, միակ բանը, վոր մնացել եր նրան իրանց տնից, են տաք շապիկը, վորով նա, զրնգացնելով չմուշկները, վազում եր սահելու, —ախր այնտեղ, սահելու տեղում նա ծանոթացել եր նրա հետ... Ախ, կարոտ, կարոտ:

Աշքի անցնելով ամբողջ սենյակը, Մարտինովը տեսավ լեռինին նկարը, վոր նայում եր նրան խելացի և խիստ ծաղրալի աչքերով:

Յեվ պատկերացրեց նա այդ մարդու ամբողջ կյանքը և
ամաչեց: Վրան քցեց շինելը, զուրս իւկավ փողոց, վորի վրա
դարնանացին վերջալուկաը փռում եր եր իւրիներանդ սփողոցը:
Այժմ նա գնում էր ու եւստաց:

Յերազում եր ապագայի արևկոտ քաղաքների մասին, վոռոնք կախված են ողումն ինչպես աղվամազի թելեր ջրի մեջ, հասպիսա պալատների, ապակյա փողոցների մասին, մեզ հաշար տհաճ՝ բախտավոր, զեղեցիկ կանքով ապրող մարդկանց մասին:

Յեվ Մարտինովս զգում եր իրեն իբրև կառուցող նրանց լանքի, վորտեղ վոգելորդած և հրճվանքով կաշխատեն մարդիկ, շինեն դլութական, անծուխ գործարաններ, պալատների նման, իշայն թե նրանցից ել ափելի գեղեցիկ ու կենսուրախ...

Յեկ, սթավիլով իր լեռազանքից, Մարտինովը զարմացած նայում էր փոքրիկ տնակներին, խանութների անձունի և ծուռ ցուցանակներին:

Այս բոլորը—շրջապատել են ծանր լեկեղեցւն, վորի լուսամուտները վառվում են վերջին ճառագալթների վոսկով, վորի կտրին թառել են բազմաթիվ աշտարակներ, խզնուկ և անպետք

են սրբերի նկարները, և համկանալի յե դառնում, վոր այս փոքրիկ լուսամուտներով, խափար շենքերի մեջ մարդիկ չեն աշխատում, չեն ապրում, չեն զվարձանում, այլ ապագայի հպարտ մարդու համար մի անհասկանալի և ստորացուցիչ բան են կատարում, սողում են փոշու մեջ, իրենց իսկ հրեշտավոր ցնորդքների առաջ, վորոնք ծնունդ են հաղարամյա կեղտու և ծանր կցանքի:

Իսկ միքանի մեծ շենքերի վրա, գործարանալին կորպուսների, մեծ խանութների և դպրոցների վրա ընկած և առաջինթեք ձառագայթը զուրս լեկող կոմոնիստական արեի. Յեկ ամենաբանի մեջ այս արեի արտացոլումն է, հպարտ ֆասադների, պահապար լուսը հավաքող լայն հայելու ապակիների մեջ, շենքի ամրող նպատակահարմար վայելչութիւն մեջ զգացվում և մեր վաղվան որը:

Արեւ մայր մտավ, ամեն ինչ աղոս գուշն ստացավ, և Մարտինով արթնացավ իր ցնորքից, ցուրտ եր—բարձրացրեց ոձիքը և շտապ գնաց գեպի կարմիր զինվորների ակումբի կողմը, վորտեղ լեռեմն լեռնկուն նա մի բաժակ թեյ եր խմում առանց շաքարի: Գնում եր և մտածում այն մասին, վոր վազը պետք լիինի սկսել քաղաշխատակիցների մի գավառից միուսը փոխա- դրելու գործը:

Բոլորովին մթնեց, յերկացին միքանի աստղեր, և թեև ցուրտ եր, բայց այսուամենախնիվ այս գիշեր՝ գարունը մնաց քաղաքում, ջրով լցված սառած փոսերը փալլում ելին, իսկ մուժ խրամանդներում խօսով չում ելին առուները:

Մարտինովը գնում եր արագ քայլերով և այժմ վոչ մի բանի մասին չեր մտածում, լուսմ ել միանգամից և առուների խոխոջը, և կտրի ջրի կաթոցը, և չոր ճյուղերի խշոցը, և շոգեկառքի սուլոցը կայարանից: Բայց այս բոլոր ձախներն այժմ ծածկվում ելին մի ալ, ցած և անհանդիստ ձախնով. այդ՝ ելեքտրական կայարանի սուլիչն եր գոռում: Մարտինովը չհասկանալով, հրճվում եր այս կենդանի լեռաժշութիւնը, այս ձախների քմահուականից պատարկ էր, փոքրիկ տնակները հաճ գուգակցութիւնը: Փողոցը դատարկ եր, փոքրիկ տնակները հանգարտ, և միայն ակումբի մոտ հանդիպեց Մարտինովին շինելին շատապ վրան քցած մի մարդ, մոտեցավ Մարտինովին, ունեած հայացքով նայեց լերսին, և իրար ճանաչեցին, — հանդիպել ելին կուսակցական ժողովներում:

— Կասեց հավարի սուլոց ե,—հարցը մըուսը...

— Հավարի՞։ Ինչու, — զարմացակ Մարտինովը և հարցնելիս

արդեն հասկացավ ելեքտրական կայարանից յեկող մոտիկ և բարձրը գոռոցի նշանակությունը: Թվում եր, թե մեկը գոռում, սպառնում, ողնության եր կանչում...

— Հսում ես,—ասաց մյուսը,—յերկու ընդհատում յեղավ, շուտ դնանք կոմվաշտ:

Մարտինովի համար անհայտ չքացավ գարնան իրիկվա անդորր քաղցրությունը, ամեն բան դարձավ խորհրդավոր և մութ-թշնամական: Յեկ հարցուրավոր լուռ տները նման ելին թշնամիների, վորոնք թազցրել ելին գենքերը լայն սև շորերի ծալքերի մեջ:

«Չի՞ վոր այսոր պատերազմական գրություն ե»,—մտածեց բարձրաձայն Մարտինովը և հասկացավ, վոր այժմ արագ քալերով այս ոտար լուռ մարդու հետ նա գնում է գեղի տանջանք, դեպի մահ, վորոնք կախված են վերեից և ահա պատրաստ են հեղեղելու փոքրիկ լուռ քաղաքը:

Իսկ սուլիչն առաջվա նման վոռնում եր քաղաքի վրա, կայարանից նրան ձախնակցում ելին շոգեկառքերի ուժեղ խումբը և դեպովի սուլիչը, և վոչ մարդկային ձախների այս կանչերը զլորվում ելին հեռու քաղաքից դուրս ձուռնապատ անձայն դաշտերով, խաղաղ գյուղերի և ավանների վրայով:

Այս հրավերը տանջանքի և մահի յերկուուղիցն ավելի գորավոր եր, և քաղաքի բոլոր ծալքերից հավաքում ելին կոմվաշտ հարյուրավոր մարդիկ, անցնելով նենդ, ծուռ նրբանցքներով, սառը թշնամական, լայն փողոցներով: Յեկ Մարտինովը մտավ կոմվաշտի լայն, լապտերով լուսավորված բակը: Շտապով, խումբ խումբ, մեկը մյուսի հետեից լցվում ելին այնտեղ կոմունիստները, արագ գասակներ և ջոկեր ելին կազմում:

Մարտինովը նույնպես շարքի մեջ մտավ, դեպի աջ ուղղվեց և նրա հուզված հոգին ել հավասարվեց տողանին:

Կանգնած եր նա ձախ թեռում, գարպասի մոտ, նրա կողքով մտնում ելին բակը, լապտերը լուսավորում եր մարդկանց յերենները:

Մի քանիսի դեմքերը շփոթված-լարված ելին, մյուսները հանգիստ մտահոգ, վոմանք անսահման հուզված, ուրիշների դեմքերին եր վառվում եր վոգերության հզոր կրակը, վառվում եր պայծառ, ինչպես խարուցվը՝ ամառվա հանդարս գիշերին: Ներս են գալիս կանալք և աղջիկներ. մի քանիսը գեռ ժամանակ չեն ունեցել հեռացնելու իրենց յերեսից նազիկ խորամանկության

ժպիտը, ուրիշները, մոռանալով իրենց մասին, մտահոգված փնտում են աչքերով վորեւ մեկին, մյուսներն ել ջղախորեն և բարձր ծիծաղում են:

Իսկ ահա մեկը—զեռ բոլորովին յերեխա—կարմիր լիրեսով, անրեխ, կաշվե բաճկոնի տակից գուրս պրծած առողջ մերկ վզով, անհոգ ժպիտով, ձայն եր տալիս ընկերոջն ուրախ:

— Հը, Միտկա, չարդում ենք բանդիաներին, թե չ.՝ և անհայտացավ մութ շարքի մեջ...

— Ծխում եք, ընկեր, հարցրեց մեկը Մարտինովին և Մարտինովը տեսալ իր կողքին հանգիստ, հասարակ մի դեմք, վաղուցվանից քիչ ծաղկատար: Ճանաչեց—պարենկոմիցն եք: Ստալմախովը:

Իսկ սա արգեն սղմում և ձեռքը և ասում.

— Բարե, ընկ. Մարտինով, յս ձեզ չճանաչեցի:

Յեկ միանգամից Մարտինովը գորշ մեծ սավանով ծածկեց իր անհանգիստ մտքերը, հուզմունքը և ամեն բան, ինչ վոր խոնված եր հոգու մեջ: Հանգիստ կերպով խոսակցության մեջ մտավ:

— Զեմ ծխում, ընկեր... Իսկ ես ինչ տագնապ ե, չգիտե՞ք:

Շարքերում մարդիկ աղմկում ելին: Նրանք բոլորն ել Մարտինովի նման, շտապով ծածկեցին կասկածները, վախը և հուզմանիցուր սիրա և կձուլվի կավի ընդհանուր սիմֆոնիալի հետ...

— Զգանստ, հուզեց շարքերում:

Լուցին շարքերը, ձգվեցին, ինչպես լարեր: Խփիր այդ լարերին, և հզոր վրգերությամբ կակսի յերգել յուրաքանչյուր սիրա և կձուլվի կավի ընդհանուր սիմֆոնիալի հետ...

Ամեն մեկն ել լուս ե, նայում, շարքերի յերկանությամբ գնում են յերեք հոգի: Կարառւլովը, կիմինը, թորեկոն:

Յեկ վորոշակի, պարզ հնչում և կիմինի ձայնը.

— Ընկեր կոմունիստներ: Յերկար խոսելու բան չկա, դուք բոլորդ այսոր կարգացիք լրագրում և լսեցիք յերեկ ժողովում, վոր մի խնդիր կա մեր առաջ—ցանքի համար սերմացու բերել: Վառելա-Սերմացուն բերելու համար—պետք են աշխատող ձեռքեր: Պոր-նյութը ձեռք քցելու համար—պետք են աշխատող ձեռքեր, վոր այժմ անդորձուաբույժների և պարագիտների ձեռքերը, վոր այժմ անդորձուաբույժների համարական աշխատող ձեռքեր: Անհամանեշա և կատարել խուսական քառական բառերի մեջնքին, վորոնց առանց քաղաքի գարկությունները բռնիւ ամենքին,

կլանքին վնասելու կարելի կլինի վերցնել և ոգտագործել վառելափայտ մթերելու համար. այդպիսիներին մենք այսոր կվերցնենք միքանի որով, և, իդեպ, կմաքրենք քաղաքը հականեղափոխական տարրից: Ընկ. Կարառուղովը նշանակված է իբրև զեկավար ամբողջ շուրջկալի, նա ձեզ կբաժանի քաղաքամասերի վրա և կտա հրահանգներ: Աշխատեցեք համերաշխ, լեզեք զգուշ և աչալուրջ...

Հատ հատ փրազներով, կարծես հրամանատարություն անելով, սկսեց խոսել կարառւլովը: Բայց Մարտինովը նրան չեր լսում: Ամենորդասովորական ելին թվում նրան կոմվաշտի մեծ բակը. և հավաքվածների ծանոթ գեմքերը: Ինչանակի ուրեմն, քաջագործություն չի սպասվում, այլ միայն անքուն գիշեր: Իսկ մարմինը, ազատված տանջանքի և մահվան սպասումից, ուժգնորեն և աննկատելի հրձվում եր:

Մարտինով ընկավ մի լեռակի մեջ, վոր նշանակված երբ քնակարանները ըրջագայելու համար, սրա հետ ելին իր հաստ հարեանը և Ստալմախովը: Յեվ, իհրը նրանք լերեքով անցնում ելին դատարկ փողոցով, Մարտինովը հարցըրեց Ստալմախովին.

— Իսկ վրայուն է մեր շքանը, հեռած չեմ:
— Վհչ, ենքան ել չե, ելի չորս թաղ կա... Գիտեք, Քրիստոսի ծննդան յեկեղեցուց մինչև փոստը:

Յեկ Մարտինովը հասկացավ, վոր այսոր ինքը կլինի հին
յեկեղեցու մոտի են տանը, ուր առաջ ապրում եր և այժմ ել ապ-
րում է Նադիա Ռոստովցեան, են տանը, վորտեղ նա անց եր
կազորեւ իր անգլալ կրանքի լավագույն որերը:

Նադիան նրա սերն եր,—մի սեր, վորին կարելի լե դավա-
ձանել բայց վորը մոռանալ յերեք չի կարելի։ Իսկ ինչու, այլ
կերպ ասած, ուրախ մանկահասակների ամբոխի միջից, վորոնց
հետ մեծացել եր ինքը, Մարտինովը հատկապիս նրան ընտրեց։
Չե վոր Նադիան են ժամանակ թվում եր, թե տգեղ ե. թուխ,
այտոսկըները գուրս ցցված դեմքով, մի քիչ տափակ քթով,
միայն կարմիր շրթունքներն ու մեկ ել յերկար բացվածքներով
ու աչքերն ելին, վոր դարձնում ելին նրան տարորինակորեն
հրապուրիչ։

Իսկ հետո դարձավ նա մի հմայիչ աղջիկ, իր ժպիտները
միայն Մարտինովի համար պահող, գյութող դեմքի խելացի և
սիրալիր գեղեցկությամբ և շարժվածքների զուսպ ու խիստ վա-
յելչությամբ... Յեզ այն ժամանակ Մարտինովը հասկացավ, վոր
ուրիշ սեր, ուրիշ շրթունքներ իրեն պետք չեն:

Նրանց ընտանիքին չեր սիրում, վորը հպարտանում եր իր կնդապետ-հոր ազնվականությամբ, հորը՝ նմանվող լերիտասարդ պճնասեր սպա վորդիներով,—և այնուամենայնիվ լերեկոները Մարտինովն անց եր կացնում նադիալի մոտ, լսում եր նրա գանդաղ, խելացի խոսքերը, արտասանում եր նադիալի համար զրված իր առաջին վոտանավորները:

Այնքան ել վաղուց չեր այս, և ի՞նչպես անվերադարձ հեռու չեր թվում այս բոլորը։ Յեվ յեթե կա անմահություն, ապա յերեկ մահացած մարդու հոգին, հավանորեն, այսպես և հիշում իր անցյալ կյանքը։

Նրանց մեջտեղ կանգնեց հեղափոխությունը։ Նադիան չեր հասկանում այդ հեղափոխությունը, լսում եր Մարտինովի ջերմ խոսքերը, ժպտում եր և, բարակ մատների մեջ թղթի կա- շորի մի կտոր խաղացնելով—նա այդպիսի սովորություն ուներ—պատասխանում եր. «Եդ բոլորը յեղել ե, Վալորիա. ամեն մի հեղափոխություն ել սկսվում է ուրախությամբ և յերկնքի արքա- յությունը յերկրի վրա թագավորելու ակնկալությամբ, իսկ վերջն այնքան տանջանքներ ե բերում, վոր այդ հեղափոխություններն իրենց չափանիւնների գինը չեն հանում»։

Յեվ հեղափոխության զարգացման յուրաքանչյուր մոմենտ ավելի ուժեղ եր հափշտակում Մարտինովին, իսկ Նազիան դառնում եր ավելի կրոնասեր, ընկղմվում եր Հովհաննու Հայտնության ընթերցանության մեջ, սպասում եր աշխարհի վերջին, — և նրանք դառնում ենին միմյանց ավելի ոտար ու անհատականալի:

Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ Մարտինովը
բայց եկեղեցիների հակառակորդն եր և նույն իսկ յերկու շարթով ձեր-
բակալիքի եր: Բայց այդ ձերբակալությունը վոչ միայն չմոտեց-
րեց, այլ նույն իսկ ավելի հեռացրեց նրանց իրարից:

Յերբ նա բանտից գուրս լեկավ, Նադիան հանդիպեց նրան իբրև մի նահատակի: Խոկ Մարտինովը միայն հայացքների մի- քանի տարրերություններ ուներ բայլշեփեկներից:

Այսուհետեւ շուտով Մարտինովը դադարեց այցելել Նադիա-
լին, — Նրան շատ ծանր եր գալիս այն կուրք ատելությունը, վո-
րով վերաբերգում եր Նադիայի ամեռողջ ընտանիքը դեպի Խոր-
չը դաւին իշխանությունը և հեղափոխությունը:

Քաղաքացիական կոփվը նրանց կարձ ժամանակով բաժանեց իրարից, իսկ հետո, լերը Մարտինովը, իրրև կոմունիստ, հաղթական Կարմիր բանակի հետ վերադարձավ քաղաք և իմա-

վերջին անգամ նադիալին տեսալ սա փողոցու, վերջին անգամ նադիալին տեսալ սա փողոցու, վերջին թափվող ձևան սպիտակ փայլվելող վարագույրի յետելից վերջին թափվող ձևան սպիտակ փայլվելող վարագույրի յետելից հանկարծ հայտնվեց նադիալի վայելչակազմ կերպարանքը, ահա մոտ ե, մոտ ե նրա գեմքը, մազերի մեջ ձյունի փաթիլներ, սկ աշքերը խորանանկ—իրկար ճեղքվածքով: Տեսալ Մարտինովին— աշքերը խորանանկ—իրկար ճեղքվածքով: Տեսալ Մարտինովին— աշքերի մեջ վառվեց ուրախությունը, ապա այդ աշքերը պատեցին վշտով—անցալ Մարտինովի կողքից, և հիշելով սիրելի, միակ, ցանկալի

սիրելի, միակ, ցասպալի
Նաղիսին, Մարտինովը սիրո քաղցր խոռքեր շնչաց, և ուրիշ-
ների համար անլսելի, ընկնում ելին այդ խոռքերն անզարձ,
խոր ջրհորի մութ ջրի մեջ, ինչպես մարգարիտներ։
Այսպես մի ամբողջ տարի ապրեցին նրանք միենուն քա-
ղաքում, բաժանված միայն միքանի թաղով, մոտիկ, բայց և մի-
հանուն ժամանակ հեռու իրարից... և առաջանաւուրբ խո-

Ըսկերները դնում ելին լուս, արագ, և յուրաքանչյուրը՝
ըսկերները դնում ելին լուս, արագ, և յուրաքանչյուրը՝

Ստալմախովլը:
— Անկյունի՞, — այս, ահա կանգնած ե կարմիր աղյուսեա-
տունը, և ծածկված լուսամուտների փեղկերի արանքներից ներս
ին ցայտում բարակ գգվող ճառագալթները, ինչպես այն ժամա-
նակ, հնումբ...

— Վահ, լնկ. Ստալմախով, իս ևս առւնը չստ գու ու ի
եմ ձեզ, դուք զնացեք, — և բանելով սառը տարակուսող Ստալմա-
խովի թևից, շնչաց. — դուք իրկուսդ մտեք ալզտեղ. . . Այստեղ
իմ ծանոթներն են ապրում... ինձ համար անհարմար ե... Յես,
էտասիկ, ներողություն եմ խնդրում...

իհարկե, սորովությունը... Յես մոռացել ելի, վոր դուք... ուղարկությամբ և ծաղրից եք, — փնտինթաց Ստալմախովը, ուշագրությամբ բանքով նայելով Մարտինովի վրա:

— Գնանք, ընկեր, — ասաց Ստալինովը յերբորդին, և
նրանք սկսեցին ամուռ ծեծել գուռը:

Մարտինովի գլխում մեկը մյուսի իւսեկից սլացան մտքերի
խմբեր և, յերբ արդեն ճռոաց գահակը և վախեցած ձայնը հար-
ցրեց. «Ենչ եք ուղում, ի՞նչ կա», Մարտինովը, սրտի խփոցից
շունչը կտրվելով, ինքնասպանություն գործելու վորոշած մար-
դու հուսահատությամբ, մտավ մեծ բակը և Սաալմախովը հետ
նայեց նրան:

Մութ միջանցքով մտան նրանք Մարտինովին ծանոթ սեղանատունը. այստեղ, լուսամփոփի լուսավոր շրջանի տակ, թե կիմ խմում: Այնքան ծանոթ եր Մարտինովին ամեն ինչ այս սեղանատառը:

Ահա ինքը գնդապետ Խոստովցել, փոքրիկ, չորացած որ
ծերուկ մաշված գրենցով, վորի վրա նոր մահուցը կահաչին և
տալիս ուսերի են տեղերում, վորտեղ յերբեմն կարլված են յեղել
ուսադիրները: Այժմ նա ծառացում ե զինկոմատում և դողդողա-
ցող ձեռքերով շատապում ե հանել վկալականը:

Ահա նրա կինը, գեղեցիկ, բարձրահասակ մի կին, գուշատ
դեմքով և նույնապիսի աչքերով, ինչպես Նադիայինը, և վորը յիշ-
րեմն այնքան սիրում եր Մարտինովին։ Առանց աչքերը բարձ-
րացնելու շարունակում և նա սրբել բաժակները։

իսկ այնտեղ, ուղիղ անկյունումը, նադիան և... վաղուց
Մարտինովը չեր տեսել նրան հասարակ տանու հագուստով։ Ա-
հա նադիան վերկացավ աթոռի վրայից, նա հուզված և բար-
կացած, —չեր վոր Մարտինովը ճանաչում և այժմ ել դեռ թան-
գագին դեմքի լուրաքանչյուր գիծը, լուրաքանչյուր շարքումը։

Նադիան ճարպի հետևից աշխատում եւ տեսնել ներս մտնող՝
ներին, նայում եւ ուղիղ Մարտիսովին։ Ճանաչեց, զունատվեց։

Մարտինովը բարեւում և նրան... «Ի՞նչու կարիք չկա...»—
ինչ վոր մի բան խոսում և նրա հոգու խորքից, բայց վոչ, նա
արդեն զլուխ տվեց։ Նադիան թեքում և դեպի մայրը, ինչ վոր
բան և փսփսում նրա ականջին, և նա յել և նախում Մարտինովի
կողմբ։

Իսկ սա ով ե Նադիայի կողքին, այսպես բարձրահասալ գուղեցիկ, խելացի մոխրագույն աչքերի հանդուզն հայացքով: Սաալմախովին ուշագրությամբ զննում ե Նրա փաստաթղթերը: Գուցեաս Նադիայի փեսացնեն ե...

— Եղիշե, Վլադիմիր Սերգեևիչ, դուք վույլ չեք

ճանաչում, — լսվում ե Նադիալի մոր հպարտ, թեթև կերպով շը-
շնջացող ձայնը: — Տես, Անդրյուշա, չե՞ վոր սա Վաղիմիր Սերգե-
ևիչն ե, — դիմում ե նա ամուսնուն:

Մարտինովը ծաղր ե զգում այս խոսքերի մեջ: Ռոստովցե-
մի գեմքին յերեսում ե զարուցիթի և վախի խառնուրդ: Ընկերների
կողմից՝ զարմանք և ծաղր:

Բայց Մարտինովը սղմում ե Ռոստովցեմի չոր, տաք ձեռքը,
Ռոստովցեալի պասսիվ մատները և պատասխանում ե նրանց հար-
ցերին, վոր ծնողներից, Սիրիրից, վոչ մի լուր չկա, և արդեն
Նադիալին ե մեկնում ձեռքը, բարձրացնում ե աչքերը նրա վրա,
հանդիպում ե նրա ջերմ հայացքին .. Նադիալի գեմքին սահում ե
անցողակի մի ժպիտ, վորին իսկույն փոխարինում ե լացի գրի-
մասը, և նա շտապ դուրս ե գալիս սենյակից:

Իսկ Մարտինովը լուսմ ե իր ականջի տակ Ստալմախովի
հաստատակամ ձայնը: «Ճնաւ վերջացրեք, մենք արդեն գնում
ենք»... Յեկ տնից դուրս գալով, Մարտինովը շփոթված բացա-
տրում ե, վոր սրանք իր վաղուցիւ ծանոթներն են... Շատ րեակ-
ցիոն ընտանիք ե...

— Հա, գիտեմ, — ընդհատում ե Ստալմախովը, — անցած
գարնանը նրանց տղին գնակահարեցին — պորուչիկ Ռոստովցեմին:
Կասկածելի մարդիկ են: Հիմա լիլ մի զինսպեց եր նստած նրանց
մոտ: Ազգանունը — Ռեպին: Բայց հրա թղթերը բոլորն ել կար-
գին են, քաղաքի պարետի նշանով: Իսկ ձեր ազգականները կոլ-
չակի հետ են փախել:

Յեկ Մարտինովը բացատրում ե շփոթված: Ախր ինքը բուր-
ժուական ընտանիքից ե՝ հայրը — կապիտալիստ եր, տեղական
կաշեգործարանի տերը: Ընտանիքն այժմ Խարբինումն ե, բայց
ինքը, ինարկե, ընտանիքի հետ կապը խզել ե:

Իսկ Ստալմախովը լուռ ծխում ե, նրանք մտնում են հե-
տեղալ տունը, և նորից նրանց հանդիպում են վախկոտ հարցեր.
«Ի՞նչ եք ուզում»: Յեկ Մարտինովը, մեքենայաբար ստուգելով
լուղուված փաստաթղթերը, մտածում եր այն մասին, վոր Նադի-
իալից արդեն ձեռք պիտի քաշի, բայց և վոր իր քննութիւնը
դաշտագավ և արժանի չե կոմունիստ լինելու: Բայց ինչի՞ հա-
մար ե Ստալմախովը նրան արհամարհում:

Իսկ Ռոստովցեների տունը կրկին հանգիստ ե, և նորից
նստած են բոլորը թեյի սեղանի շուրջը — չկա միայն Նադիան —
և Ռեպինը, տանտիրուհուն տալով դատարկ բաժակը, հար-
ցնում ե:

— Ես կոմունիստը, վոր նոր հստեղ եր, ձեր ծանրթն եւ
— Այն, — պատասխանում ե տան տիրուհին, — լավ ընտանի-
քից ե, գիմնազիա յե ավարտել, առաջ հաճախ եր լինում մեղ
մոտ, իսկ այժմ, իհարկե...

— Միշտ ել ինքնահավան ու հանդուգն լակոտի մեկն ե
յեղել — կծու կերպով ընդհատում ե նրան Ռոստովցել, — Ընկել ե
ևս լրիբերի հետ: Հիմա լիլ անամոթի նման հանդգնել ե գալ մեր
տունը: Ախր նա առաջ անտարբեր չեր գետի նադեգան, դրա
համար եր, վոր սա փախավ: Նադիալից, — բարձր կանչում ե նա, —
արի այստեղ:

— Անդրյուշա, — հանդիմանորին ասում ե Ռոստովցեան, —
քան մի ասի նրան, կարիք չկա:

Իսկ քննելուց առաջ Նադիան ավելի ջերմ, քան միշտ, աղո-
թում եր իր Վալողիալի համար, — վոչ այն Վալողիալի, վոր շատ
տարիներ առաջ սահարանում համբուրում եր իր շրթունքները, վո-
րի նամակներն այժմ ել պահված են նրա գզրոցում, վոչ այն
կապուտ աչքերով, ասողը կարմիր յերեսով և ուրախ բարձր ծի-
ծագով գեղեցիկ յերիտասարդի, այլ հիմիկլա, մի տեսակ նոր, նի-
հարած, մեծ աչքերով, այնպես, ինչպես տեսել եր նրան Նադիան
վերջին անգամ, հանդիպելով մի անգամ, մի ձյունափալ ձմեռվա-
որ խորհրդացին հիմնարկություններից մեկի մուտքի մոտ, և նը-
կատել եր, վոր նրա կոշիկները պատուված են և նրանները կա-
պած են կոշիկներին նոր թոկով:

Աղոթում եր, հիշում և լալիս: Նադիան նրա սերն եր ու-
զում, ուզում եր իսկական ջահել, ուրախ կյանք, բայց նրա աչ-
քերը կապած ելին, և նա չեր կարող կանգնել այն լուսավոր
ճանապարհի վրա, վորով դնացել եր Մարտինովը, և աղոթում եր
նա մեղագոր Վադիմիրի հոգու փրկության համար, և հուսակը-
տուր խնդրում եր պահպանել նրա կյանքը:

Վողրալով, գլուխ եր խոնարհում նա աղոտ կանթեղեների
և սրբերի մուալ պատկերների առաջ, իսկ մայքը հարեան սենյա-
կ սրբերի մուալ պատկերների առաջ, իսկ մայքնած և զռան մոտ, լուռմ ե,
կում, արդեն կիս ժամ ե, վոր կանգնած է զռան մոտ, լուռմ ե,
թե ինչպես ե լալիս աղջիկը և ինքն ել լալիս ե անոգնական:

Իսկ քնած քաղաքում առաջ եր գնում միքանի հարյուր կո-
մունիստների ուրախ աշխատանքը: Դատարկ փողոցների մեջ
կանգնած ելին պահակները, քաղաքում լվում եր պատերի ձայ-
կանգնած ելին պահակները շըջում ելին շըջանները և ամեն տեղ
նը — շըջակալի գեկավարները շըջում ելին շըջանները և ամեն տեղ
ընկերների յեռակները, տաս-տասնեհինգ ըռպելով այս

ու այն տունը, դուրս ելին բերում դարպաներից վախեցած և քնատ տղամարդկանց, հանձնում ելին նրանց պահակներին, իսկ սրանք ել ուղեկցում ելին նրանց մինչև շուրջկալի կենտրոնական շտաբը, ուր նրանց ցուցակագրում եր ու հարցաքննում, պարզում եր նրանց ով լինելը լուակաց Գորնիխը, վորը չեր- բորդ որն եր, վոր չեր քնել:

Զահել, ուրախ արել դուրս եր գալիս, յերբ Մարտինովը, հոգնած, գնում եր տուն: Գլուխը ցավում եր, և ոտար տներ մըտ- նել դուրս գալուց նրան թվում եր, վոր աղտոտվել ե, և աչքերի մեջ փայլում եր զիշերվա ընթացքում այցելած սենյակների կալեշ- դոսկոպը:

Իր բնակարանի մոտ, պատի վրա նա մի պլակատ տեսավ. տրեխներով գյուղացուն պաշտպանում եր կարմիր բլուզով մի կարմիր զինվոր: Գյուղացին վարում եր անբնական կանաչ արտը, և Մարտինովը թշնամանք զգաց դեպի այդ սրբիմիտիվը, կոպիտ գույները և վուլգար կոնտուրները:

ԳԼՈՒԽ IV

Կարմիր զինվորների ուսուցչունի լիզա Գրաչեան, առանց ուշադրություն դարձնելու անձրեի ջբերից գոյացած լճակներին, վազում ե փողոցով, վախնենում և ուշանա շարաթորակից և ուրա- խանում ե, տեսնելով անկյունից ընկերների ու, աղմկալից բազմու- թյունը: Նա կարմահասակ ե, նիհար, միշտ տխուր և լուակից, իսկ յեթե պեպենոս յերեսին ել, յերեմին, խոտի վրայով սահող արեի ճառագայթի նման մի ժպիտ և փայլում, այդ ել մի բոպե միայն, հետո նա հանդարտում ե և վախեցած չորս կողմն և նա- յուն: Նա կարմիր զինվորներին թվարանություն և դասավան- յուն, և նրա զիլ ձայնը, վոր մի ժամանակ գեղեցկություն եր դում, և նրա զիլ ձայնը, վոր մի ժամանակ գեղեցկիալի յերգեցիկ խմբին, վոր- տալիս այն հեռավոր քաղաքի գլուխազիալի յերգեցիկ խմբին, վոր- տեղ նա սովորում եր, հնչում և այժմ ամեն որ զինավոր փողոցի վրա զանվոր խանութի հայելու նման մեծ լուսամուտների յետե- փից: Այստեղ և գտնվում նրա գպրոցը:

Աշխարհում ամեն բանից նա վախենում է: Ծնողները վա- զուց մեռել են, և նա մեծացել և ոտարների մոտ, վորտեղ նրա կերած ամեն մի պատառ հացը յերեսովն ելին տալիս: Վախը գար- ձել եր նրա սովորությունը. վախը բռնում եր նրա կոկորդը, յերբ նա խոսում եր մարդկանց հետ, վախն եր, վոր ստիպում եր նրան ամեն յերեկո ծնկաչոք աղոթել անիմանալի, գարձալ ահա- վոր, բայց միայն ամենատեսամեն բան ներող, բարի մի ելակի:

Սկզբում նա կարմիր զինվորներիցն ել եր վախենում, գա- սերին կարմրում եր նրանց առաջ, վորոնք լուռ ելին, ուշադիր, բայց կարծես թաքուն մի բան ելին խորհում, և ամեն անգամ սպասում եր, վոր մի խաղ կամրքեն իր գլխին: Նրա ձայնը դո- ստում եր և կտրվում, նա վախենում եր զաս հարցնել իր աշա- զում եր և կտրվում, նա վախենում եր զաս հարցնել իր աշա- զում եր և անձկությամբ սպասում եր զասի վերջանալուն:

Բայց մի անգամ, յերբ նա փետրվարի քամուց սառած ձեռ- քերով տուն եր քաշ տալիս իր պայտկը, նրան մոտեցան յերկու բարձրահասակ կարմիր զինվոր—նրա աշակերտները: Նա ըստ կերպներին և անձկությամբ սպասում եր զասի վերջանալուն:

տաշչա մի հսկա, քաղցրությամբ առաջարկեց ոգնել, և առանց սպասելու նրա թուլտվության, թեթև կերպով պարկն ուսինքց:

Դրանից հետո նա կապվեց իր աշակերտների հետ, նկատեց նրանցից յուրաքանչյուրին, սիրեց իր գործը և աշխատեց իր դասավանդությունը դարձնել ավելի պարզ և մատչելի:

Սկսեց հաճախել կարմիր դրամասի ընդհանուր ժողովներին և ուշադրությամբ լսում եր զեկուցումներն ու ճառերը, թեև շատ բան չեր հասկանում:

Առաջ նա հեղափոխությունից վախենում էր, վորովհետեւ ընդհանրապես վախենում եր ամեն մի բարձր, ուժեղ, սիրո և ատելության վառ զույներով արտահայտվող բանից, իսկ այժմ սիրելով և հասկանալով իր աշակերտ կարմիր զինվորներին, նա այդ սիրո միջոցով ըմբռնեց հեղափոխությունը: Հեղափոխությունը նա հասկանում եր յուրահատուկ ձևով: Նա կառուցեց իր հեղափոխությունը և իր կոմունիզմը, և Քրիստոսը, նազարեթյի հյուսնի վորդին, վորին նա առաջ ազոթում եր, վորպես յերկնաշխին թագավորի, նոր նշանակություն ստացավ նրա համար, — նա իջավ յերկիր և գարձավ հովանավորովը բոլոր հեղափոխականների, մարդկային յերջանկության համար կովող բոլոր մարտիկների:

Նա այժմ լցվեց յերկուղած հարգանքով գեղի կոմունիստները, սկսեց ավելի հաճախ լինել նրանց շրջանում, բայց յերբեմն նրանց արարքները նրան տարակուսանքի մեջ ելին քցում:

Հատկապես շփոթեցնում եր նրան Համառուսական Զեկայի գումարտակի զինկոմը, վորտեղ նա դպրոցում պարապում եր. «Յեվ ինչպես են եսպիսիներին կուսակցության մեջ պահում», — մտածում եր նա, նայելով նրա Փրանտ Կողիներին, կարմիր գալիք շալվարին և հաճախ լսելով նրանից մերահիշոց:

Ապրում ե Լիզան Սենատորի տանը, ունի իր ձեռվ լուցկու տուփի նմանող մի յերկար և նեղ սենյակ: Սենյակում կահ-կարասի չկա, միայն մի մահճակալ ե—տախտակները վերմակով ծածկված, — մեկ ել մի մեծ կիսաշոր տույա, մի տարորինակ ծաղիկ, վոր նման ե քմահաճորեն ամեն կողմ աճած տոնածառի: Տիկին Սենատորը փորձել եր այդ ել հանել սենյակից, բայց ծաղիկը դունից չեր անցում և դրա համար ել վողորմածարար թողնված եր Լիզային: Տույան սառնամանիքից թոշնել եր, վորովհետև ձմեռը սենյակում շատ ցուրտ եր լինում, և, յերբ Լիզան առավոտն արթնանում եր,

յերբեք չեր խմանում, թե ժամի քանիսն և. միակ սառած լուսամուտից լուսալ շատ աղոտ կերպով եր ներս թափանցում:

Սովորաբար լիզան առավոտան թեև չի խմում: Բայց այսոր շաբաթորդակ՝ գնալուց առաջ, ցանկացավ մի տաք բան խմել: Խոհանոցում տանտերերը քցել ելին ինքնայեռը, խողովակն աղմկում եր, յուղը թավի մեջ ձնձրթում, տիկին Սենատորը բլրթներ եր զինում, և խոհանոցի բուրմունքները հասնում ելին մինչև լիզայի սենյակը:

Պետք ե մի քիչ ջուր, մի փոքրիկ թելաման, բայց խընդրելը սարսափելի չ...

Ախր իրենց ամբողջ ատելությունը դեպի անհասկանալի ուժը, զեսի կարմիր զբոշակները, պլակատները և հիմնարկությունների տարրորինակ անունները, իրենց ամբողջ քենը, վոր պետք և թագցնել անխնա դաժան և անբարտավան կոմունիստներից, քենը, վորը պետք և քողարկել պարկեշտ խոսքերով, պարոնալք Սենատորներն առանց ծածկելու կարող են միայն անպաշտպան և խեղճ լիզային ասել, վորն իր աղքատությամբ ատելություն ե միայն հարուցանում:

Շարունակ աղոթում ե աստծուն, բայց ինքն ել... եղ կարմիր բանակալին լրբերին դաս ե տալիս, գյաղաներ... ի՞նչ ե սովորցնում: Թալան:

— Յեվ դեռ աստծուն ել աղոթում ե, — մարդու ասածը հաստատում ե տիկին Սենատորը, — դե, պարզ ե, կոմիսարի հետ ե ապրում:

Ակսես ելին զրուցում նրանք խոհանոցում, յերբ լիզան վախկոտությամբ բանալով դուռը, խողում ե. «Ճի կարելի արդուք մի քիչ տաք ջուր», և փոքրիկ թելամանը դողում ե նրա ձեռքին:

— Ճի վոր մենք բուրժուաներ ենք, և դուք բուրժուաներից բառն եք խնդրում. թալանք ելի, թալանք, — ճշճալով պատասխանում ե տիկին Սենատորը, իսկ Ռաֆայիլ Անտոնովիչը միարանելով ձայնակցում ե, — Իհարկե, թալանք, մի բան վոր կապվել եք եղ ավագակների հետ... Բայց կզա ժամանակը, ժողովուրդը վեր կկենա և ձեր եղ ավագակային խմբին մեկ մեկ կմորթուի:

Յեվ միայն «Ճշճարիտ չե», կարող ե ասել Լիզան: «Ճիշտ չե կոմմունիստները լավ մարդիկ են... Նրանք աղքատների կողմն են...»

Լիզան վիրավորանքից լալիս ե և շտապով վազում ե սանդուղքներով ցած, շտապում ե փողոց:



Լիգան շարքի կանգնեց թե չե՞ Քաղըաժնի բջիջը շարժվեց, քայլեցին անկարգ, ծիծաղելով և խոսելով, դուրս լեկան գլխավոր փողոցը և իրենց կուսակցական լոգունով ալ-կարմիր գրությանունցին ուրիշ գրոշակների շղթային: Ահա դեպովի բանվորները տանում են 1917 թվից պահպանված իրենց գրությանունը՝ կոխված առաջարկիչները, գորշ գեմքեր, կուսակցական ահա «Յերիտմիությունը», պատանիների փոքր, ազմկալից մի խմբակ, ահապին գրոշի տակ, վորի վրա նկարված և անհավանական մեծության մուրճով զնդանին հարվածող մի բանվոր:

Քայլում ելին և անհամերաշխ յերգում ելին հեղափոխական յերգեր, մի տեղ աններդաշնակ «Խնտերնացիոնալը», իսկ կողքին կոմունալ ճաշարանի բանվորուհիները ձղճացնում ելին «Վարչականական»:

Արեն ստվերավորված եր ամպերով, յերբ Քաղըաժնի բջիջը, Քաղըաժնի մյուս բջիջների հետ, միասին, մոտեցավ քաղաքավին պարտիզին: Սղոցները և կացիններն աղոտ փալում ելին մարդկանց ձեռքին, քաղաքավին պարտեզը թափանցիկ եր, ինչպես ժանյակ, սև ագոռավերը կոկում ելին բարձր ու մերկ ծառերի վրավից:

Այս անկարգ, իր զանազանակերպության մեջ գեղեցիկ, ծառերի անտերև զանգվածը պիտք եր վերածել վառելափականի համաշխափ կտորների:

Մի ժամանակ Մարտինովն այս քաղաքավին պարտիզում, ահա այստեղ, հետին ստվերաշատ ծառուղիներում, հուլիսան անուշաբուր յերեկոներին զրոսնում եր նադիալի հետ: Փնտուց և աչքերով զտավ այն ծառը, վորի կեզեի վրա, զեռ գիմնազիավի երդ գասատան աշակերտ լեզած ժամանակ, զանակով փորել եր նրա անվան սկզբնատառերը: Այժմ նա պիտի կտրի այդ ծառը և դարձնի վառելափական: Յեկ նրա հոգում կար մի դառն ուրախություն:

Սղոցները զրնգում ելին, և ծառերը ցնցվում: Յերբ կաըր-տում ելին, նրանք ծանր վայր ելին ընկնում, ջարդելով իրենց և հարեանների հյուղերը, նրանց մարմինները սղոցում ելին և հեշտությամբ, մի թափով, ձղում ելին կլոր քոթուկները: Կոճերը պատած ելին անուշանոտ արցոննքով: մեռնելիս ծառն անուշահոտթյուն եր բուրում, և կաղամախիների գառը հոտը միանում եր վոզորենու հյութի թարմ և քաղցր բուրին:

ԳԼՈՒԽ V

— Ծխիր, — լովից Ստալմախովի բարձր ձախնը, — մենք արժանի յենք հանգստանալու: Կես որից անցել եւ:

Մի յեռակը մյուսի յետից վերջացնում եր աշխատանքը, և պարտեզը լցվեց ծիծաղով և կատակներով:

Մարտինովը նայեց չորս կողմը... Գարնահալին պարտիզի միապաղաղ թափանցիկ վարագուրըն ալժմ չկար: Զկորած ծառերը կանգնած ելին վորբացած և մենակ: Առաջ յերկինքը յերեւլում եր հյուսված ձյուղերի նաշխերի արանքներից, իսկ ալժմ բացված ելին դեպի յերկինք մեծ լուսամուտներ, վորոնցով ուսախ լուսավորում եր արևը:

Մարտինովը նայեց արևին, աչքերը կկոցեց և լսեց, թե ինչպես մի տեղ բակերի և տների սև կուտերի մեջ աքաղաղները բարձր կանչում են, և նրանց աղմուկի ալիքն անորոշ կերպով ծփում ու ձայն եր տալիս քաղաքի մի վորեն այլ ծալըռում:

Յեկ, աչքի անցնելով ամբողջ պարտեզը, տպավորելով իրուղեղի մեջ սղոցած փայտի կուտերի փայլող շարքերը և ընկերների խմբերը, Մարտինովն իրեն զգաց իրրե մասնակից մեծ կուլի և աշխատանքի, գտավ իրեն մեծ սիմֆոնիալի ոիթմի մեջ: Յեկ փայլեց այն միտքը, վոր նա հաղորդակից և դառնում աշխատանքի պրոցեսին, վոր ինտելիգենցինալի ժամանակն անցնում եւ:

Ստալմախովը մի ուղիղ ջահել վոզորենուց իր շինած սահնանոցը ձեռքին մի փայտակուտից մյուսն եր անցնում և թըղթի վրա գրի յեր առնում կատարված աշխատանքը:

— Ստալմախով, արի այստեղ մեղ մոտ, իմ կարծիքով մենք մի խորանարդ գարսել ենք: Մարտինովն ասում ե, թե չե:

Միմկովան Ստալմախովի թիկց բոնած քաշ եր տալիս են կողմը, ուր բանվորուհիների մի խումբ դարսում եր յերկար նեղ փայտակուտը

Միմկովան աշխատելուց կաս-կարմիր եր կորել և դեպի մի կողմ թեքված գլխի թաշկինակի տակից յերեսին եր թափիւ

խուճում մազերի մի փունջ։ Դժվար եր ճանաչել, վոր նա սովորաբար զուսպ և խիստ Սիմկովան ե, կուսկոմի անդամը և կուլուլուսի վարիչը։

— Մի խորանարդ չկա, — ասաց Ստալմախովը հաշվելով։ — Երկու և կես սաժեն են, ելի զոչաղ եք։ Ընդհանուր հաշվով իննը խորանարդ արդին պատրաստ ե, — ասում ե նա, նստելով կոճղի վրա և հանելով մախորկայի ամանն ու ծխախոտի բարակ թուղթը։

— Ծիր, Սիմկովա, — առաջարկեց նա, — և մի պատմիր, թե Մոսկվայում ինչ լավ բան տեսար։

— Եթի... — ծիծաղեց Սիմկովան, — յես եսոր արդեն մի հինգ անգամ պատմել եմ։ Շարաթ որը կուսակցական ժողովում զեկուցում կտամ։

— Բայց, համենայն դեպս, պատմիր... Քո տպավորությունները։

— Տպավորությունները... — Երա մատները ճառթում ելին ծխախոտի թուղթը և զգուշությամբ լցնում ելին նրա մեջ մախորկան, լեզվով բարակ թքոտեց նա թուղթը, ծխախոտ շինեց։ Իսկ ճակատի վրա հավաքվեցին յերկարությամբ ձգված կնճիռները։ — Վատ տպավորություն ե, ինձ եսուել, մեզ մոտ ավելի յեզուր գալիս։ Իմ տպավորությունն այնպիս ե, վոր Մոսկվայի կոմունիստները և մանավանդ միջին շերտը, վոչ առաջնորդները և վոչ ել մասսան, չեն կառուցում և չեն զգում են ահազին զյուղացիական Ռուսաստանը, վորն այժմ փոթորկվում ե մեր շուրջը և ոգնում է ավերմունքին։ Ինարկե, լենինը հասկանում ե և հասկանում ե, զուցե, մեզնից ել լավ, մեզ ել մի փոքրիկ խմբակ ե հասկանում, բայց պատասխանատու աշխատակիցների մեծամասնությունը սարսափելի կերպով քաղկենիացել ե։ Վերաբերմունքը դեպի աշխատանքը, նույն իսկ դեպի կուսակցական աշխատանքը — ձեական ե, ժամերով վորոշվող։ Ուսելիքի և վառելիքի հոգսերից ազատված են, իսկ չե՞ վոր դա մեծ բան ե, և նրանց վոչ թե գիտակցաբար, վոչ, — հատկապիս անդիտակցաբար թվում ե, վոր մեզ մոտ Ռուսաստանում ամեն բան այնքան ել վատ չե։

— Այ, թեկուզվեցնենք Մոսկվայի թերթերն ու լրագրերը, — վոգերպեց Սիմկովան, — նրանց մեջ ամեն բան այնքան գեղեցիկ եւ հոյակապ, պրոլետարիատ և կոմունիստական հեղափոխություն... Իսկ մեզ մոտ հիմա շատ կոմունիզմ ու պրոլետարիատ կամ։ Գեղեցիկ ակումբներ են շինված, շքեղ կահ-կարասի, կարմիր դրո-

շակներ։ Միայն թե եդ շքեղ ակումբները չեն տաքացվում, ժողովուրդ գրեթե չի լինում այդ ակումբներում, և աշխատում են միայն փոքրիկ խմբակներ։ Վոչ, այստեղ մեզանում ավելի լավ ե. ախր մենք, զավառական քաղաքներում ապրում ենք, ինչպես ձակատում, ֆասակարգային պայքարի ճակատ և մեզանում...»

Յեվ մտածմոնքի մեջ ընկնելով, նա նայում եր պարտիզի ցանկապատից յերևացող հեռու բաց-մանիշակագույն դաշտերին։

— Ուրեմն, ինչ ե, դու ասում ես, թե Մոսկվան պետք չի... — լարված ուշադրությամբ նորից հարցըց Ստալմախովը։

— Վոչ, յես գիտեմ, վոր Մոսկվան պետք եւ նա անհրաժեշտ ե իբրև շտար, իբրև զեկավարող կենտրոն։ Յեվ այստեղ հսկայական աշխատանք ե կատարվում։ Մոսկվան — սիրտն ե, պետական մեխանիզմի շարժիչ գլխավոր անիվն ե, ինչքան ել վոր վատ լինի։ Բայց այնուամենայնիվ... Ինձ համար այստեղ ավելի լավ ե։

Նրան ուշադրությամբ լսում եին։ Լիզաննույնպես բաց չեր թողնում վորեն խոսք, թեև շատ բան չեր հասկանում։ Ինչո՞ւ այստեղ, այս խաղաղ, հանդարտ քաղաքում ճակատի նման եւ ձակատ գյուղացիների՞ գեմ։ Բայց չե՞ վոր բայլշեկները ժողովրդի կողմն են։

Մատուսենկոն, կարծես, ամբողջովին ուշադրություն եր գարձել, և յերբ լիզան հանկարծ մի ծղան վայր գցեց, նա բարկացած հոնքերը կիտեց նրա վրա։

Նա ձեռքը գրեց ականջին շինելի վրայի աստղը, կոճակները, բոլորը փայլում եին։ Մատուսենկոն չգիտեր, թե ինչի համար են շաբաթորյակները, ինչո՞ւ յեն Սիմկովայի և Մարտինովի փես ինչո՞ւ կրթված մարդկանց ստիպում պարապել աշխատանքով, ինչո՞ւ յեն իրեն ել, Մատուսենկոյին հարկադրում այստանքով, ինչո՞ւ յեն իրեն ել աշխատում եր այդ աշխատանքը կատարել, բայց նա միշտ ել աշխատում եր ազնվությամբ և գալիս եր ճիշտ ժամի լինին այնպիս, ինչպես առաջ, առանց ուշանալու զալիս եր մաղթանքներին, վայելուչ, մաքուր, կանգնում եր իշխանության աչքի առաջ, խաչակնքում գեղեցիկ գարսված մատներով, և միայն ծունը դնել չեր սիրում, վարովհետեւ դրանից շալվարը փչանում եր։

— Ահա կիմինը գալիս ե, յետեիցն ել Զիմանը, — ասաց Ստալմախովը։ Կիմինը մոտեցավ և աչքերով փնտում եր մեկին, նկատեց-

Ստալմախովին և մյուսներին.—«Հը, շրջանի կազմակերպիչ, ինչպես են ձեր գործերը»,—ձայն տվեց նա հեռվից, իսկ ինքը հետպհնետե ավելի ու ավելի մոտենում եր...

Ստալմախովին իր սաժենանոցով «պատվի առավ».—«19 խորանարդ գարսել ենք; Զերդ գերազանցություն»: «Իսկ մյուս շըրջաններում ինչպես ե»: Կիմինը ժպտաց, և, ինչպես միշտ, ժըպտալու ժամանակ նրա գեմքը ջահելացավ մի քանի տարով:

— Կարմիր զինվորները վանքի պարտիզումն ես որ 34 խորանարդ են զարսել, ապրեն: Ներողություն, մոռացա զովել, չեղոր նրանց հետ մեր գերի բոնած բուրժուազիան և աշխատում,—ծիծաղեց նա: Շաբաթորյակն ել շատ կողնի, յեթի այսպես գնացերեք որից հետո հշելոնները բաց կթողնենք...

Խոսքի վերջին նրա ձայնը դողաց: Ուրախալի յեր, և հաշվատալը չեր գալիս, վոր հաղթությունը մոտ ե:

— Նույնիսկ պաղարյուն Զիմանն այսոր բարձր տրամադրության մեջ ե,—ասաց ծիծաղելով Սիմկովան:

Զիմանը կանգնած եր կոճղի վրա, սրբում եր պենսնեն և իր ճոճուան ձայնով պատմում եր մի քանի ընկերների, վոր շըրջանի տնտեսական դրությունը փայլուն կլինի...

— Վոչ այժմ, մի քսան տարի հետո, իհարկե, —ավելացրեց նա:— Զի՞ վոր մենք տորքի շերտեր ունենք: Յեկ յերը յես այժմ հոգս եմ քաշում մի քանի տասնյակ խորանարդ վառելափայտի համար, վորը չգիտեմ ել կվառվի, թե վոչ, այնքան թաց ե... Այն, կիմին, թաց ե. . Այդ ժամանակ իմ մտքովս մի բան և անցկենում, վոր այստեղ հողի տակ նիրհում և այնպիսի քանակությամբ ջերմության հներգիա... Ընդամենը քաղաքից հինգ վերստի վրա, հետազոտությունն արդեն կատարված ե... Միայն թե ես տարի բերքը հավաքենք, այնուհետեւ կսկսենք տորքի մշակությունը: Եկակագատորներ արդեն ունենք, ձեռք եմ բերել Ն.-Յելանսկում, Մենք կվերանորոգենք, —խորամանկ-խորհրդավոր տեսքով դարձավ նա զեպի կիզա Գրաչեալի կողմը և իր առանց պենսների կուրք աչքերով չեր տեսնում նրան, այլ միայն նկատում եր նրա գեմքի սպիտակ բիծը և կապույտ շորը:

Շաբաթորյակը վերջացավ: Նորից շարքեր կազմեցին, նորից անցան փողոցներով և յերգեցին: Լիզա Գրաչեալի կոշիկները թրջեցին, բայց նա այնուամենախնիվ քայլում եր շարքերում և նույնպես յերգում. «Համարձակ, ընկերներ»: Նրա կողքին գնում եր Սիմկովային, ինչպես Լիզան առաջ ճանաչում եր Սիմկովային, ինչպես

կուլտուսի վարիչ, ինչպես իշխանավոր. մի յերկու անգամ յերկչուությամբ «գործով» մտել եր նրա առանձնասեհնակը, և Տրոցկու մեծ նկարի տակ լայն գրասեղանի յետեին, Միմկովան թվացել եր շատ անմատչելի և խիստ:

Իսկ այժմ Լիզան տեսնում եր իր կողքին մի աղջիկ՝ զլիի թաշկինակի տակից գուրս թափված շեկ խուճում մազերով, թարմ կարմրությունն այսերին:

Յեկ Լիզան յերկար պատմում եր դպրոցի, աշակերտների, եր հոգսերի մասին:

Ապա Լիզան հրապարակով գնաց զեպի Սենատորի տունը. Տեղից նկատելի յեր մեծ յերկհարկանի տունը խորհրդավին ցուցանակով, տնակների գորը կուտի մեծ: Յեկ հեռվից ել տեսավ, թե ինչպես մեկը մեծ կարմիր զինվորի աստղով գլխարկը գլխին գուրս յիկավ զարպասից, և միանգամից ճանաչեց Ինպինին:

Ծանոթացել եր Ռեպինի հետ նրա Սենատորի տան մեջ հայտնվելու առաջին որը: Սենատորը լիզայի ներկայությամբ հայնում եր Խորհրդավին իշխանությանը, իսկ Լիզան կանգնած եր, կարմրած և շփոթված, պատրաստ լաց լինելու, և չգիտեր, ինչ առարկություն անի, —յերը հանկարծ դուռը բացվեց և մի կարմրահեր մարդու ուղեկցությամբ ներս յեկավ Ռեպինը:

Սենատորը գեն ու գեն լինկավ:

— Զեկ համար սենյակ, ընկեր Ռեպին, պատրաստ ե, —առաջ եր նա քսությամբ, —կամենում եք այժմ իսկ մտնել:

Բայց Ռեպինը վորոշեց խառնվել այն խոսակցությանը, վորի վերջին խոսքերին նա վրա հասավ:

— Խորհրդավին իշխանությունն ամբողջ ժողովրդին բարիք ե ցանկանում, —կրկին գոռում եր Սենատորը, —բայց միթե յես ժողովուրդ չեմ, միթե նա ժողովուրդ չի. —և Սենատորը մատնեռով ցուց եր տալիս զեպի կարմրահերի կողմը, իսկ նա հավառություն տալով մոռչացնում եր:

— Իսկ ինչ բարիք են գործիլ նրանք մեզ: Լավ պլոկել են մեզ...—և Ռեպինն ի պատասխան շատ յերկար խոսում եր այն մասին, վոր կոմունիստների մեջ շատ կան իրենց կաշվի մասին մտածողներ, վոր կոմունիստները հաճախ սխալվում են, բայց վոր այնուամենախնիվ նրանք... «Գաղափարի համար են»... Յեկ նա այնուամենախնիվ նրանք: «Հի՞ վոր մենք համախորհեր ենք»:

նորհանրապես նա այնպես զեղեցիկ ու սիրալիր ե, ահա

հենց այժմ ել ուժգին սղմում ե Լիզայի ձեռքը, իսկ նրա թափ ուժեղ ձայնը կլկում ե սիրալիր լիլեջներով:

— Բարե ձեզ, ընկեր Գրաչեա... Յես կամենում եի՛ հարցնել ձեզնից, թե ի՞նչպես պետք ե անցնել քաղաքային պարտեզ:

— Քաղաքային պարտե՞զը: Յես հենց այստեղից եմ գալիս, այստեղ շաբաթորյակ կար... վասելափայտ ուատրաստելու համար: Գրեթե ամբողջ պարտեզը կարտեցինք:

— Միթե դուք կուսակցական եք:

— Վայ, բայց շաբաթորյակին անկուսակցականները կարող են գնալ: Իսկ յես յենթագրում եմ, վոր կոմունիստներին պետք ե ոգնել: Միթե ճիշտ չի:

— Ի հարկե, ի հարկե... Յես ել կգնայի, յեթե վաղորոք իմացած լինելի շաբաթորյակի մասին: Ե՛, իսկ աշխատանք շատ կատարեցիք:

— Այ, շատ, յես մոռացել եմ քանի խորանարդ, բայց գրեթե ամբողջ պարտեզը կտրտեցինք. Նույնիսկ ամենապատասխանատու աշխատակիցներն ել աշխատում եին, և յես աշխատում եի ընկեր Մարտինովի հետ միասին: Կլիմինս ել եր, Զեկայի նախագահը:

Նա մանրամասնորեն պատմեց Ռեպինին քաղաքային պարտիզի ճանապարհը:

ԳԼՈՒԽ VI

Առավոտվանից փչում եր սառը քամին, բայց յերկինքը մնում եր կապուտ, իսկ բոլոր սարկանների գույները—պայծառ: Մերթ ընդ մերթ, բարձրում, լողում անցնում եին կապուտ ամպեր, քամին անտեսանելի ձեռքերով տանում եր նրանց յերպեր, նրանք ծածկում եին արել, և այն ժամանակ ամեն ինչ դառնում եր մոռալ և տրտում: Ստալմախովն շտապ գնում եր աշխատանքից մեծ հրապարակով, վորի վրա լայնարձակ փոփել եր շուկան:

Հանկարծ նրա ուշադրությունը գրավեց մի ջահել յերիտասարդ, վոր ցրտիցը կծկվել եր ծակծկված սլուրտուկի մեջ: Ստալմախովը տեսալ քրտից և կեղտից մուգ գորշ գույն ստացած ուժեղ ձեռքերը, պարկը զյած ուսին—հավանորեն դեպովի բանվոր եր, սովից ստիպված գողացել եր գործիքները և ուզում եր հացի հետ փոխել:

Բայց այս ճակատը, կեպկայի տակից դուրս թափված մազերի այս բրդուտ փափախը Ստալմախովին ծանոթ յերեացին: Յեվ մի անդիմադրելի ցանկություն ստիպեց արագ հասնել յերիտասարդին, ձեռքը դնել նրա ուսին և հարցնել. «Ընկեր, ի՞նչ ես ծախում»: Իսկ նա յետ գարձավ, աշքերը կկոցեց, նայեց չորս կողմը, և հնչեց մի տեսակ խուլ, թխպոտ ձայն:

— Բարե, ընկ. Ստալմախով:

— Գորնիխ, դժու յես: Ի՞նչ ես անում այստեղ,—բայց Գորնիխն արդեն թնից բռնած քաշում եր Ստալմախովին ամբոխից գուրս...

— Յես եմ, յես... Բայց դու բարձր մի գոռա: Գնանք, շնւռու նրանք անցան դեպի տախտակներով ամրացրած կրպակները, հին շուկայի մասցորդների մոտ—այստեղ այժմ վաճառաւելից գալիս. Եթին կարիք հոգալու: Յեկան, և Գորնիխը, չորս կողմը նայելով, բարձր շշնջոցով թափ ձայնով ասաց.

— Ի՞նչ եմ անհում: Մեզ համար միշտ այստեղ գործ կճարվի: Լավ չեղավ, վոր դու ինձ վրա ուշադրություն դարձիր, ալսոր յես

հագուստիս և գեմքիս վրա անփուլթ կերպով եմ աշխատել: Իսկ այլ, ձմեռը վոչ վոք չեր ճանաչում: Լավ յեղավ, վոր այսոր ճանդիպեցինք... Այսոր զտիր կլիմինին և ասա նրան...

Գորնիխը յուր շուրջը նախեց: Նա չորս կողմը դիտում եր առանց գլուխը ծոելու, միայն աչքերով:

— Ասա, վոր յես այսոր. նրան յերկու ժամ սպասել եմ ճանձնաժողովում: Դու յել ճանձնաժողովում մի փնտոի նրան: Նա յերեկոնինքն այնտեղ չի լինում: Հավանորեն, կուսկոմում կլինի: Ընկել և ես վառելափայտի մթերման գործի յետեց և Զեկավ աշխատանքը յերեսի վրա յի թողել: Թեև պետք և այս ել ասել վոր նրանք առանց նրա վոչինչ չեն կարող անել: Նա լավ կադմակերպիչ ե, և բոլորից ել յեռանզուն: Բայց այնուամենայնիվ ի զուր նա այժմ Զեկայում սակավ և լինում: Այսպիս ուրեմն զու նրան դտիր, նա կամ Գործկոմում կլինի, կամ կուսկոմում և կամ Զինկոմատում Կարառուլովի մոտ: Ամբողջ քաղաքը ման արի:

— Եղ ի՞նչ ես եղակես կրակ կտրել, — ընդհատեց նրան Ստալմախովը: — Վաղն առավոտան նա անպատճառ ճանձնաժողովում կլինի: Ենտեղ կտեսնես իրեն և ինքդ ամեն բան, ինչ վոր պետք ե, կասես...

Գորնիխն ամուր բոնեց Ստալմախովի ձեռքը: Նրա ցեխուոված գեմքի վրա մի անսովոր վրզովմունք կար:

— Լսիր ինձ, Ստալմախով, և արա... վախենում եմ վազը ուշ լինի... Այսոր ապստամբություն և լինելու... Այս գրեթե ճասատ բան ե:

— Ապստամբություն, — ճարցրեց Ստալմախովը զարմացած, — բայց ի՞նչ տվյալներ՝ կան...

— Տվյալնե՞ր կա յել չկա յել: Այ, շուկայում ն.-ի նահանդից սայլեր շատ կան: Յես ն.-ի գյուղուցուն մերինից միշտ կարող եմ տարբերել կարծում եմ, վոր նրանք զենք ել ունեն թագացրած: Բայց ի՞նչպես խուզարեկես, խուզարեկելու համար զու պետք և վոր ամբողջ շուկան շրջապատես, իսկ այժմ արդեն ուշ ե: Մեկ ել տրամադրությունից կարելի յի դատել: Ենտեղ միշտ սպասում են մեր վերջին: Բայց այսոր առեսուր անող կանաչը այնպես ճամոզված են առում, վոր հատկապես այսոր, և վոչ թե վազն և նեռի ծառաների—այսինքն մեր—վերջը: — Ստալմախովը ժպտաց:

— Քեզ ծիծաղելի յի թվում, վոր իբրև թե Գորնիխը կանաց դուրս տալուն ականջ և զնում: Իսկ յես կիտեմ, վոր ավելորդ բան չի լինի, վոր չեկիոտը մեկ-մեկ ել կանաց զուրս տա-

լուն ականջ զնի: Միշտ կարելի յի գլխի ընկնել, թե եղ գուրս տալու տակ դավադրության սաղմը կա, թե լոկ միայն թշնամական տրամադրություն և մեր զեմ... Ըսդհանրապիս գյուղացիներին պետք և ճանաչել: Նրանք հեռու չեն տեսնում, բայց են, ինչ վոր աչքների առաջին ե, լավ կտեսնեն, կոգտագործեն ավելի լավ, քան թե յես ու գու... Այսպիս ահա, զտիր կլիմինին, պատմիր նրան, անհանգստացրու, և թող գոնե նա վորեն միջոց ձեռք առնի: Դե մեր մնացած մլուս չեկիստներն անհասկացող մարդիկ են, եսոր յես բոլորի հետ ել կովեցի: Նրանց առում եմ, վոր պատրաստ պետք և լինել, նրանք վրաս ծիծաղություններից, այսպիսի մանր մունք բաներից, վոր չի կարելի ապացուց համարել, բայց վոր բավական են, վոր յես անհանգստանամ: Եսուել մի 200 վերատի վրա մի չեկիստ են սպանել, և ինձ թվում ե, վոր այս բոլորն իրար հետ կապված են և միենուն բանն են առում—մոտալուտ ապստամբություն...

— Սպանել են: Ազգանունն ինչպէս ե, — անհանգիստ հարցրեց Ստալմախովը: — Հո Սուրբիկովը չի:

— Սուրբիկովը ե... Նա, յերեկի, ջղայնություն և արել գործը փչացրել և և իրեն կործանել: Լավ տղա յեր, բայց վատ չեկիստ ե: Իսկ զու մի՞թե նրան ճանաչում ես:

— Մենք միասին եինք ապրում... Դու ավելի մանրամասն պատմիր նրա մահվան մասին... Կարող և պատահել լոկ լուրեր են:

— Վոչ, լուրեր չեն: Գործակալական աեղեկություններ են... Նրան վողջ վողջ թաղել են... Բայց գե եղ գատարկ բաներ են, զու, այ, կլիմինին գտիր, անպայման, լսում ես: Պատերազմական զրություն հայտարարելը հիմա արգեն ուշ կլինի, բայց թող զոնե կոմունիտական գաշտը հավաքեն, զինված պահեն... Ախր բոլորին ճատերի նման կմորթուեն... Դե, շուտ զնա:

Նա ամուր սեղմեց Ստալմախովի ձեռքը:

— Իսկ Սուրբիկովին պատահածը, կնշանակի, ճիշտ ե:

— Ի հարկե, ճիշտ ե: Ի՞նչ արած, մեր գործն այդպիս և, ամեն բանի պատրաստ պիտի լինենք... Յեկ Գորնիխը, կուզեւուղի գուղը, զզզված, պարկը ուսին հեռացավ և կորավ ամբոխի մեջ: Կուզ, Ստալմախովը գնում եր տուն սառած ճանապարհի կոշտերի

վրայով, նրա հոգում դատարկություն ել տիրում, և մտքերը սլա-
նում ելին նրա վրայով, ինչպես ձկները ցուրտ, լուսավոր սեհ-
յակով:

Սպանել են... Հիմա կդնա տուն, և ուղղակի մուտքի դռան շեմքից վորբացած մալրը կհարցնի նրա մասին, Սերգեյի մասին։ Յեկ թեհ ծանր կլինի, բայց ստիպված կլինի խարեր Ստիպված նրա համար, վորովհետեւ իր գրպանումն եւ գտնվում Աերլուժա Մուրիկովի յերկտողը, գրված վերջին կայարանից, այնտեղ, կապույտ տափաստանները գնալուց առաջ։

«Թաճպագին Ստալինիով, յեթե ինձ սպանեն, ասա մորա, վոր յես գնացել եմ պաշտոնական գործով, յերկար ժամանակով, մի քանի տարով, Գերմանիա կամ, Դևիլեր: Սա իմ վերջին խընդիրքը կլինի: Ի հիշատակ մեր ընկերության վերցրու իմ լուսանկարը: Նա կպցրած ե մի հին վկայականի վրա, վոր ետաժեր-կայի վերևի գարակի վրա յե:

Լավ ապրես և աշխատես...

ԱԵՐԳԵՅ ՍՈՒՐԻԿՈՎ:

Հ. Գ. Արան կցված նամակու, լեթե մեռնեմ, հանձնիր Զե-
կալի նախագահ ընկ. Կիմիմինս:

Յեկ յերբ համառ կերպով դուռը ծեծելուց հետո մուտքի դուռը բացվեց, Ստալմախովը տեսավ Սուրբիկովի մորն այնպես, ինչպես սպասում էր. կարճմիկ, նիհար պառավի խորշոմած դեմքից, սեացած մետաղի շրջանակով ակնոցների վրայից, հարցասիրությամբ նրան ելին նայում բարի կապուտ աչքերը:

Յեփ լսեց հարցում.

— Սերլուժին բան հո չէ պատահել, նամակ չկա արդյոք,
չի իմ ըստ:

Ստալմախովը մտածեց այն մասին, վոր Նրա Սերգեյը, սիրելի Սերյոժան, արծաթե ճառագայթների թելը, վոր կապում եր նրա անմշխիթար ծերությունն ուրախ կլանքի հետ, կորավ սարսափելի միայնակ մահով, անսահման տափաստաններում, այնտեղ հարավ-արևելքում, և անսովոր մի խղճահարություն շարժեց նրա սիրար:

— Նոր բան չգիտեմ, Աննա Պետրովնա, — պատասխանեց նա, առանց նայելու նրա աշքերին: Սուրբկովի մայրը մի կողմ քաշվեց, ճանապարհ ովեց նրան, և անցավ նա լուր սենյակը, վորտեղ ելին իր և հեռու կապույտ տափաստաններում սպանված Սերյոժակի անկողիները:

— Ինքնայեռ չէք ուզում արգլոք, Անդրեև վասիլկիչ.— Հարցը պառավը, մտնելով նրա լետերից սենյակ։ Նա հոգոց քաշեց և նստեց զոան մոտ աթոռի վրա։

Սերյոժա Սուրբկովը... բարձրահասակ և վայելչակազմ, քիչ
կռացած, մուգ շագանակագույն, վոսկեփայլ մազերով, իսկ գեմքը...
կարծես ամենասովորական, ջանել կարմիր զինվորի, գեղեցիկ
զյուղացի լերիտասարդի զեմքը: Բայց այդ զեմքի ներսում կարծես
վառված լիներ մի տեսակ կը ակ, վոր գեղեցկացնում եր այդ հա-
սարակ զեմքի լուրաքանչյուր դիմը, ինչպես վոր մոմը չինական
պարզ հասարակ լապտերը կարծնում ե զարմանահրաշ մի կար-
միր աստղ: Հաստ քիթ, կապույտ աչքեր, փափկաժպիտ բերան,
վոսկեգույն մազեր այտերի, վերին շրթունքի և կզակի վրա:

Հանգիստ, սակավախոս, կարծես վորմե բան թագանող, տուս
և գալիս նա Զեկայում ամբողջ որն աշխատելուց հետո: Անշտապ
են նրա շարժումները, նրա խելացի, սակավ ասված խոսքերը.
իսկ մայրը քննուշ-հոգատար հայացքով հետևում է իր Սերտուակի
ամեն մի շարժվածքին, լուսն և նրա ամեն մի խոսքը և իր սիրո
ավելցուկը նվիրում է արդեն հասակն առած, դախացած Ստալ-
մախովին, վորը մոռացել է մայրական սերը և հիշում է այն, ինչ-
պես մի հեռու, հեռու բան:

Ահա նստած ե նա, վորբացած մայրը, հանգած, արցունքից
մաշված հայացքով և շշնջում ե խոսք խոսքի լիտեկից, պարզ, հա-
սպառակ ձևով դրսենորում ե իր մայրական սերը:

«Ինչու համար գնաց Զեկայում աշխատելու. Ախր այնպես փոքր եր, բարի արյուն տեսներ, լաց կլիներ, գուշնը կըցեր: Շարունակ կատուներ, անտեր շներ եր հավաքում, փոքրիկ արկղի մեջ թրթուռ եր պահում, մարդու նման սիրում եր, և յեր պատահմած կոխ ելին տալիս, լաց եր լինում: Եղ վազուց եր, չորս տարի առաջ: Խոկ հետո մտավ կարմիր բանակ, գնաց ֆրոնտ, հետո Զեկա, սպանում ե ու հրացանազարկ ե անում.. Մահվան անում է հանում: Յեկ կարծես հանգիստ կերպով ե այդ գատավճիռներ ե հանում: Յեկ կարծես ինդիւստ կերպով ե անում, բայց իմ մալրական հայացքն ամեն բան տեսնում ե: Վերջին ժամանակները գալիս եր հերթապահությունից և նրա գեմքը մի տեսակ եր լինում... Կարծես ինքն եր գնդակահարվելիս յեղել: Պառկում եր անկողնի վրա, գլուխը թազում բարձի մեջ և մնում եր յերկար անխոս ու անշարժ, խոկ հետո, յերը գլուխը բարձրացնում եր, յերկում եր կարմիր գեմքը, կարծես լաց եր յեղել, բայց աչքերը չոր ելին լինում...

Ծխելիս ծուխն ուժգին ներս եր քաշում, և լեթե եղ ժամանակ խոսելիք նրա հետ վորեե... Կոմունիստական բանի մասին, հեղափոխության, կռւսակցության, լենինի մասին, չեմ իմանում, մի ինչ վոր լավ բան եք ասում եւ...

Յերբ վոր, ականջ դնելիս, հանկարծ ժպտում եր ու կամաց, ենպես կես ձայնով «ինտերնացիոնալ» կամ «Մենք գալիք հրդեհց» եր լերգում...» Յեվ չկարողացավ նա վերջացնել իր խոսքը, արցունքները հեղեղեցին այտերը, սղմեցին կոկորդը, և հեկեկալով գուրս լեկավ սենյակից:

Ստալմախովը խղճում եր նըսան, դժվար եր խարել և միենուցն ժամանակ ինքն իրենից նեղանում եր, վոր գեռ չի խարել, ասելով, վոր Սերյոժան գնացել է Գերմանիա:

Շատ ժամանակ չեր, զոր մի կին, զոր Ստալինի սաւատիկ սիրում եր, նվիրել եր նրան իրքն հիշատակ մի վաղաւ: Նրա վրա հին ձևերով նկարված ելին մեկի սիրալին յերազանքները... Քուչն ուղցրած աղավնիները վրա ելին քաշում իրենց ամպանման-լազուր թևերն եղերի վրա... Այս ու այն կողմ ցրված ելին մերկ, փամփլիկ ամուրներ, խակ մեջտեղին, ամպի վրա նստած ելին հովիվը և հովիվուհին. հովիվը վին եր նվագում. յերեխ լավ եր նվագում, զորովճետե հովվուհու դեմքին թափառում եր մի քնքուշ մտախոհ ժպիտ. իսկ սպիտակ գառն ուտում եր հովվուհու ծնկներին բռնած վիճի ծաղիկներից: Վաղալի բերանը շինված եր ծաղկամանի ձևով և այդ տեղում կապույտի վրա ցրված ելին վոսկե և արծաթե աստղեր, զորոնցից մի քանիսն ել փալուն ապակիներից ելին և փոքրիկ կալծեր ելին արձակում: Ստալին անշնորհք ձեռքերով վերցրեց վաղան:

— Ես պուլիկը զնելու տեղ չունեմ, — ասաց նա, աչքի առ-
յրեց սենյակը, և վազան դրեց ետաժերկալի վերևի դարակի վրա:
Յեվ ամեն առավոտ արթնանալիս աչքը քցում եր ետաժերկալին,
և նայելով վազալին, ծաղրական շոյանքով հիշում եր նա են
կնոջը, անհասկանալի, մտքերով և արտաքինով ոտար, գեղեցիկ,
ընտիր հոտավետ ձբերի բուրմունքով, և այնքան ուժգին սիրա-
հարված նրա վրա, մի անկիրթ բանվորի, վորը չգիտեր սիրալին
խոռքեր ասել և վորի լերեսը ծաղկատար եր:

Այդ կինը զերասանուէի յերև և շուտով քաղաքից գնաց: Նա յել գնաց պարենապօրման գործով գուող: Յեվ յերբ, յերկար բացակայությունից հետո, մտավ իր սենյակը և սկսից աչքերով փընտռել վաղան, տեսավ, վոր նա դրված և սեղանի վրա, վոր բերնի:

մի մասը կոտրված ե, և վոր նա ալժմ ծածկված ե կեղտու թա-
նաքի լծերով: Սերլոժա Սուբիկովը նրա մեջ թանաք եր լցրել
Ստալմախովին այս բանը շատ տհաճություն պատճառեց, բայց
նա, վոչ մի խոսք չասելով Սերլոժալին, թանաքը միջից թափեց,
և ալժմ զրել եր վազան ետաժերկալի մըուս ծալրին այնպես, վոր
նրա սկացած, կեղտու, հովվուհու քնիքուշ ժպիան ալլանդակող
բարակ ճաքած կողմը չերեա:

Աեվ այժմ, ամեն անգամ, իրը նրան իրուի հիշատակ վոր և
երան ելին նվիրում, լուսանկար կամ վորեւ չնշին իր, հիշում
եր վազալի մասին և զմիկամակությամբ եր վերցնում։ Նույնիսկ
ընկերներից ստացած նամակներն ել, չգիտես ինչու կորչում ելին։

Ստալմախովը հայնողեցի: Ախ, սրբականք, սրբաւսոր: Եղիպատր
զանգրահեր լեռեխալին, այնքան խելոք, խղճով և անչափ նվիր-
ված կուսակցութիւնը, կենդանի թաղել են հողի մեջ:

Վրեմ, վրեմ: Բայց վրեմ առնող չկալը: Իարդությունը ուստի ուստի եր նրա մեջ, և նա սղմում եր բառուցքները: Հանկարծ հիշում եր նրա մեջ, և նա սղմում եր բառուցքները: Հանկարծ հիշում եր նրա մեջ, և նա սղմում եր բառուցքները: Հանկարծ հիշում եր նրա մեջ, և նա սղմում եր բառուցքները:

Կլիմինը կուսկոմի զռանը ղեմ առ ղեմ առաջընկցոց մատնող Ստավրախովին, և միանգամձից նրան զարմացրեց այն վրդովմունքն ու բարկությունը, վոր խաղում ելին այդ սովորաբար այնքան հանգիստ ղեմքին:

— Ի՞նչ ե
Առամբախովին:

Ստալմախովը պատմեց Գորսիխի հետ ունեցած ըր Տառ-
դիպման մասին և հաղորդեց Նրա լերկութը: Նրանք հանդարս-
քալում եիին զտարկ փողոցվ, վորտեղ կային միայն լերեխա-
ներ, չներ ու հավեր, վորոնք վխտում եիին զարպաների շմբքերին:
Այս ենք ասեմ, Ստալմախով, չեմ իմանում ինչ և ուզում

կանգնեցնել ամենակարևոր մի անտեսական աշխատանք յիս, համենայն դեպս, չեմ կարող: Առանց դրան ել ստիպված ենք այնքան աշխատել, ամեն ինչի մասին մտածել և նախատեսել ամեն մանր բան: Մեր ընկերներն այն աստիճան չեն կարողանում աշխատել, վոր ստիպված ես ամենքի փոխարեն աշխատել: Ամեն ինչ ծանր են անում, ուշացնում են, իսկ դրությունն այնպես ե, վոր յուրաքանչյուր բոպեն պետք ե զնահատել և ոգտագործել: Զիմանի հետ աշխատելը—տանջանք ե, նրան վոչ մի կերպ չես կարող տեղից շարժել: Իսկ հիմա յել Գորնիսն իր վախերով և կասկածներով .. Ընդհանրապես, Ստալմախով, այսոր շատ վատ եմ... Մի չեկիստ եցի ուղարկել տափաստանները կարեսը հանձնարարություններով, իսկ բանդիտները նրան սպանել են, և ահա չեմ կարողանում ներել ինձ, ինչու ուղարկեցի նրան: Նա այնպիսի աշխատանքի համար պետքական չեր, շատ արդեն ջղացին եր: Ինտելիգենտ եր...

— Յես նրան ճանաչում եմ: Նա իմ ընկերն եր: Մի բնակարանում եիինք ապրում: Այսր նրա մայրն ե մնացել...—Ստալմախովի ձայնը հետզհետե ավելի խուլ եր հնչում:—Նա կայարանից ինձ մի յերկտող եր ուղարկել և խնդրել եր իր մահվան դեպքում այս նամակը հանձնել քեզ: Առ:

Անցավ միքանի բոպե, մինչև վոր կլիմին արագ աչքի անցրեց նամակը, վերջացրեց և խնամքով ծալեց:

— Կմի՞ր, կլիմին... Վաղը յես կուսկոմում պիտի խնդրեմ, վոր ինձ ուղարկեն բանդիտների դեմ: Յեվ են սրիկաններին, վոր նրան սպանել են... Յես նրանց կաշին կմաշկեն: Իսկ այժմ խընդում եմ... Կարդա ինձ համար այդ նամակը, Սերգեյի յուրաքանչյուր խոսքն ինձ համար թանգ ե: Կլսեմ և կպատկերացնեմ նրան:

— Կարդամ,—պատասխանեց կլիմինը: Նրանք նստեցին ցածրիկ նսարանի վրա:

ԳԼՈՒԽ VII

«Թանգարին ընկեր կլիմին: Այժմ յես Ն-սկ կայարանումն եմ: Գլեբովը գնացել ե սալի յետելից, արդեն չորս ժամ ե, վոր չկա: Կայարանը փոքր ե, և յես րոլորովին մենակ եմ: Դիտեցի հին, նախապատերազման ոնկամներն ու հայտարարությունները, վորոնք չեն համապատասխանում ներկա կյանքին, հիացարաննապորտի բարձրացման տեմայի մասին յեղած հրաշալի պլակատով, ապա անցա Որթոչեկալի բաժանմունքը, և տեսնելով զրիչն ու թանաքը - իմ մեջ ցանկություն առաջ յեկավ անկեղծորեն պատմելու ձեզ այն, ինչ վոր մտքովս ե անցնում, այն ապրումները, վորոնք այժմ անհանգստացնում են իմ հոգին: Թե ինչու ձեզ հատկապես, ընկեր կլիմին, գուք, յերկի, կհասկանաք: Հիշեցնք, թե ինչպես Ն-սկի զիվիզիալի քաղբաժնում դուք, կուսակցության հին անդամ, քաղբաժնի պետ, համբերությամբ ժամերով զրուց ելինք անում ինձ հետ, այն ժամանակ անկուժողական, ինքնավտահ մի յերեխալի հետ, վորի գլուխն ամսակցական, ինչնամական մի յերեխալի հետ, վորի գլուխն ամսակցական լցված եր ամեն տեսակ ինտելիգենտական անհեթեթություններով: Դուք համբերությամբ լսում եցիք իմ անմիտ զատողությունները, վարպետորեն դուրս եցիք կորզում վոտքերիս տակի հողը, ապա մղում եցիք զեղպի մարքսիզմ, համբերությամբ պատմում ելիք ինձ դասակարգացին կովի և սոցիալիզմի այլուրենը: Յես կուսակցության մեջ մտա արդեն գնդում յեղածու ժամանակ, բավական ուշ, բայց խկապես կոմունիստ եին գարձել ինձ ձեր դասերը, իսկ յերբ դուք անցաք Զեկա, յես, ֆրոնտը լիկվիզացիալի յենթարկվելուց հետո, յեկա ձեզ մոտ ծառայելու: Յեվ ձեր զեկավարության տակ յես գարձա իսկական հեղափոխական կան և կոմունիստ: Այդ ե պատճառը, վոր յես գրում եմ վոչ թե մորս, վոչ թե ինձ ճանաչող և սիրող ուրիշ ընկերներիս, այլ հատկապես ձեզ, իմ պետին, վորի առանձնասունյակն աշխատանքի ժամերին յես առանց զեկուցման չեմ կարող մտնել:

«Այս նամակը դուք կստանաք միայն այն գեպքում, յերբ ինձ սպանեն: Իսկ վոր ինձ կսպանեն, յես գրեթե չեմ կասկածում:

Յեզ այդ լավ կլինի, վորովհետև յես կրանքում այլես անելիք չունեմ, յես մարդ չեմ, այլ միայն մարդու կեղե, և այժմ իմ հոգին միանգամայն դատարկ եւ թող ուրեմն յես գոնե մեռնեմ կումունիցին ոգտակար կերպով:

Բայց վորպեսզի զուք ինձ հասկանաք, յես կոլասոմեմ ձեզ ամեն բան կարգով:

Հիշում եք, ինչպես անցյալ տարի, յերբ ամբողջ շրջանում դավարդություն բացվեց, մենք գնացինք գնդակահարելու հինգ սպիտակ գվարդիականի:

Զմրան պարզկա գիշեր եր: Բակով շրջապատված կախարդական լուսին: Մեր ըեռնակիր ավտոմորին արագ սլանում եր փայլուն, սահնակի փայտերով հղկված ճանապարհով: Մեզ հետ եր լեռավինը: Նա հուզվում եր, վորովհետև առաջին անդամն եր մասնակցում գնդակահարության, իրեն պահում եր անբնական կերպով ուրախ և կենդանի և խոսում եր մերթ ձեզ հետ, մերթ ինձ հետ: Դուք ինչպես միշտ գործնական և սպառող պատասխաններ ելիք տալիս, բայց ձեր պատասխանների մեջ կար հաղիվ նշմարելի մի ինտոնացիա. «տղա, մի կեղծիր, դու քեզ լավ չես զգում»: Յես նրան կարձ պատասխաններ ելի տալիս: Յես ցանկություն չունելի խոսելու. յես ցերեկը շատ ելի հոգնել և հանգստանում ելի այդ կապույտ, մի քիչ ցուրտ գիշերվա լուսության մեջ... Յերբեմն յես յետ ելի դառնում, նայում ավտոմորիի մեջը, տեսնում ելի «նրանց», տեսնում ելի տղաների հսկող գեմքերը, հիշում ելի, թե ուր ենք զնում: Տհաճություն ելի զգում: Բայց չե՞ վոր յես առաջին գնդակահարությանը չեր, վորին մասնակցում ելի:

Մենք մտանք վանքի անտառը, յեղամով ծածկված, սառչող մարդու հոգեարքի ցնորքների նման կախարդական ծառերի խառնվածքի մեջ: Յերբեմն ծառերը բաժանվում ելին իրարից, և յերեւում ելին հմայիչ կապույտ բացատները: Դեպի այդ բացատներից մեկը գուրու յեկանք մենք նեղ արահետով: Այնտեղ կար մի հին բարձի թողի արած քարհանք, ձմեռը ձյունով լցված, բայց և այնպես թվում եր ինչպես մի խոր սեղապտագույն փոս:

Ճանապարհին ամենքը լուս ելին:

Նրանք իրենց լավ ելին պահում և հանդարտ սպասում ելին մահվան: Յես ինձ հարց չելի տալիս, թե ինչի մասին ելին վերջին անգամ մտածում այդ մարդիկը, վորոնք, կարծես այնքան անտարբեր ելին դեպի ամեն բան: Յես այդ բոլորը մտածել ելի արդեն վազորոք այն վալրկաններում, յերբ ինպեր ելի ձեզ աշ-

խատել ջեկալում: Վաղորոք գիտելի ամեն բան, ինչ վոր լինելու ե... Ամենազգվելի վալրկաններն են, յերբ նշան ես բռնում մի խումբ անպաշտպան մարդկանց: Բայց այս բոլորը շուտով կվերջանա և մի թնդացող համազարկից հետո, վորից մոտակա կեշիները թափ կտան ձան փոշին, հինգ մարդկան մարմին կընկնեն խոր, խոր քարհանքի խավարի մեջ, իսկ մենք կլիրագոռնանք և նորից կլսինք կախարդական ձմեռալին լրությունը:

Բայց այնպես չեղավ, ինչպես յես ելի սպասում... Դուք ցածր ձայնով ասացիք նրանց:

— Շորերդ հանք, քաղաքացիներ:

Նրանք նաևեցին իրար: Մեկը գեն քցեց կիսամուշտակը: Մլուսները հետևեցին նրա որինակին:

— Վոչ, բոլորովին մերկացեք, — ասացիք զուք և ավելացրիք, կարծես ի գիտություն մեր, — տկլոր պիտի գնդակահարենք...

ներ ենք, միթե չեք հիշում: Ի գեալ վերջերս ել տեսնվել ենք,
միթե չեք հիշում զինսպեց Ռեպինին, վորի փաստաթղթերը գուք
շուրջկալի ժամանակ նայեցիք: Իսկ մթերքների բաշխումը ճշտա-
պահ կերպով հավաքելու համար մենք են ժամանակ չկարողա-
ցանք ձեզ շնորհակալություն հայտնել, բայց այժմ մենք կվիս
կլինենք:

Վերան մի դուլ սառը ջուր ածելուց հետո կլի ինն ուշքի յեկավ, և ամիջապես, յերերալով վոտքի կանգնեց. Նա ցրտից գողում եր և զլուխն ել թվում եր, թե ցրվում, մաս-մաս և լինում:

Յել հենց վոր վոտքի կանգնեց, սա նկատեց Ստալմախովին,
վորի ձեռքերից բռնել ելին յերկու ջահել տղաներ։ Յերրորդը՝
մենակ մի տակի կապույտ շապկով. մտրակով թսփով հարվա-
ծում եր Ստալմախովի մեջքին, և նրա նեղ, ճեղքվածքի նման աշ-
քերով, դուրս ցցված այտոսկրներով, հոնքերից զուրկ յերեսին
հաճույք եր փալում։ Ստալմախովը մեկ մեկ տնքում եր, և ամեն
անգամ տնքոցի հետ նրա քերնից դուրս ելին թռչում քենոտ
հայրույնքներ։ Ուսպինը կանգնած եր մուտքի սանդուղքների վրա:

Վոչ հեռու, քան կես վերստի վրա տրաքում ելին հրացա-
նավին ձիգերը, յերբեմն բակի վրայով ընդուստահար թռչում եր
գնդակը, քաշելով իր յետեկից մի զնդզնդան, վողբացող լար: Յեկ
հանկարծ, հրացանաձգության միակերպ տրաքտրաքոցը ճեղե-
լով, ներս հոսեց հաղթության և թշնամանքի մի հզոր վողբով ու
հառաջանքով յեռացող ալիք... Դրանից հետո հրաձգությունը մի-
անգամից մոտևկացավ, հետզհետեւ գնդակներն ավելի հաճախ ելին
թռչում բակի վրայով, ամեն բոպե ջարդելով շենքի վերին հարկի
լուսամուտները:

բակը վաղեց Ռեպինը և նրա հետ ել մի սպա, վորի ուսիսը կիմինը տեսագիրներ:

— Զիերը լծիր, — գոռաց Ռեպինը և յերկուսն ել շտապով դուրս յեկան դարպասից։ Ստալմախովի ծեծն ինքնըստինքան դադարեց, բանդիտները վրա պրծան ձիերը սալլերին լծելու, իսկ Ստալմախովը, վորին այլև վոչ վոք չեր պահում, յերերաց, ընկալ ձևան վրա, և նրա մեջքից ծորացին բրյան բարակ շիթերը։

կլիմինը մոտ վագեց և սկսոց սրան զուգը՝ զանգացան
կեղտուելով ձեռքերը նրա արյունով, Ստալմախովը հառաջում
դողում և հայոցում, բայց և յերերալով, կանգնեց: Թախծա-
կը, դողում և հայոցում, բայց և յերերալով, կանգնեց: Թախծա-
կը հայացքով նաև կլիմինի աշքերին և գորշ շրթունքներով
լից հայացքով նաև կլիմինի աշքերին և գորշ շրթունքներով
շնչաց: «Ցուրտ ե... յերեի մահս յեկել ե»: Կլիմինը գրկեց նրա
ուստի և լարելով վերջին ուժերը, քաշ տվեց նրան դեպի բակի
ուստի ծայրում գտնվող ծածկի տակը:

— զնանք, թագնվենք, դուցե կմոռանան մեզ:

Գոյսի կիսախավարում, ծոծրակը խրպած ձիու աղբի մեջ,
ընկած եր Զիմանի ալլանդակված մարմինը: Փորոտիքը, կարմիր,
սպիտակ, բաց մանիշշակագույն մսի կտորները, խառնված հա-
գուստի կտորտանքի և ձիու փթթի հետ, թափված ելին գետնին,
գուստի կտորտանքի և մանիշի մասին ամպականին: Տարեկանի
իսկ պատռած, ընդերքը թափած ստամոքսի մեջ ածված եր մի
կույտ տարեկան: Տարեկանի պատռած պարկն ընկած եր կողքին:

Զիմանի փոքրիկ, նիհար սրաքիթ գեմքին նկարված եր մի սարսափելի սանջանք։ Մի աչքը լայն չոված եր, իսկ մլուսի մեջ խրված եր կոտրված ակնոցի ապակու կտորը։

— Սա իմ ճշտապահությամբ հավաքում եր մթերքների բաշխումը, — խոխոսոցով շնչաց Ստալմախովը, ընկավ քոթուկի վրա և ձեռքերով ծածկեց յերեսը։

Իսկ հրաձգությունը հետզհետե մոտենում եր։ Բակում մի բանդիտ վիրավորվեց և ճշալով նստեց ձյան կուտի վրա։ Վիրավորներին դուրս ելին բերում և զնում սալլի վրա, մյուս սալլի մեջ լցում ելին հրացանների կուտար։ Զեկալի շենքի դունից դուրս վաղեցին յերկու սպա և մեկը, վոչ զինվորական, ակնոցով և հագին շատ լավ նոր մուշտակ, ձեռքին միքանի թղթապանակ թըղթերով լիքը, իսկ սպանների ձեռքերին նազաններ։ Նրանց համար բերին այն կառքը, վորով քիչ առաջ կլիմինը գնացել եր Սիմկովային դիմավորելու։ Ստալմախովը և կլիմինի մասին թվում եր, թե բոլորավին մոռացել ելին։ Հանկարծ քափ ու քրտինքի մեջ կորած ձիու վրա նստած, բակը մտավ Ռեպինը, նրա գեմքը գունատ եր, հուզված և չարացած։

— Քաշ տուր այստեղ գերիներին, — գոռաց նա, — վորտեղ են։

Գոռգոսոցով և հայնուանքներով դուրս քաշեցին կլիմինին և Ստալմախովին։ Ստալմախովը պաղ տաելությամբ նայում եր Ռեպինի մոխրագույն չար աչքերի խորքը և ուզում եր մի բանասել Բալց լսկեց գնդակի պալթյունը, և, անմտորեն թափահարելով ձեռքերն ու վոտքերը, ընկավ նրա մարմինը ձյան վրա։ Յերկրորդ պալթյունը — և յերկրորդ մարմինն եր թպոտում ձյան վրա, մեռնող առաջինի կողքին։ Բակը դատարկվեց։ Սայերի և կառքի յետեից քշեց ձին Ռեպինը։ Տասնհինգ րոպե անշարժ պառկած ելին բակի մեջտեղում յերկու մեռած մարմիններ, իսկ հրաձգությունն ավելի և ավելի մոտենում եր, և ահա սկսեց հեռանալ մի ալ ուղղությամբ, և գնդակներն սկսեցին ավելի սակավ թոշել դատարկ բակի ուղղությամբ։

Արեն արդեն կախվել եր կարմիր ամպերի վրա, ամեն ինչ կապույտ գույն եր ստանում... Բակը վագեց Գորնիին ատրձանակը ձեռքին։ Նրա յետեից յերեք հոգի — սև կիսամուշտակներով, կարմիր ժապավեններով սև փափախները գլխներին, նրանք սեղմել ելին հրացաններն ամուր մուգ դարչնագույն ձեռքերի մեջ։ Դրանք կոմունիստ — յերկաթուղարիններն ելին։ Նրանք վրա վագեցին նայելու ծածկերը։ Իսկ Գորնիին անմիջապես վագեց դեպի

ձյան վրա սեխն տվող մութ կուտերը, և տեսավ ծանոթ դեմք մեռած աչքեր, հանգիստ կիսաբաց շրթունքներ, վորոնցից թվում եր, թե ահա ուր վոր ե դուրս կթոչի սպիտակատամ ժպիտը, և զեմքը կջանելանա, թեև յերեսի գորշ կաշին ծածկված եր կնճիռների ցանցով։

Յեզ Գորնիինը, բարձրացնելով կլիմինի գլուխը, դրեց իր ձնկանը, կուցավ, և անթարթ նայում եր այդ անշարժ դեմքին։ Յեզ հանկարծ զգաց, վոր իր ելության խորքից, այնպիսի խորթից, վորի մասին ինքն անտեղակ եր, հանկարծ վեր և կենում քից, վորի մասին ինքն անտեղակ եր, հանկարծ վեր և կենում քից, վարձրանում ե բարձր, բարձր... Գորնիին անձայն հեծկլացը, բարձրանում ե բարձր, բարձր... Գորնիին անձայն լալիս եր չոր հեծեծանքով, և այնքան ծանր եր նրա համար, կարլալիս եր չոր հեծեծանքով, և այնքան ծանր եր նրա համար, կար ծածկած, հուզված սրտեր։

Գ Խ Ո Ւ Խ XII

Սև հալված հողը և վերջին ձան կապույտ կուտարը հյուսվում ելին իրար հետ մի քմահաճ, հեռու, հեռու տարածվող նկարով, և նրա բազմապիսի, ամեն անդամ նոր ձեւվորութերի հերթով փոփոխվելն այնուամենայնիվ միրթինակ եր:

Կարառովն աչալուրջ կերպով նայում եր, ուշագրությամբ ականջ եր դնում մթության մեջ և մի առանձին ձեռվ բռնել եր սահնձը, ստիպելով իր ծիուն զգուշությամբ և առանց աղմուկի քայլել:

Առաջից, լայն յերկու վերստանոց կիսաշրջանով, դատարկ հեղեղատներն, առուները և բլրակները բռնած, գնում ելին քաղաքի ուղղությամբ, մեկը մտուի յետելից, կարմիր զինվորների յերեք շղթա: Հրաման եր տրված չաղմկել: Բայց հողի իշլշոցը հաղարավոր վոտքերի տակ թվում եր կարառությին ինչպես մի բարձր թնդուն, վորը նման եր տափաստանի հեղեղի միորինակ ձղիալուն, և դաշտային զգայուն գաղանները, ազվեսները, նապստակները և դաշտային մկները շատ վերստերի վրա լսելով այլ ձանը, առանց աղմուկի փախչում ելին նրանից: Իսկ միքանի ժամ սրանից առաջ կարառովը նույն այս տեղերով, քշում եր փոքրիկ կայտառ ձին, արշավում եր քաղաքից գետի վահումը, վորտեղ գտնվում եր Զեկայի գումարակը:

Գնում եր կարծես թե միայն նրա համար, վոր ստուգի, թե ինչպես և ընթանում փայտ պատրաստելու զործը, կատարված և արդյոք նախազգուշական միջոցներ ձեռք առնելու առթիվ իր տված հեռախոսագիրը: Բայց մի անորոշ նախազգացում հեռացրել եր նրան քաղաքից և հրամայել վորքան հնարավոր և մոտինել գումարտակին, և նույն անորոշ նախազգացումն ել ստիպում եր նրան յերբեմն կանգնեցնել ձին և ականջ դնել յետել թողած քաղաքին:

Բայց յերեկոյան հանգող յերկնքի տակ ամեն բան հանգիստ եր, և առաջիկ նման յերկրի վրա թագավորում եր վաղ գարնան յերեկոյան հոտավետ, քաղցր, դով լուսթյունը: Յեվ ահա, յերբ բոլո-

րովին մթնեց, և արևի ալեկարմիր գուշնը լուծվեց մուգ կապույտ յերկնքի մեջ և փայլեցին առաջին յերկշու աստղերը, կարառությի դղայուն ականջը հանկարծ վորսաց քաղաքի կողմից մեկը մկուսի թափելոց յեկող հրացանի յերեք ձիգ:

Կարառությը կանգնեցրեց ձին: Անդորր և: Թոչելով, կռացագուավը: Յեվ նորից նա լեց հեռու-հեռու հրաձգություն, —անկարգությամբ իրար վրա թափած ձայների կույտը.

Նա խթանեց ձին, ամբողջ ուժով հարվածեց նրան մտրակով, և ձին վագեց արագ և համահավասար շորորով, շրջանցելով մթության մեջ անտեսանելի խոր փոսերն ու խանդակները:

Տեղ հասնելով, ստուգեց, կատարված և հեռախոսագիրը թե վոչ, և համոզվելով, վոր ամեն բան արված և, բացատրեց զումարտակի հրամանատար Սելեցկիցին ոպերացիաի բնույթը և տասնհինգ բոպեկից հետո, կարմիր զինվորների լուս շարքերի առաջ համառոտ պատմեց, թե բանն ինչութն և: Իսկ հետո, իբր դուրս յեկան դաշտը, նա հրամանատարի զինկոմ Դանիլովին, վորը լայն կարմիր զալիֆե և կաշվե տուժուրկա հազած մի պճասեր և գեղեցիկ մարդ եր, բացատրեց ապստամբության քաղաքական նշանակությունը, իսկ սա պատասխանում եր ուժեղ պարանոցի վրա թեթև գրված գեղեցիկ գլխի շարժումով: Մինչ հեղափոխությունը Դանիլովը հանքափոր եր, անզրագիտ եր, և մինչև հիմայի վատ եր կարգում, նույն իսկ «կոմունիզմի այբուբենարանը» մինչև վերջը չեր կարդացել բայց կարմիր զինվորները նրան սիրում ելին իր «պարզության» համար, վորը գուշակում ելին գեղեցիկ կարված զգեստի տակից, իսկ կարառությը բարյացակամ եր գեղի նա նրա զոշալության, պղնվության, ուղղամտության համար, և մեկ ել նրա համար, վոր յերբեմն նրա հետ միասին խմում եր:

Իսկ Սելեցկին այդ ժամանակ շարունակ գումարտակի միծացրից մցումն եր քշում ձին և կրկին ու կրկին ստուգում եր, արդյոք ամեն բան արված և, ինչպես պետք ե... կարծես ամեն բան արված և, շղթան ցըված և ձիշտ կերպով, գնդացրերը բենտրությունն են և աջ թեի վրա պարեկներ են ուղարկված, ձիավոր հետախույզներ՝ նույնպես:

Ամեն բան արված և, և շուտով Սելեցկին կրկին անդամ կընդհարվի թշնամու հետ, և կրկին անդամ մարդկալին կլանքերի վրա կլուծի այնքան ծանօթ և այնուամենայնիվ ամեն անդամ ըի վրա կլուծի այնքան ծանօթ և այնուամենայնիվ ամեն անդամ գամ ել ընդհարվել թշնամու հետ... Բանդիտների հետ...

Միենույն չե՞, թե ում հետ:

Միթե կրոն, ազգություն, դասակարգ, այդ բոլորը գուշափոր, վորակական նշաններ, առարկայական նշաններ չե՞ն, վորոնց միջոցով արտահայտվում ե ռազմական գործի մեծ խաղի վերացականությունը: Սիրելի մահառիթ խաղի, վորն ինչպես մի հարեցուցիչ գեղ և Սիրեցիի համար... Յեկ հիշեց նա, թե ինչպես լոթ տարի սրանից առաջ վասակիր Սիրեցին—զերմանացիների գեմ—հարձակման եր տանում իր վաշտը, և նրա մեջ վոգեռություն կար, և իրազում եր նա Ռուսաստանի համար հերոսի նման մեռնելու մասին: Իսկ հետո հիվանդություններից, կոնտուզիաներից, վերքերից առաջացած խրամանների անհույս թախիծը ցրեց այդ վոգեռությունը: Բայց դրա փոխարեն հասունացավ մի հիվանդագին հետաքրքրություն դեպի այդ մահառիթ խաղը, վորն ահա արդեն քանի տարի է, անընդհատ խաղում և ամբողջ մարդկությունը, դեպի ամենահին խաղը, դեպի ամենասիրելի յերեխայան խաղը... Յեկ այժմ գումարտակի հրամանաստար Սիրեցիի համար միենունն ե—զերմանացիներ լինեն, լիներ, չեխեր և կողակներ, սպիտակներ, բանդիտներ, միենունն ե... Դիմացը թշնամին ե, վորը նույնպես կցը շղթաները, կուզարկի հետախուզչներ, հրացանալին կրակ շաղ կտա, և ավինամարտերի բոցը զուրս կնետի: Իսկ տանջանքները, վերքերը և մահը, դրանք միայն հանրահաշվացին նշաններ են, վորոնք ցուց են տալիս կովող կողմերի քանակական փոփոխությունները:

Յեկ առավոտան ստացած հեռախոսագիրը Սիրեցիի համար կարծես ճիշտ մի թեթև սեղմումն եր լավ ջղացին ճիռ սանձի, նա իսկույն ամբողջովին հարմարվեց, բոլոր հրամանները կատարեց, և ամբողջ որն սպասում եր տագնապի և ամենին չզարմացավ կարառուզի գալու վրա:

Յեկ այժմ ամեն մի կես ժամը մի անգամ նա մոտենում և կարառուզին, կարճ զեկուցում և գործողության ընթացքի մասին, բացարում ե իր ինթարքությունները և հարցնում ե հարգանքով.

— Վորևէ հրաման չունի՞ք, ընկ. բրիգադի հրամանաստար:

Յեկ հետզետե կարառուզին ավելի քեզ կասկածամիտ և դառնում, և ինքն իրեն մտածում ե «եհ, ես մեկը չի դավաճանի»...

Վոչ, Սիրեցին չի դավաճանի. դավաճաննելը—խաղի կանոնների խախտումն ե: Մի անգամ վոր խաղի մեջ քեզ համար ահեղ ես ընտրել, կաց տեղումը: Այլ կերպ—խաղալն անհետաքրքիր ե:

Առաջին վաշտը գնաց ձախ թեկց:

Շարժվում եր մարդկանց մի սկ կույտ, բայց այդ կույտի մեջ, ստվերների այդ շարքի մեջ կար իր սիստեմը և ներքին կապը... Յուրաքանչյուրը ճանաչում եր իր հարեւանին, իր պետին, յուրաքանչյուրը լուս եր կամաց տրված հրամանը: Քաղղոկի Սպիցինը քայլում եր շարքի մեջ և հրացանն ամուր սեղմել եր ուսին:

Յերբեմն շնչալով նա իր մտքերը հայտնում եր իր հարեւան ֆիգելինին, վորը տափակ քթով, կարձահասակ մի տղա յեր, բաց կապտագույն և խելացի հայացքով:

Ֆիգելինն ամեն բան հիշում եր և ամեն բան հասկանում... Նրա ուղեղն ազահ եր գիտության վերաբերմամբ, ինչպես չոր ավազը ջրի: Յեկ Սպիցինը միշտ պարծենում եր իր աշակերտով, վորն այժմ արգեն Ռ. Կ. թեկնածու յեր: Բայց յերը մոտակա գյուղից Ֆիգելինի մոտ ելին գալիս հարազատները, հայրը, վորը, խորամանկ աշքերով և գորշ միրուքով մի հաստ գյուղացի յեր կամ լռակաց, տխուր, յեղբոր նման կապտաչյա քուրերը, և սկսվում ելին յերկար շշուկով խոսակցությունները զորանոցի վորեն մի անկունում,—մթագնում ու մոայլում եր այն ժամանակ Ֆիգելինը, փակվում եր ինքն իր մեջ և այլևս քաղզեկի հետ չեր խոսում... Իսկ սա սպասում եր և նախորոք գիտեր, կդա վայրկանը, տղայի լեզուն կրացվի, և նա, ամբողջապես կարմատակած, աշքերը փալիցնելով, և աջ ձեռքով միակերպ և ուժգին շարժումներ անելով, կսկսի խոսել անկանոն բաշխման մասին, շրջործկոմի վերցրած կաշառքների, միլիցիայի և պարշրջկոմի գեղծումների, գյուղական կլանքի ամբողջ ցավալի խառնութիւնության մասին:

Առանց ընդհատելու, Սպիցինը լուս ե, իսկ հետո սկսում է բացատրել և յերկար պատմում ե այն մասին, թե ինչպես գրժե հեղափոխությունը Ռուսաստանում, այն մասին, թե գյուղացիներն իրենք չեն կարողանում կովել զեղծումների դեմ, թե շատերը կպել են մեղանից և գիտակցաբար արգելք են լինում:

Յեկ ահա նրանց շուրջը հավաքվում են մի խումբ ուշադիր կարմիր զինվորներ, լուս են, ծխում, հարցեր տալիս... Յեկ քաղցեկն ամենքի համար ել պատասխաններ և գտնում, ի զուր չե, վոր ինքն ել գյուղից ե:

Անկետայի մեջ, սոցիալական ծագման մասին հարցման վերաբերմամբ Սպիցինը գրում ե—«գյուղական բնակիչ»: Նա գյուղական գերձակ ե և չի իմանում ինչպես անվանի իրեն, գյուղա-

ցի, թե բանվոր: Բարձրահասսակ, նեղ կրծքով, կորացած և ձագատ, դեմքը զունատ և ծաղկատար, քաղվածքը հավասար և թիւթեա, փոքրիկ աչքերը շարունակ նայում են ուղիղ և բաց:

Կարմիր զինվորները սիրում են նրա զրոյցները, միայն թե նրա ձայնը շատ խոպոտ է, շարունակ նրան ձայն են տալիս «բարձր», բայց Սպիցինը շատ բարձր խոսել չի կարող, և չգիտես ինչու միանգամից կորցնում է խոսքի թելը և սկսում է գործածել ոտար բառեր, վոր անհասկանալի լին կարմիր զինվորների համար, իսկ ինքն այդ բառերը բացատրում է իր ձեռվ, ուռիթ և մոտավոր Յել ահա այժմ շղթալի մեջ, կովի սպասելու այս հանդարս և ահավոր բողեներին, մերթ մեկը, մերթ մյուսը մոտենում եր, ծխախոտը կպցնում, սկսում խոսել, խնդրում եր ավելի մանրամասն պատճել:

— Ո՞ւմ վրա յենք դնում։ Յեկ ինչո՞ւ։

Յեվ, զգալով այս գյուղացիական հոգու շփոթմունքը, շփոթմունք այն պատճառով, վոր ահա... վիճակվում և գնալ յուրալինների վրա... գյուղացիների վրա... ոռւսների վրա... յեղացրների վրա... Սպիցինը զգուշ, բայց հատու և սուր խոսքերով խոսում ե ապատամբությունների մասին և հիշեցնում է Դենիկիննի, Յուղենիչի, Կոլչակի մասին... Յեվ նորից գնում են շղթաները մութդաշտով, յերկինքը կապուտ և և վոչ աստղաշատ, և յուրաքանչյուր վերստից ավելի և ավելի բարձր և լսվում քաղաքի կողմից հեռու և պարզ հրաձգությունը: Գնում եին այնքան, մինչև վոր մեկ մարդուց մյուսը, մեկը ջոկից մյուս ջոկը, մեկ դասակից մյուս դասակը, մեկ վաշտից մյուս վաշտը հրաման սլացալ:

— Կանդ մո... Հավասարի՛ր շղթան դեպի աջ:

Դիմացը յերկում ելին քաղաքի սակավաթիվ լուսերը, կողքից վոչ պարզ սպիտակին եր տալիս գետը, Յեվ Կարառուլովի ձին, վոր տանում եր նիրհած Կարառուլովին իր մեջքի վրա, — շը թալից կես վերստ յետ նույնպես կանգ առավ, — նրա սանձից բռնեց կողքից գնացող գումարտակի զինկոմը, զգուշութիւնը կանգնեղը, վոր ծերուկը մի փոքր ննջա:

Բայց կարառութիւն զգալունը են ցնցեց սահմանը, արթնացավ, և կանգնելով ասպանդակների վրա, սուր հայացքով նայեց դեպի առաջ և լարված ուշադրությամբ ականջ զրեց... Միանգամից ժանակիո տեսու քառարի լուսերոր, գետակը, ձորը...

— Հետախուզվածքները վերադարձան։ Նրանք լիղել են քաղաքի ծայրում և տեսել են — դեպի մեր կողմն և գալիս բանդիտների մի մեծ խումբ... Ավելի լավ ե մենք նրանց այստեղ սպասենք։ Այս-տեղ դիրքը հարմար ե։

— Ալդակես ե, ալդակես, — ասում եր Կարապուլովը:

— Հըսաձգութիունը կալարանի կողմիցն և, — շարունակեց գումարտակի հրամանատարը, — կնշանակի մերոնցից անտեղ կան: Յես կապի համար մարդիկ ուղարկեցի այնտեղ: Բայց առավեմ դեռ վոչ վոչք չի վերադարձել:

— Ուզիղ ե, ընկեր գումարտակի հրամանատար, — ասաց կարալուռվը: — Դու, Դանիլով, կաց ալստեղ, իսկ մենք մի նայենք զիրքերը:

Բայց դեռ մի քանի քայլ ել չելիքն հնոացել վոր գիւացը
նկատեցին մի ձիավորի արագ կերպով մեծացող ուրբանկար և
ձիու խոռվ զոփուռն:

— կրկին հետախուզ՝ և, —ասաց գումարտակի հրանտ-նատարբ:

իրաք մոտեցան յերեք ձիավոր։ Կարմիր զինվորները, յետ նայելով, տեսան ֆանտաստիկ, բազմագլուխ, կենդանի մի կուտակ... Հանկարծ յերեք գլուխներ անհայտացան, տեսանելի մնացին միայն ձիերի ուրվականկարները, ձիավորներն արագ իջան ձիերից։

— Պառկիր, — լսվեց շղթալի մեջ, — ի մարտ:

Յեկ հրամանը դեռ չեր հասել ձախ թեին, աջ թեում—տըկ, տըկ, տըկ... թիվկթիվկացրեց զնզացիրը, և մեկը մյուսի լեռնեից, իրարից առաջ անցնելով, թռան թեթև ձիգերը:

Գրեթե կարիք չեղավ, վոր Կարառուլովը խառնվեր ռազմական գործողության լնթացքին: Նա գլխի շարժումով հավանություն եր տալիս գումարտակի հրամանատարի բոլոր կարգադրություններին, վրա հասնող առավոտվա նվազ լրւսի մեջ կարառություն եր նրա չսափրած, շեկ մազերով ծածկված էրեւը, ամուր սպած շրթունքները, և ավելի ուշագիր եր դառնում գեալի նա, ավելի սիրալիր եր նրա ձայնի ճնշունքը: Սելեցկիի մեջ կարգադրությունը դադարեցրեց Կարառուլովը, արգելեց քաղաքի ծարքի տնակներին գնդացրով խփել:

— Բայց չե փոր ախտեղից կրակում են, — հարցը եց դարմացած Սելիցին:

— Մինուքս ե, չի կարելի... Բնակիչներին կարող եք վաս-
սել, — պատասխանեց Կարառուվը:

Առաջին վաշտը դանդաղ, տեղից տեղ վազելով, առաջա-
նում եր դեպի քաղաք: Տեղը բաց եր և ցած, շատ ձյուն եր
մնացել վորը զինվորների ծանր քայլերի տակ փափկացել և
խոր եր գնում: Նշանոցի համար ձան կուտերի վրա գտնվող
գորշ կերպարանքները հարմար եին:

Առաջանում եին դանդաղ և շատերն սպանվեցին ու վի-
րավորվեցին, և յեր Սպիցինն առավոտան կապույտ մառախու-
զի մեջ, բլրակի վրա ցանկապատերի և առակների մոտ նշմարեց
թշնամիների հետու շղթան, յերկնքի ծալրն արդեն պայծառ—
վարդագույն եր դարձել և արեն ուր վոր և պիտի դուրս գար
կոհակածե, հեռու հորիզոնից: Սպիցինն այժմ վոչ մի բանի մա-
սին չեր մտածում: Փամփուշտակալը կապելով մեջքին այնպես,
վոր պահունակները հարմար և շուտ դուրս հանվեն, նա արագ
նշան եր բռնում, հրահանը բաց եր թողնում, հրացանը մոտիկ
վորոտում եր և ինչպես մի կենդանի ելակ ցնցվում եր ամուր
ձեռքերի մեջ: Ապա կռանալով, տնքոցով վաղում եր գեղի հե-
տեւալ բլրակը, նորից ընկնում եր ծնկան վրա, արագ նշան եր
բռնում, և նորից հրացանը վորոտում եր: Ֆիդեինի ձախ ուսը
թեթև վիրավորեցին, բայց վոսկը չեր կապեց և նա մնաց շարքի
մեջ: Սպիցինը լուռ կապեց նրա վերքը, և նորից նրանք իրար
կողքի տեղից տեղ եին ցատկում և սպիտակ ծուխ ու անտե-
սանելի սարսափելի գնդակներ եին հղում դեպի ծայրամասի
տնակների ու ցանկապատերի կողմը:

Խաղաղ ժամանակ Դանիիլովը պատերազմի և կոփմաների մա-
սին չեր ել մտածում, ապրում եր իր բավականության համար,
հանդես եր գալիս միտինգներում, գնում եր Քաղրածին Մար-
տինովի հետ կովելու, հակառակ չեր խմելու ու սիրուն աղջկա
հետ ժամանակ անցկացնելու: Բայց ահա յեկավ պատերազմը,
ներս առավ Դանիլովին, բայց վոչ վորպես պատերազմական
գործողությունների գեկալար ինչպես Սելեցին եր, այլ վորպես
սոսկական մարտիկ: Մարտի մեջ նա միշտ գնում եր առաջին
շղթալում, և կարմիր զինվորներն հեռվից տեսնում եին կոմի-
սարի փայլուն կաշլե բաճկոնը և կարմիր գալիքին:

Այժմ ել նույնպես մի քանի անդամ նա առաջարկեց կա-
րառույթին և Սելեցիին—մի վաշտ տվեք, սվինամարտի գնամ...
Գումարտակի հրամանատարը շվարած ուսերը վեր քաշեց շուռ
յեկավ, կարառույթը կարճ, բայց խիստ հայնուց նրան:

Այն ժամանակ Դանիիլովը նեղացավ և գնաց առաջին վաշ-

տը՝ փնտուելու իր բարեկամ Սպիցինին, վորին հարգում եր իր
վիտակից լինելու համար, թեև յիրբեմն և ծաղրում եր, և իր վի-
րավորանքը նրան պատմելու: Գնում եր շղթայի լիտեից, յիրբեմն
ցանկապատերի մոտ ջոկում եր թշնամու փոքրիկ մի սև կերպա-
րանք և կրակում նազանը: Սիրալիր և առուց բարեկեց կարմիր
զինվորներին և, մոտենալով առաջին վաշտի թեին, արդեն նկա-
տեց Սպիցինի կոր մեջքը, ուղում նրան ձախ տալ, յեր հան-
կարծ ծայրամասի մոտիկ տների կողմը նայելով, տեսավ արագ
մոտեցող մի սև բիծ: Սուր հայացքով դիտեց, տեղումը կանգ
առավ: Մի քանի գնդակ սուլեց անցավ նրա գլխի վրայով: Իսկ
նա զեռ դիտում եր և հանկարծ բարձր կանչեց:

— Ընկերներ, կին և վազում այս կողմը: Զգուշ կրակիք:

Այդ կնոջն արդեն բոլորը նկատել եին: Մազերը քամին
ծածանում եր, յերբեմն վայր եր գլորվում, սուր ճիչ եր արձակում
և նորից վազում: Նրան հետամտելով, թշնամու շղթայի կողմից
նրա վրա գնդակներ եին տեղում: Յեկ հանկարծ ֆիդեինի զիլ,
ջահել ձայնը բարձր գոռաց, և շղթայի վրայով հեռու տարածվե-
ցին նրա խօսքերը.

— Տղերք, այս մեր վարժուհին ե: Այս ընկեր Գրաչեան և:
Մլուսները ձայնակցեցին:

— Նա յե, նա ինքն ե, վոր կա:

Դանիլովը նազանը ձեռքին գուրս վազեց առաջ:

— Ընկերներ, զե, ապա ապատենք մեր վարժուհուն: Հայ-
դե, նրան ընդառաջենք: Առաջ:

— Պառկեք, ընկեր Գրաչեա: Պառկեք ձան վրա.— գոռաց
ֆիդեինը: Լիզան սկզբում չեր հասկանում, թե այս մարդիկ ինչ
են ասում: Բայց հետո նա տեսավ. շղթան հետզհետե ավելի
մոտ վազեց, և վերջապես, վախն այլևս նրան չեր խանգարում
ձանաշելու ծանոթ դեմքերը:

Ահա նրանք ամենքը, սիրելի, հարազատ, ավելի քան հա-
րազատ: Նրանք, վորոնց նա գալոցում սովորեցնում եր բազմա-
պատկման աղյուսակը, բայց այժմ, զինված սարսափելի հրացան-
սերով, նրանք լիզային թվում են իրեն զորեղ պատժիչ մի ուժ—
հաղթանակող ճշմարտության ուժ: Լիզան վեր ընկավ ձան մեջ:

— Ինչպես ընկաք այստեղ:— լսեց նա մի խիստ ձախն, և,
բարձրացնելով գլուխը, տեսավ վերեւում հազիվ կապտին տվող
մուալ յերկինքը, վոչ պայծառ կարմիր արեց, նրա կողքին ել բլուր-
ների վրա նստած և զորշ անակների զանգվածը, լսեց հրա-
ների վրա նստած հարմանակ գալիքին:

ձգության բազմապիսի ձայները և նրանց հետ գնդացը միուրինակ թխկթխկոցը: Իսկ ուղիղ իր դիմացը—սև հողի և սպիտակ ձյան փոնի վրա, գորշ, կարծես անարյուն մի դեմք, փոչոտ ունքեր, կնճռոտ այտեր, նոսր միրուք—ճանաչեց բրիգադի զինկոմ կարառութին, բայց չվախեցավ նրանից, ինչպես առաջ, այլ լալով սկսեց պատմել իր այս գիշերվա ապրումները:

Կարառութիւնը առանց հարձուփորձի, լսեց նրա անկապ պատմությունը մահվան մասին, Սիմկովայի դիակի մասին, վորը հիմա յել դեռևս ընկած է այնտեղ... գորշ ցանկապատի տակ,—և կարառութիւնը դեմքն անշարժ եր, միայն այսի վրա ցնցվում եր մի մկան: Յեկ յերք գումարտակի հրամանատարն ընդհատեց կարճ զեկուցումով, վոր կապը կայարանի հետ հաստատված ե, վոր այնտեղ ընկ: Գորնիիը կոմունիտական վաշտի 50 յերկաթուղարինների հետ դեռ ևս զիմանում ե,—կարառութիւնը պատասխանի փոխարեն ընդհատ ընդհատ հրաման տվեց:

Դանիինվ, սվինամարտի գնան: Այժմ թուլատրում եմ: Խորտակի՞ր, եղ շան վորդիններին: Սկսել ձախ թեից: Սելեցիի: Խիմիր գնդացըով փողոցներին... գերիններ չվերցնել... իսկ առայժմ, առաջ:

ԳՈՒԻԽ XIII

Դաշտերի գորշ-մանուշակագույն հեռուների վրայով, քաղաքի մոխրագույն տանիքներին կպչելով, կամաց և ցած լողում եին ամպերի ծանր, թաց, հանդարտ կույտերը: Նրանք մանր անձրև եին մաղում, վորն անվստահ եր, վախկոտ, բայց ուրախ, ինչպես սիրո առաջին շոյանքը, ինչպես պատանու դողդոջ հապւմը կանացի մերկ մարմնին: Լեռները չեն յերեսում—անձրևի մշուշապատ ցանցը ծածկել ե նրանց, և ամպերի ցած վարագույրի տակ աշխարհը փոքր ե և նեղ, իսկ ողը գաղջ և խոնավությամբ հագեցած, կարծես ջրի մասրիկ կաթիլների փալլատ թաղանթով ջերմոցի ապակյա շրջանակի տակ մշուշապատված:

Դանդաղ, ծուզ և քմահաճորեն ուղղությունը փոխող քամին քշում և դաշտերից դեպի քաղաք հին կյանքի քայլայման և նորի սաղմնավորման արբեցուցիչ բուրմունքը, իսկ քաղաքից գեպի դաշտերը—աղմուկ, թխկթխկոց, սուլոց և զանգահարություն: Այս եւ այն ել կոնստանտին Պետրովիչն ըմբռնում ե իր ամբողջ ելությամբ: Նա կանգնած է ավազոտ բլրակի վրա, —այնտեղ խրվել ե գետնի մեջ մի մենավոր, հողմահար քար, —նայում ե տների և ցանկապատերի կուտին, յեկեղեցիների խմբին, և տաղտկալի դարձած, իր մանրամասնություններով ծանոթանդրը քաղաքի պատկերը թվում ե նրան յերազական, հինավորոց խունացած վարագույրի վրա գունատ թելերով ասեղնագործած:

Ուժեղ և հանդուզն մեկը կոպիտ կերպով ընդմիշտ կպատոի այդ վարագույրը, և նրա տակ յերեան կզան նոր, կոնստանտին Պետրովիչի համար ոտար, թշնամի և անհասկանալի գեղեցկությամբ փալլով կյանքի բազմերանդ գույները: Կյանքը, ինչպես հնաղարյան վիշապ, տանջանքների և չարչարաքների մեջ մի անդամել փոխում ե կաշին, դեռ ե քցում հինը, գույնը քցածը, կնճռոտվածը, և նրա տակ յերեան են գալիս նոր կյանքի չտեսնված նկարի պայծառ բծերը: Այդ պայծառ բծերը չե՞ն արդիոք, վոր ալժմ անձրևի շղարշի միջով թափանցում են գորշ պատկերի վրա

և լերեւմ իրրե կրկեսի շենքի գլխի կարմիր զբոշակ և հրապառակի դեղատան կարմիր ցուցանակ:

Իսկ Կոնստանտին Պետրովիչը հիշում և ոռւս մարդկանց անցյալ կյանքը, վոր ընթացել և այդ փոթորկալից մշուշապատ դաշտերի Փոնի վրայով, խղճուկ քաղաքներում, աննկատելի անթիվ գուղերում, կյանք, որ, նկարագրել են Պուշկինը, Տուրգենևը, Չեխովը... և այլ հարյուրավոր ոռւս զրոյներ, վորոնք արտասվել են այդ հավիտան անցած գնացած կյանքի վրա, այնքան ձշտորեն պատկերավորել են այն, և ընդ միշտ հմայել Կոնստանտին Պետրովիչին տխուր զեղեցկությամբ: Յերկու տասնյակ տարի նա գրականություն և դասավանդել քաղաքի յերկու գիմնազիայում, յերկու տասնյակ տարի շարունակ նա նորից կարդացել և իր փոքրիկ առանձնասենյակի յերկու պահարանն զբաղեցնող զեղեցիկ կազմով գրքերը: Հեղափոխության ընթացքում այդ գրքերի շարքերը սաստիկ նոսրացել են, մասի, ձավարի, ալյուրի և ձվի հետ և փոխանակում նրանց Մարգարիտա Սեմյոնովսան, մի տարիքավոր կին, վոր և ամուսին և աղախին և նրա համար:

Ի՞նչ արած, ապրել պետք ե... Նա «սկզբունքով» չգնաց խորհրդավին դպրոց աշխատելու, վոչ մի արհեստ չի իմանում, իսկ մթերած պաշարը և ինայած դրամը շուտով կերպեց: Շաբթեշաբաթ, ամսե ամիս, տարեց տարի, ամրող հեղափոխության ընթացքում նա ապրեց այն հուսով, վոր ահա ուր վոր և կընկնի հայրենիքի վրա բայլշեկների ունեցած արյունալի, ատելի և անհասկանալի իշխանությունը և հին, իսկական կյանքը կերպառնա: Հոկտեմբերյան սուաջին իսկ ահավոր պայթյուններից սկսած նա ատեց բայլշեկներին, վորոնք բոլորովին ոտար ելին նրա համար, վորոնք կարծես թե անցյալ կյանքում գոյություն չեն ունեցել, վորոնց գործողությունները, վարմունքը և խոսքերը նրա համար անհասկանալի և լիքն ելին հակասություններով, բայլշեկները թվում ելին նրան և գյաղալաբար բիրտ, և զրահետ միատեղ սատանալաբար խորամանկ, և կեղծավոր յեղիտներ ու միաժամանակ նեղ անողոք գոկտրինչորներ: Նա չեր կարողանում սառնասրտությամբ տեսնել խորհրդավին ցուցանակները և տնից գրեթե բոլորովին գուրս չեր գալիս, նույնիսկ ցերեկը չեր բանում լուսամուտների բոլոր փեղկերը, բոլորովին անպետքացավ, վեր դիպավ, սկսեց սամազոնկա խմել, կծծիաբար կովում եր Մարգարիտա Սեմյոնովսավի հետ և ամրող որերով կամ պատ-

յանս եր բաց անում, կամ թավալում եր գահավորակի վրա և կրկին ու կրկին կարդում իր նոսրացող գրադարանը:

Չեխո-Սլովակիան հեղաշրջումը վոչնչացրեց կյանքի հին կարգերի վերադարձի մասին նրա ունեցած հույսը: Ժամանակին նա շնտ եր տեսիլ տիրող բուրժուազիայի չարաշահությունները, գողություններն ու կաշառակերությունը, սպիտակ սպաների գողություններն և անմիտ խստությունը: Սպիտակին ներկայական նա խղճում և ատում եր, վերաբերվում եր գեպի սպիտակին այն զգացմունքով, ինչ զգացմունքով հայրը կվերաբերվի գեպի իր հարբեցող և փուչ, իր նրա վրա գրած հույսը չարգարացնող վորդին: Մարդկանց կյանքը յերկրի վրա սկսեց նրան թվալ անհեղեղ, մարդաբաց ցնորքների մեջ եր ընկնում, թե ամբողջ մարդկությունը պիտի կործանվի:

Բայց ահա անգթորեն ունիսոնջ բայլշեկներն իրենց շուրջ-կալով վորսացին ամբողջ քաղաքը և ինչպիս խլուրդի, հողի տակալով վորսացին գույս քցեցին յերկրի յերես, թարմ ող, կակի ախորդելի բնից դուրս քցեցին յերկրի յերես, թարմ ող, կապույտ յերկների տակ: Խոր զիշերով նրանք տուն մտան, արթնապույտ յերկների տակ: Խոր զիշերով նրանք տուն մտան, արթնապույտ յերկների տակ: Խոր զիշերով նրանք հագնվել և հալտացրին, նայեցին վկայաթղթերը, հրամայեցին հագնվել և հալտարեցին նրան մորթիլացիայի յենթարկված՝ վառելափակտ պատրաստելու համար:

Յեկ աղաղակում, ասում եր նա այդ հանգիստ, ատելի և անհասկանելի մարդկանց, թե ինքը գործ չունի վառելափակտ պատրաստելու հետ, նա—մտավոր աշխատանքի մարդ ե, պատապատաստելու հետ, նա—մտավոր աշխատանքի մարդ ե, պատապատաստելու հետ, նեկության դաստիարակիչ..., իսկ Մարգարիտա Սեմյոնովսան, նեկության դաստիարակիչ..., իսկ գիշերավին հագուստով, աղաշում եր պառավ և ծիծաղելի իր գիշերավին հագուստով, աղաշում եր նրանց հանգիստ թղղնել նրան, ձեռք չտալ և լալիս եր մանրիկ կոխում մսով և կաղամբով կարկանդակներ:

Կարմիր զինվորները, նայելով խաչակնքով գուղացիներին, հոնքերը կիտում են, իսկ հետո մեկը, ամենից յերիտասարդը, ծաղրանքով ասում ե, «Լավ, շատ աղոթք արեք, գնանք... Իսկ ծաղրանքով, պարոն, նույնպիս... յետ մի ընկնի», գարձավ նա կոնստանդուտին Պետրովիչին: Մայլերը կամաց շարժվում են, և Կոնստանտին Պետրովիչը տեսնում ե, թե ինչպիս լայն հրապարակով քաղաքի Պետրովիչը տեսնում ե, թե ինչպիս լայն հրապարակով գնում բայլերից դեպի կրկեսն են հավաքվում մարդիկ, գնում խմբերով և մեկ մեկ յերիտասարդներ և ծերունիներ, տղան խմբերով և մեկ մեկ յերիտասարդներ և ծերունիներ, տղան Պետրովիչը դեպի կանալը: Տարբեր են նրանց գեղքերը, ժպիտները, մարդիկ և կանալը: Տարբեր են նրանց գեղքերը, ժպիտները, քալվածքը, բայց և ամենքի մեջ մի ընդհանուր նման բան կա,

կարծես նրանց լուսավորում ե միենույն հեռու, դեռ ևս պաղ առավոտան արեւը: Յեվ Կոնստանտին Պետրովիչը գլխի լեռ ընկնում, վոր այս կոմունիստներն են հավաքվուն ընդհանուր ժողովի:

Ապստամբությունից հետո այս առաջին կուսակցական ժողովն ե, և կոմունիստների համար յեկեղեցական դանդահարությունը հնչում ե, ինչպես թշնամու փողերի ձայն, ինչպես հանդուզն հիշեցում, թե կոխվը չի վերջացել, վոր թշնամին յետ և նահանջել, բայց չի խորապելված. լուրաքանչուր վոք լուռմ ե այդ ձայնը, հոնքերը կիտում, բայց հետո հիշում ե, վոր հաղթությունը տարած ե, վոր ապստամբությունն այնուամենայնիվ ճնշված ե, և խնդակցում ե ընկերներին: Իսկ Լիգա Գրաչեան նույնպես յերկշոտ մոտենում ե կրկեսի մուտքին և չի վստահանում մտնել: Իդուր Լիգան ամրոխի մեջ ծանոթներ ե փնտում: Կարծես, թե նրանց բոլորին՝ ապստամբության ժամանակ սպանել են, բայց ահա, կարգին շինելով, վուկեփայլ կոճակներով, կրծքին կոմունիստական աստղ, ինքը ընկ. Մատուսենկոն, Քաղցրածնի քարտուղարը, հանում ե գրանից իր կուսակցական մաքուր տոմսը և ցուց ե տալիս շրջկոմի յերիտասարդ և մոայլ քարտուղարին, վոր նստած ե կրկեսի մուտքի մոտ և ցուցակագրում ե հավաքվածներին...

— Ընկ. Մատուսենկո, ընկ. Մատուսենկո .. Դուք գոնե կենդանի յեք, ընկ. Մատուսենկո... Զեզ գոնե չեն սպանել...

Իսկ ընկ. Մատուսենկոն ինքնազո՞ն ժպառում ե:

— Ի՞նձ ինչու պիտի սպանեն: Յես փոքր ձարդ եմ, անշան, հարևաններիս մեջ թշնամիներ չունեմ: Յես ու կինս հրաձգություն ել չենք լսել, վոշինչ... Հանգիստ քնած ենք յեղել մեր մահճականների վրա, հը, հը: Գիշերը կինս արթնացել ե և ասում. «Իլլուշա, կարծես կրակում են. .»: Հերիք ե, Գրուշա, ասում եմ, քնի, եղ քեզ թվացել ե, հը, հը: Իսկ առավոտը, լսում եմ, ձիշտ վոր կրակում են: Յես տանն սպասեցի, հենց վոր հրաձգությունը դաղարեց, գնացի ծառայության: Քաղցրածնում, բացի ինձնից, վոչ վոք չկար, բայց յես իմ պարտականությունների մեջ թերանալ չեմ կարող...

— Ի՞նչ պիտի անես հիմա, ընկ. Մատուսենկո, ընկ. Սիմեկիսն և ընկ. Մարտինովն սպանված են.. Մատուսենկոյի գեմքը վիշտ ե ցավ ե արտահայտում:—Վորբացա յես, լուրովին վորբաց... Ահա քեզ, ժողովրդական տպիտություն և վայրենություն... Իսկ դուք ի՞նչ ե, մի՞թե մեր կուսակցության մեջ եք ուղում գրվել.—

Հովանավորող տոնով հարցնում ե նա Լիգային,—մեզ մոտ ժողովի յեք յեկել: Յեվ, լսելով շաբաթ յերեկոյան ժամերգությանը հրավիրող զանգահարությունը, Լիգան մտածում ե այն մասին, վորինքն այսոր յեկեղեցի չի գնացել պատարագի, այլ յեկել ե կուսակցական ժողովի... Յեվ ընդհանրապես... Նա յեկեղեցի չի գնա... Նույն իսկ... զատկին, վորովհետեւ... աստված չկա:

Բայց նրան արդեն դատարկ փողոցներով տանում ելին կոմվաշտը, այնտեղ տոթ, ծխախոտի ծխով լիքը սենյակում, նույնպիսի բողոքող, հայնողող և բարկացած բնակիչների շրջանում նա մի անքուն գիշեր անց կացրեց, և մնացածների հետ միասին, ուրախ և ծաղրասեր կարմիր գինվորների ուղեկցությամբ ուղարկվեց վանքի անտառը, և այնտեղ նրան վառելափայտ սղոցելու, ճղելու և զարսելու գործի դրին: Յեվ կոնստանտին Պետրովիչը բոցավավում եր բարկությունից գեափի այդ ոտար, անողոք ուժը, գեափի բայլշենիկները տածած ատելության խոսքեր եր փոխանակում նա դժբախտության ընկերների հետ վանքի հինավորց կամարակապ միջանցքներում, խցերում և սեղանատներում, ուր նրանց ոթեան ելին տվել:

Իսկ հետո, թեև շատ դանդաղ և աննկատելի, բայց այնուամենայնիվ գարնան հմայքն սկսեց մտնել նրա հոգու մեջ, և մի տեսակնոր հիացմունքով լուսավորվեցին նրա համար այն որերը, վոր նա անց եր կացրել թարմ ողում, կանաչ լուսկաց սոճիների տակ անսովոր, բայց վոչ ծանր և թարմացնող աշխատանքի մեջ: Այնքան նման չելին այդ որերը վերջին տարիների մոայլ-սենյակի կանքին, և նրա հոգում առաջացնում ելին նրանք ապրումներ, վոր թվում եր թե ընդմիշտ թաղված և մոռացված ելին...

Չե վոր վաղուց, վաղ պատանեկության որերին լուրաքանչյուր գարնան նա սպասում եր սրտատրով... Յեվ արդեն փետըրվարի անփայլ-փափուկ որերին նա դուրս եր գալիս տնից, կանգնում, նայում եր հանդարտ կախարդական աշխարհին, ձյանը, վորը թվում եր նրան ավելի սպիտակ, քան յերկինքը, լուսկաց, ծածկամիտ և հրձանքով մի ինչ վոր բանի սպասող ծառերին, և ինքն ել ինչ վոր մի բանի սպասում եր, և հանկարծ զգում իրեն, իր առաջ, յերիտասարդ, ուժեղ մարմինը, բացի վերակ հագուստից, և իր խորը չարտահայտված մտքերը, բացի վերեկ բառերից: Յեվ այս վայրկացնաներին կար միայն մի սրտատրով և քաղցրակալություն:

Իսկ այժմ գարունը տարվա մյուս յեղանակներից նա զանա-

զանում եր միայն նրանով, վոր տան մեջ նավթալինի հոս եր գալիս և փեղկերը հանվում ելին, և մեկ ել ճրագը բավական ուշ ելին վառում... Սենյակի առորյա կյանքը, կահկարտափներով սարքած քառանկյունի տարածությունների մեջ, փակում եր նրա առաջ ամեն բան: Յեկ միայն այս որերին, վոր անց եր կացնում սոնու անտառի մեջ, ուր գարունը վոտք եր դնում անվտան, արահետները դեռ լիքն ելին ջրով և կապտականաչ ձյունով, և միայն հալված ձյուներն ելին ցուց տալիս անցյալ տարվա խոսի չորացած փնջերը, փշատերեների կուտերը, մեկ ել դանդաղ ու քնկոտ կյանքով ապրող արթնացող մրջունանոցը, այս լերեկոներին, յեր նա հոգնած վերադառնում եր աշխատանքից և հայցքով վորում եր ամպերի մեջ հալչող արմի կարմիր հետքը, այս տարորինակ ժամանակին նա նորից զգաց գարունը, նա սկսեց ուրախանալ և ցավել, վորովհետև նրա կյանքն արդեն անցել եր, անցել եր հիմար և անմիտ կերտով, խսկ գարունն առաջ վա նման ուրախ եր և պայծառ:

Վերադառնալով աշխատանքից կապուտ իրիկնամուտի կախարդական ժամերին, քնելուց առաջ, կոնստանտին Պետրովիչը թափառում եր մութ վանքում, բարձրանում եր լերկրորդ հարկը, ուր տեղափրված ելին կարմիր զինվորները, լսում եր նրանց խոսակցությունը և ծիծաղը, մի անգամ նույն իսկ հանդիպեց քաղցիկ Սպիրինի շուրջը հավաքված մի խմբակի, և կարմիր զինվորների հետ միասին կոնստանտին Պետրովիչն ուշադրությամբ ականջ դրեց լերորդ ինտերնացիոնալի մասին տեղի ունեցած քաղաքական զրուցին: Կարմիր զինվորների մեջ նա լերին նկատում եր կոմունիստների, և նրանցից մի քանիսի հետ անվտան կերպով խոսակցության եր բռնվում:

Ապստամբության որը, փայտի պաշարը պատրաստելու համար մորիկիզացիակի լենթարկված քնակիչների մեջ անորոշ լուրեր ելին պտտում. իսկ լերը լերեկուան նրանց բոլորին, նախապես համրելով, փակցին մի մեծ, մութ սենյակի մեջ և բակից նրանց ականջին հասալ թմբուկի տագնապալի դռոցը, այն ժամանակ գալուցին ու վախը, ուրախությունն ու տագնապը լցրին սենյակը հանչերով, կանչերով և թշնամական գոռգոռոցի թնդունակը: Բայց ահա ինքը կարառուվը լերկու հարգալից լուս մարդու ուղեկցությամբ ներս մտավ, և հանդարտած ամբոխի վրա քցեց ելեքտրական փոքրիկ լապտերի ճառագալթը, նրա նվազ լուսի տակ հայտնաբերեց այդ բոլոր ծեր և լերիտասարդ, զեղե-

յիկ և տգեղ, խելացի և հիմար դեմքերի վրա—չարախնդություն, հույս և լերկուող, հասկացավ և վոչ բարձր, բայց ամենքի համար լսելի ձախով դիմելով վանքի պաշտպանության համար մի դասակի հետ թողնված լերորդ վաշտի հրամանատար, սեռվիկ, վայելչատես, քիչ սղիկ, հարգանքով ձիգ կանգնած ժուրբինին, սասաց.

— Մի բան լինի թե չե... ձեռաց... հասկացա՞ր:

— Այն, ընկ. կոմիսար,—պատասխանեց ժուրբինը, հանդուկն մպտաց, ծռեց աչքերը կարառուվի վրա, ծռեց աչքերը բնակիչների անձան ամբոխի վրա, և ինչպես մի դժոխքի սատանա թվաց նրանց հրեղեն գորեղ մարմուկ, ծխոտված գեմքով, դաժան գեղեցիկ աչքերի ծռու հայացքով և կարմիր զինվորի սազավարտի սատանայական լեղջուրով:

Այս խավար տագնապալի գիշերը միծ, տոթ սենյակում վոչ վոք չքննեց. շնչում, շնչում, շնչում ելին, չարախնդությամբ մեկ-մեկ թվում ելին կոմունիստների անունները, հիշելով նրանց սիսակները, և հույս ելին դնում, հույս ելին դնում, հույս ելին դնում:

Կոնստանտին Պետրովիչն ել նույնպես քնած չեր, ծածկված եր շինելով, պառկած եր նեղ և կոշտ նստարանի վրա, մի կողքից մյուսն եր շուռ գալիս և ամեն բան մտքով անցկացրեց: Նապատամբության հաջողությանը չեր հավատում և չեր համակրում, հիշում եր չեխոսալովական խոսվությունը և կոլչակի շարժումը: Կոմունիստները նրան ստար ելին մնացել, և նա չեր հավատում է կոմունիստները նրան ստար ելին մնացել, և նա չեր հավատում է կոմունիստների վրա և ինչի համար վոր անձնազությամբ մեռնում ելին: Բայց լեթե ժողովուրդը, բանվորները, կարմիր զինվորները—այդ զինվորական շինելներով գլուղական լերիտասարդները—այսքան տարի հպատակվում են նրանց, ինտերնացիոնալի այդ քարոզիչներին, կիսով չափ վոչ ուռւներից կազմված այդ հեղափոխական աղանդին, ապա, նշանակում ե, վոր մի կենսական ճշմարտություն կա նրանցում: Թերևս, լեթե նա փորձած լիներ աշխատել բայլշիկների հետ, գուցե գտած կլիներ այդ ճշմարտությունը, բայց նա պառկում եր գահավորակի վրա, կարդում եր գեղեցիկ կազմով գրքերը և ուռւնում այդ գրքերը, անցկացրած կանքի համար քելեխ սարքում:

Եեկ հենց վոր մի վաշտ վանք վերադարձավ, և հայտնվեց, վոր ապստամբությունը ճնշված ե, կոնստանտին Պետրովիչը ժուր-

բինից մի որով քաղաք գնալու թուլտվություն խնդրեց վորպեսզի մաշված վունամանները փոխի, և ի գեպ, ինքն իրեն վորոշեց, անցնի կուսբաժին հարցնելու, գուցե իր համար վորեն աշխատանք կդառնվի, և մեկ ել ուղում եր նոր աչքերով նայել այդ ատելի դարձած քաղաքին, վոր նրա ամբողջ կյանքն եր կերել, տեսնել չսիրած, բայց սովորական դարձած Մարզարիտա Սեմյոնովսալին, վորից ավելի մոտ համենայն գեպս նա աշխար հում վոչ փոք չունի: Յեվ ահա առավոտվանից, այս փոշու նման մանր անձրկի տակ, քաղաք վառելափայտ կրող համբաքայ սայշերի կողքից գնում և կոնստանտին Պետրովիչը, լսում ե գյուղացիների և սայլերին ուղեկցող կարմիր զինվորների խոսակցությունները ցանքի մասին, այն մասին, վոր վարի ժամանակն ե, իսկ անհավատ կոմունիստներն ստիպում են ճանապարհների այս վատ ժամանակ փայտ կրել, վոր ցանքի համար սերմացու չկա, վոր խարերա-կոմունիստները խոստացել ելին ցորնի փոխարին ապրանք տալ բայց վոչ մեխ, վոչ յերկաթ, վոչ աման-չաման և վոչ ել չիթ ուղարկեցին գյուղը, այլ ոսլալած ոձիքներ, պուդրա և շրթունքի պոմադ...

— Թյու, անհավատներ,—ասում ե գյուղացին...

— Եղ վորեե մեկը դիտմամբ մեր գործը խանգարում ե, — պատասխանում ե շփոթմունքից կարմրած մի կարմիր զինվոր, — այդ մասին անպատճառ ուետք ե հայտնել Զեկային...

— Զեկան չի ոգնի: Եստեղ ել, ենտեղ ել կոմունիստներ են: Նրանք իրար պահում են:

Իսկ մի ուրիշ կարմիր զինվոր գյուղացիների մի խմբի բացարում ե.

— Ես փայտը, վոր դուք կրում եք—յերկաթուղու համար ե, իսկ յերկաթուղով սերմացու կրերենք... Ցանելու համար, իհարկե: Ես բոլորը մեղ Սպիցինն ե պատմել, քաղղեկը, լավ ընկեր ե... Լրագրից ել եր կարդում...

— Իսկ ով վոր հիմա խոռվություն ե սարքում, ով վոր խանգարում ե մեղ մեր անտեսությունը կարգի քցել, նա մեր թշնամին ե, — ասում ե նա ծանր ատելությամբ: — Հարազատ յեղբորս ել չելի խնայի, թե վոր նա բանդիտ դառնար:

— Վոչ մի բան չեմ իմանում, — վշտոտ ասում ե ամենքից հասակվոր, սպիտակած միրուքով և խունացած աչքերով մի գյուղացի, — միայն թե հոգիս վկայում ե, վոր սովից բոլորս ել կոտորվելու յենք, յեթե յերկնալին թաղուհին չոգնի, — և, բլրակի

վրայից նայելով քաղաքի յեկեղեցիների վոսկեղոծ խաչերին, լսելով յեկեղեցու թուլ զանգահարությունը, նա մորթե փափախը հանում է ձաղատ գլխից, յերեսը խաչակնքում, իսկ նրա յետեկց սկսում են խաչակնքել ուրիշներն ել: Յեվ կոնստանտին Պետրովիչը, ժողովրդական լուսավորության մինիստրության հին շինելը հազին, սափրած, այժմ ծեր և կնձուտ, իսկ յերբեմն գեղեցիկ յերեսով, նույնպես փոքրիկ խաչ և անում և ալս հասարակ, տգետ գյուղացիներին, մոխրագույն քաղաքին, դաշտերի գորշ—մանիշակագույն հեռուներին, այս մառախլապատ որին, և սիրուլալիս ե կյանքի այս հանդարտ հավետ չքացող կառուցվածքի համար, լալիս ե ալս աղիողորմ ձանգահարությանը համաչափ, վորը վհատ կախ քցած թեերով, թոշում ե քաղաքի վրայով, այս աննկատելի հասարակ ժամին, յերբ պղտոր-սպիտակ բծի նման արել հեռացել ե կեսորից և գորշ մանիշակագույն հեռու դաշտերի վրա քցում ե ծիածանի գունատ կամարը...

Յեվ զբաղված ալս նոր մտքերով, ցրված պատասխանում ե նա Մատուռսենկոյին.

— Ըսկ. Կարառուլովի մոտ գործ ունեմ... Յես պայմանավորվել եմ նրան այստեղ հանդիպել:

Իսկ Կարառուլովը ձիով մոտեցավ կրկեսի շենքին, թեթև վայրցատկեց ձիու վրայից, ձին կապեց, իսկ ինքն առանց հեռանալու, նայում եր ճանապարհին և հեռվում տեսնում եր սայլերի սև շարքը: Մեկը ծանը ձեռքը դրեց նրա ուսին, և, նա յետ նայելով, տեսավ լայներես, հանգիստ Գորնիսին, հոգնածության թեթև արտահայտությունն աչքերին, ամուր սղմած շրթունքներով:

— Բերժում են.— կարճ հարցրեց Գորնիսը, ցուց տալով ճանապարհը...

— Եերում են.— նույնպես պատասխանեց Կարառուլովը: Յեվ յերկուսն ել լոեցին: Յերկուսն ել հիշեցին քսանությներին, վոր այժմ պարկած են զագաղներում, կարմիր զրոշների տակ, Արտակարգ Հանձնաժողովի բակում և սպասում են հանդիսավոր թաղման:

— Խեղճ տղաներ,— ընդհատումներով ասաց Կարառուլովը: — Իզուր տեղը կորան: Իսկ յես ու գու իրավացի ելինք: Չեր կարելի գումարտակը քաղաքից դուրս մանել:

Գորնիսինը քիչ լոեց... Մտածեց և ասաց, — այնպես եր խոսում, կարծես ամուր պատի վրա ծանը, ուղիղ քարեր եր շարում.

— Վոչ. Կարառուլով, մենք յերկուսս ել սխալվում ելինք:

Տեսնում ես, այ, վառելափալով բերում են: Դու միայն մտածիր,—ավելացրեց նա, իր համար հազվագեպ վոգեռությամբ,—այս փայտը մեզ հացահատիկ կտա: Չե վոր զուղացիական ապլստամբության համար հացահատիկը նույնն է, ինչ վոր ջուրը հըրդեհի համար: Ընկերներն իզուր չմեռան... Այ, իս հիմա քննություն եմ կատարում և տեսնում եմ, վոր ապստամբությունն անխուսափելի էր... Յեվ Գորնիխն սկսեց կարձ պատմել քննության հետեանքների մասին:

Յերեկ առավոտ գրավեցին քաղաքը, յերեկ միայն փողոցներում թնգում ելին հրացանի ձայները, իսկ այժմ բլրակից յերեվացող բոլոր տնակներն այնպիսի հանգիստ ու խաղաղ տեսք ունեն: Բայց Գորնիխը զիտե: յերեկվա բոցը նրանք հանգցրել են: Գիտե, վախենում ե նոր ժայթքումից և կանխում ե այն: Այս վախն ստիպեց նրան զսպել կլիմովի դիակի վրա իրեն ցնցող հեծեծանքը, հեծեծանք, վոր հետեանք եր համարյա մի շարաթվա քնի բացակայության և սարսափելի ջղային լարվածության, և անմիջապիս ձեռնարկել քննության ղեկավարությանը, և թեև պաշտոնով նա կենդանի մնացած չեկիստներից ավազը չեր, բայց Զեկայի ամբողջ աշխատանքի ղեկավարությունն ինչպես յեղավ՝ ինքն իրեն մնաց նրա ձեռքին:

Քաղաքից շատ բանդիտներ չեցին հեռացել: Կոմունիստական վաշտի գրավման ժամանակ մի կարմրահեր վիրավոր զերի յեր ընկել, և Գորնիխը նրան զեմ առ զեմ կանգնեցրեց ուրիշ բանդիտների հետ, հարեան զուղերի զուղացիների հետ, վոր քաղաքում բռնված ելին և այժմ խոնարհ, յերկոտ և զլիիկոր, կարծես լրջանալուց հետո, և հեշտությամբ պարզեց նրա ապլստամբության պարագլուխներից մեկը լինելը: Յեվ Գորնիխը, վոր նախորդը արդեն նշանակել եր նրան գնդակահարելու որն ու ժամը, այժմ նրան ներումն եր խոստանում, սպառնում եր, խընդրում եր և չեր հոգնում հարցաքննության հազար ու մի խորամանկ ձեեր գործադրելուց: Իսկ կարմրահերին յերբեմն թվում եր, թե ինքն ընկել ե մի ուշադիր-հանգիստ սատանալի ձեռք, կամ թե, ավելի ճիշտ, մի անխիղմ մեքենալի ատամների տակ, ամերիկական այն ճարտարամիտ և ճիշտ մեքենաներից մեկի, վորոնք կենդանի ճղճան խոզին տաս լոպեկում յերշիկի անխոս սար են դաբճում:

Յեթե Գորնիխն ինքը չեր հարցաքննում, ապա շրջում եր քննիչների առանձնասահնակները, առանց խառնվելու, հետեւում

եր քննությանը, կարգում եր ցուցմունքների արձանագրությունները, իսկ յերբեմն ել անցնում եր իր առանձնասահնակը, և յերկար մենակ, փոչոտ վլուխը ձեռքերին հնանած, նստում, և թվում եր, թե առանց վորեե մտածմունքի նայում ե սեղանի վրա առաջը դրած թղթի թերթին, յերբեմն զգուշ և ժամ կերպով նշանակում ե մի բառը, մյուսը, և ապստամբության ընթացքը նրա համար ավելի և ավելի յեր պարզվում, և ուժմ նա հինգ խոսքով պատմում եր կարառություն քննության բազմաժամանակական համապատասխան մասին:

— Այ, տեսնում ես, այստեղ մի աղջիկ ե կանգնած... Դա մի ուսուցչունի յի, ապստամբության պատճառով խիստ շատ տանջանքներ ե կրել, և կարող ե վորեե ցուցմունք տալ Ռոբերտի սպանության մասին: Յես նրան ասել եմ, վոր գա ժողովին քեզ հանդիպելու: Այ, տեսնում ես, մուտքի մոտ կանգնած ե... Ընկ. Գրաչևա, յեկե՞ք այստեղ:

Յեվ Գորնիխը նկատեց աղջկա գունատ դեմքը, բաց շագանակույն մագերի ճակատին և այտերին ընկած յերկար ուղիղ փնջերը, կապույտ վախեցած աչքերը և խեց գողղողացող ձայնը:

— Ուզում եմ ցուցմունք տալ... ընկեր Ռոբերտի սպանության առթիվ... Յես ականատես եմ յեղել Յես նրա հետ մի բնակարանում ելի ապրում և ահա...—Նա սկսեց պատմել Ռոբերի զալու մասին, վորն այնքան գեղեցիկ, սիրալիր և նենգամիտ եր, պարոնայք Սենատորների մասին, իր նրանց հետ ունեցած հարաբերությունների մասին, ապստամբության գիշերը քաղաքի մեջ իր կատարած թափառությունների մասին, յերբեմն տարվում եր անակետք մանրամասնություններով, և այն ժամանակ Գորնիխը փափուկ և վստահ կերպով հարցեր եր տալիս և նրա պատմությունն ուղղում եր զեպի իրեն համար անհրաժեշտ կողմել: Սկզբում հուզմունքը խանգարում եր նրան խոսելու, նրա խոսակցությունն անկապ եր, իսկ հետո հետզհետե ավելի վոգեռվից, հետըզհետե նրա ձայնն ավելի համոզեցուցիչ դարձավ, և նա սկսեց նույնիսկ անվատահորեն շարժել ձեռքերը: Իսկ յերբ պատմում եր Ռոբերտի սպանության մասին, նրա աչքերն արտասուզով լցվեցին:

— Լսիր, Գորնիխ,—ասաց կարառուվը, յերբ նա լիզայի մոտից հեռացավ,—նոր յես նայում ելի քեզ և զարմանում ելի: Ինչքան գործնական մարդ ես դու: Այ, որինակ, ինչքան լավ և

հանգիստ դու հարցաքննեցիր այդ որիորդին: Իսկ հետո... Դու արդյոք գիտե՞ս, յեթե քո հիսուն լերդաթուղարինները չլինելին, կայարանը վերցրած կլինելին, և այն ժամանակ... վաս կլիներ: Այն ժամանակ յես իմ գումարտակով վոչ մի ոգնություն չելի կարող ցուց տալ: Ապատամբության լիկվիդացիան մի ամիս կը քաշեր: Այդ փաստ եւ: Յեկ ինչքան ընկերներ ելի կզոհվելին...

Ապա Կարառուլովը դողլոջուն ձախով ասաց:

— Այ, հիմա դու ձիու նման աշխատում ես, ամեն տեղ հասնում ես, և Չեկայում, և վասելափայտ պատրաստելուն ես հետեւմ, և նույնիսկ լրագրի համար հոդված ես տվել... իսկ յես. վոչ մի բան չեմ կարողանում: Հենց վոր ես որիորդից լսեցի, վոր Ռորեկոյին սպասնել են, ել աչքիս բան չերեաց, զաղան կորեցի, և իմ ձեռովը բանդիտների գլուխներն եիի կարում: Իսկ հետո յել իմացա, վոր Չիմանն ել, Ստամբախովն ել, Կլիմինն ել... Այսր ամբողջ քաղաքացիական կովի ընթացքում յես ու կլիմինը միասին ենք լեղել... Յեկ այժմ ահա յես վոչինչ չեմ կարողանում անել: Քաղաքն ինձ համար ուղղակի դատարկվել եւ: Հայցոլիք ծերուկիս, բայց հիշեր, վոր քեզանից յերեսուն տարով մեծ եմ... Յերեկ ել դարդից մի լավ խմեցի: Գլխավորն այն ե, վոր լուրջ ժամանակս արցունք չի գալիս աչքերիս: Իսկ այ, լակուն ես թե չե, կարծես մեկը հոգիդ բաց ե անում, զունում ես: Հետո խղճմտանքդ քեզ տանջում ե, բայց են ժամանակ լավ ե լինում: Ապասիր, դու յել կփորձես, և կհիշես ծերուկ կարառուլովին... Այս:

Զանգը դռաց, շարքերը հանգարտվեցին, և ահա մրցարանի մեջտեղից, կապ ընկնելով և կարմրելով, քաղլոջումի քարտուղարն առաջարկեց նախագահ ընտրել... Ծանր, տարակուսանքի մի խուլ ազմուկ գլորվելով անցավ շարքերի վրայով: Ում ընտրեն, յերբ ամենից լավերը, ամենից տոկուններն ու կարողները պառկած են կարմիր գրոշակներով ծածկված դագաղների մեջ: Մեկը կլիմինի ազգանունը, մեկը անվոտան Սիմկովալի անունը տվեց... Բայց քարտուղարն այդ ազգանունները չգրեց:

— Բնկ, կարառուլովին.— Հնչեց Մատուսենկովի բարակ քաղցրավուն ձախը: Բայց կարառուլովը հրաժարվեց... Նա նախագահություն անել չի իմանում: Զե՞ վոր այդ մասին ընկերները գիտեն: Բացի զրանից՝ ալսոր նա հիվանդ ե...

Յեկ հանկարծ մի տեղից, վերեից, զալորկալից, մի ուժեղ ձախն աղաղակեց.

— Գորնիխը... ընկ Գորնիխը...

Յեկ անմիջապես իբրև պատասխան, պաշտպանեցին նրան զանազան կողմերից.

— Ճիշտ ե..., Գորնիխին... ընկեր Գորնիխին...

— Եղ գոր Գորնիխին ե.— հարցրին մի քանիսը բարձրաձայն:

Յեկ նորից գալորկալից նույն ուժեղ ձախն աղաղակեց ամբողջ կրկեսովը մեկ.

— Գորնիխը... չեկիստը... վորը յեկավ մեզ մոտ դեպո, բոլորիս վոտքի հանեց և մեզ ղեկավարում եր: Քաջ տղա յե:

Կյանքումն առաջին անգամն եր պատահում Գորնիխին այդպիսի մեծ ժողովի նախագահություն անել... Գորնիխը մի քիչ շփոթվեց, չեր իմանում, ինչ անի, իսկ ժողովը վարժեցրած գիշատիչ զաղանի նման, հնազանդ փովել եր նրա վոտքերի մոտ, հանդարտվել և իր բազմացաւ հայացքը սկսենալ եր նրա վրա, իր տիրոջ վրա: Յեկ «ժողովը հայտարարում եմ բացված» ընդհանուր զարձվածքի ու որակարգը հայտարարելու փոխարեն, նրա լեզվից զուրս դռնչացին այլ խոսքեր, ծանր և սուր, վորոնք մտնում եին լազնիրի գիտակցության մեջ, ինչպես մեխը մուրճի ծանր հարվածների տակ մտնում ե փայտի մեջ, խոսքեր, վոր Գորնիխի զորեղ միտքն ու կամքը ձուլել և գարբնել եր այս ճակատագրական շարաթվա ընթացքում:

Իսկ նա խոսում եր այն մասին, թե ինչքան մեծ եր լեղել անցկացած ապստամբության վտանգը, այն մասին, թե կոմունիստները քայլում են բարակ սառուցի վրայով, վորի տակ ալեկոծվում և կատաղի, զուղացիական տարերքը, պատրաստ խեղդելու և վոչնչացնելու կոմունիստների աշխատանքը, այն մասին, թե այդ տարերքը պետք են հապատակեցնել վոչ միայն սիրով և վնդակով, այլ և մթերքի սոցիալիստական փոխանակություն կազմակերպելով քաղաքի և զուովի միջև:

— Ըսկերներ, մեր գործն այժմ ավելի ծանր կլիմի... Գործկոմում մնացել են իննը, իսկ կուսկոմում չորս աշխատավորներ: Քաղցրամնի յերկու պետերն ել չկան, իսկ Չեկալի նախագահը, փոխանորդը և յերեք աշխատակիցները: Կենտրոնը մեզ չի ոգնի, նրա վրա հույս գնելն ավելորդ ե: Իսկ աշխատանքն այժմ ավելի բարցացել ե: Հացահատիկ բերելը քիչ, ե: Պետք ե սկսել պատրաստվել ցանքի պալքարի համար, և անցկացնել այն մեր ճանապարհներից զուրկ ամբողջ շրջանի մեջ: Իսկ բանդիտները ղեկանապես լիկվիդացիալից չեն յենթարկված: Բանից դուրս և զալիս, վոր մենք ավելի ևս պիտի ծանրաբեռնենք մեզ: Վերցնենք

թեկուղ որինակի համար, ինձ այ, յես այժմ նախագահում եմ:
Այդ նըանից ե, վոր մեզ հետ չեն վոչ կլիմինը, վոչ Ռոբերտոն,
վոչ Սիմկովան, վորոնք այս պարտականությունն ավելի լավ կը-
կատարեիին... Այսպես կլինի ամեն տեղ, սպանվածների աշխա-
տանքը կընկնի մեր ուսերի վրա: Ծանր կլինի, բայց յեթե մենք
հիշենք նըանց որինակը, ապա մենք աշխատանքը գլուխ կտա-
նենք...

Յեվ յերբ յերգվեց «Խնտերնացիոնալը» և ժողովը անցավ
գործնական խնդիրներին, Գորնիխը կառավարեց այն հանդիսա-
վատահ և աչալուրջ կերպով, ինչպես ծանր բարձած բեռնակիր
նավի դեկավարը վոլորապույտ ծանծաղ գետի վրա:



ԳԻՒՅ 70 ԿՈՊ.



ՀՀ Ազգային գրադարան

NL0311585

11549